ՀԱՐԱՑԻ

1985

Դ

ԷՋՄԻԱԾԻՆ

1985

Դ

ԽԲ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ԿՈՉԻՎ

1985

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶԸ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ (7 Ապրիլ 1985 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:
«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Մեր սուրբ Եկեղեցին վերստին բերում է մեկ բոլորիս աւետիսը հրաշափառ Յարութեան մեր Փրկչի Յիսուս Քրիստոսի: Այս մեծ աւետիսով է բացւում գարունը աշխարհի, այս մեծ աւետիսով գարուն է իջնում մեր հոգիներին: Նոր կեանքի սոսափիւն բնութեան մէջ, նոր կեանքի լուսաբաց մարդկային հոգեկան աշխարհում:

«Փառք Յարութեան քո, Տէր»:

Քրիստոսի Յարութիւնը պատմական գերբնական մի իրողութիւն է, աւանդւած մեկ սուրբ Աւետարանով: Գերբնական մի եղելութիւն, որ եկաւ յեղաշրջելու մարդկութեան պատմութիւնը և նոր իմաստ ու նոր ընթացք տալու նրան: Գերբնական եղելութիւն, որ վերանորոգեց մարդկանց հոգիները, նոր շնորհներով լցրեց նրանց և մարդկութեան առջև բացեց նոր ճանապարհ՝ բարոյական բարձր ըմբռնումների և ստեղծագործ կեանքի: Վերջին երկու հազար տարիների ընթացքում քրիստոնէութեան մտածումի թռիչքով, զգացումի ջերմութեամբ և տեսիլքների ու որոնումների խոյանքով յորինուած բոլոր հրաշա-

լիքները, պատմում են Քրիստոսի Յարութեան փառքի մասին: Յարութեան հրաշքը դարեր շարունակ դարձել է հոգեկան սնունդ և մարդկային կեանքի ոգեբարոյական պայման: Հաւատքը Քրիստոսի Յարութեան՝ հոգեկան վիճակն է ոգեկանութեամբ ու բարոյականով լուսաւորուած մարդկանց: Մանաւանդ այս իմաստով է, որ յայտնւում է մեկ ճշմարտութիւնը մեծ առաքեալի խօսքի. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր» (Ա Կորնթ. ԺԵ 14):

Այսօր, Քրիստոսի Յարութեան աւետիսը մեկ համար նուիրական հրաւէր է՝ հաստատ մնալու մեր նախնեաց հաւատքի վէմի վրայ և հաւատարիմ՝ աւետարանական բարոյականին: Հայ ժողովուրդը բպլմադարեայ իր գոյատևումը պարտական է ամէն բանից առաջ իր կանոնական հաւատքին: Նա կարողացաւ տոկալ, յաղթահարել ժամանակների բոլոր արհաւիրքները և ամէն նահատակութիւնից յետոյ վերածնուել, որովհետև ճշմարտապէս հաւատաց, թէ Քրիստոս «մահուամբ կմահ կոխեաց» և «յարեաւ ի մեռելոց»: Հայոց պատմութեան ճանապարհը տևապէս տառապանքի ու խաչելութեան ճանապարհ է եղել, որի ընթացքում մեր ժողովուրդը, բպլում անգամներ, իր մահով յաղթել է մահին և մեռելներից յարութիւն առել: Մենք ինչպէ՞ս չհաւատանք Քրիստոսի Յարութեան, երբ պատմական վաւերական ապացոյցը ունենք մեր ժողովրդի վերածննդի, մեր ժողովրդի յարութեան: Քրիստոսի Յարութեան յոյսով մենք պիտի շարունակենք հաւատալ հայ ժողովրդի կեանքի մշտանորոգ ուժերին և նրա յաւերժութեանը: Յիսուս այսօր էլ ասում է մեզ՝ «Ես կենդանի եմ, և դուք կենդանի լինելոց էք» (Յովհ. ԺԴ 20):

Քրիստոսի Յարութիւնը մեր յոյսն է, մեր վրահն է, մեր յաղթութիւնն է, մեր ուրախութիւնն է:

Այս ճշմարտութիւնը, մանաւանդ այս տարի մի անգամ ևս բացայայտւում է մեր գիտակցութեան հորիզոնի վրայ, երբ մի քանի օրեր յետոյ, 24 Ապրիլին, պիտի ոգեկոչենք սուրբ յիշատակը 1915-ի Մեծ Եղեռնի մեր նահատակների: Այդ սև թուականից եօթն անգամ տասը տարիներ յետոյ մեր ժողովուրդը իր նոր կեանքով, իր իրաւ վերածննդով մի անգամ ևս հաստատում է «մահուամբ մահը» յաղթելու հրաշքը:

Այո, կենդանի է այսօր հայ ազգը, եռանդով լեցուն ու ստեղծարար տենչով գոտեպինդ ի Մայր Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որ վերանորոգուած ուժերով և ներշնչանքներով, քայլ առ քայլ ընթանում է դէպի բարձունքները նոր նուաճումների, նոր իրագործումների:

Քրիստոսի Յարութեան աւետիսը հրաւէր է նաև ուղղուած բոլոր մարդկանց և աշխարհի բոլոր ժողովուրդներին, որպէսզի նրանք ապրեն խաղաղ ու համերաշխ: Վասնզի Քրիստոս երկնառաք Իշխանն է սիրոյ և խաղաղութեան գաղափարի: Մանաւանդ Յարութեան աւետիսով, մարդկային աշխարհում հզօր ու պայծառ է հնչում հաշտութեան ու եղբայրութեան պատգամը, հորիզոնից հորիզոն:

Խաղաղութիւն աշխարհաց ու եղբայրութիւն ժողովրդոց. ահա հրամայական պատգամը մեր ժամանակների, երբ աշխարհակործան պատերազմի նոր ուրուականը խռովում է կեանքը և խիղճը համայն մարդկութեան: Մենք, Պօղոս առաքեալի խօսքը պիտի վերծանէինք, ասելով. «Եթէ յարուցեալ Քրիստոսի սիրոյ և խաղաղութեան պատգամը պիտի չկարողանանք կենսագործել աշխարհի վրայ, ընդունայն է մեր հաւատքը, ընդունայն է մեր քարոզութիւնը»:

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնի կատարներից, այս խոհերով ու այս իղձերով, ցնծութեամբ աւետում ենք հրաշափառ Յարութիւնը մեր Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի, համայն հայ հաւատացեալ ժողովրդին, որ ի Հայաստան և

որ ի սփիւռս աշխարհի, աղօթելով, որ սուրբ Յարութեան շնորհները առատապէս բաշխուեն մեր եկեղեցիներին, մեր բոլոր վաւակներին, որպէսզի նրանք շարունակեն իրենց առաքելութիւնը աշխարհի վրայ, մեր ազգի մեծ լուսաւորիչների անմար ջահը բարձր բռնած իրենց ձեռքերում:

Սիրելի հաւատացեալ վաւակներ Մեր, դուք, որ հաւաքուած էք այս սուրբ Տաճարում և դուք, որ Մեզ լսում էք հեռուներից, լուսաշող Սուրբ Էջմիածնից և վերածնուած Մայր Հայրենիքից շնորհաւորում ենք ձեզ բոլորիդ սուրբ Յարութեան աւետիսով և հայրական սիրով աղօթում ենք բոլորիդ կեանքի բարօրութեան ու խաղաղութեան համար:

Մանաւանդ դուք, հեռաւոր պանդուխտ վաւակներ Մեր, Սուրբ Զատկի շնորհներով անսասան ու կենդանի պահեցէք ձեր հաւատքն ու ձեր հայկական հոգին, ձեր աչքերը միշտ յառած դէպի վերաշինուած Հայաստան աշխարհ, մայր երկիրը ձեր և դէպի լուսոյ խորան Ս. Էջմիածին, քրիստոսաշէն Մայր Աթոռը Ամենայն Հայոց:

«Այսուհետև եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11—12) և «Ընդ հաշտութեան Աստուծոյ միմեանց արկցուք գիրկս սիրով և միաբան գոչեսցուք՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց» (Շարական): Ամէն:

Քույր Եկեղեցիներ

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի Հունաց Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ).

Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔԷԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք,
Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ Դ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին
Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոսիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն
ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՌ ԽՈՐԵՅՇԻՆ (Կերկե),
Մարսելի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել);
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ՖՐԱՆՑ ՔՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ
Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՍՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ
ԱԼԲԵՐ ԴԵԿՈՒՐՏԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերապանցություն ՅԱՆԻՍ ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերապանցություն ԷԴԳԱՐ ՀԱՐՔԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ,
Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար
դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿԱՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտին (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),

Միածնաէջ սուրբ Տաճարից ուրախ ենք Ձեզ բերելու մեծ ավետիսը Քրիստոսի Հարության, որով Աստուծո Որդին խափանեց մեղքը և հաղթեց մահվան՝ ցույց տալով մարդկության ճանապարհը հավերժական կյանքի:

Հրաշքի այս ժամին, Ձեզ ենք հղում Մեր հարգալից սիրո ողջույնը և աղոթում, որ Սուրբ Հարության շնորհներով զորացած ու քաջառողջ՝ շարունակեք Ձեր սուրբ առաքելությունը ի փառս Քրիստոսի Եկեղեցու և ի խաղաղություն աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի՝ ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Միածնաէջ սուրբ տաճարից ուրախ ենք Ձեզ բերելու մեծ ավետիսը Քրիստոսի Հարության, որով Աստուծո Որդին խափանեց մեղքը և հաղթեց մահվան՝ ցույց տալով մարդկության ճանապարհը հավերժական կյանքի: Հրաշքի այս ժամին Մեր մաղթանքն է, որ մեր Եկեղեցու կավակները իրենց սրտերը լայն բացած՝ արժանի դառնան Սուրբ Հարության շնորհներին: Մեր հայրական սիրո ողջույնը և օրհնությունը տիրախնամ թեմիդ հոգևոր դասին, թեմական և համայնքային վարչությանց հարգարժան անդամներին ու համայն Մեր հավատացյալ կավակներին:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* *

Փրկչի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են ամենաջերմ և հարգալից զգացմունքներով վեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ Հայ Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց վանական կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՈԳԵԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՐԱՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄԱՄԼՈՅՆ, ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ոյք վարէին արտասուօք,
ցնծութեամբ հնձեսցեն»
(Սաղմ. 125—5)

Այն սև օրերից եօթանասուն տարիներ յետոյ, Հայաստանեայց Եկեղեցին ու ժողովուրդը համայն, կանգնած են վերստին անմոռաց յիշատակի առաջ երկու միլիոն իրենց նահատակուած զաւակների, որոնք զոհ գնացին Օսմանեան կայսրութեան կառավարութեան կազմակերպած ցեղասպանութեան 1915 թուին: Մի ամբողջ ժողովուրդ տեղահան արուեց իր պատմական երկրի՝ Արևմտեան Հայաստանի տարածքից ու ծրագրուած ձևով բնաջնջուեց մահուան ճանապարհների վրայ: Աւերակների վերածուեցին ու հրկիզուեցին բազմահարիւր հայաբնակ քաղաքներ և գիւղեր, վանքեր ու եկեղեցիներ, շատերը կոթողներ հայ դասական ճարտարապետութեան, կառուցուած վերջին հազար և հինգ հարիւր տարիների ընթացքում:

Այսօր արդի Հայաստանում թէ սփիւռքում, համարեա չկայ մի հայ մարդ որ չողբայ մարտիրոսութիւնը մի մերձաւորի:

Այսօր մեր սգաւոր ժողովրդի զաւակները, բոլորը անխտիր, սիրտ սրտի տուած իրենց աղօթքն են երկինք առաքում, իրենց նահատակուած հայրերի,

քոյրերի ու եղբայրների հոգիների խաղաղութեան համար և համազգային ոգեշնչումով ողջունում են իրար ու մխիթարում, տեսիլքովը արդարութեան արշալոյսի, գիտակցութեամբը պայծառ՝ սուրբ պահելու նրանց յիշատակը և հաւատարիմ մնալու նրանց ուխտին, նրանց երազանքին՝ հայ ազգը համայն մէկտեղուած ու հայոց երկիրը ամբողջացած տեսնելու:

Մեր քրիստոսանուէր ազգը մօտ երկու հազար տարի է ահա որ հաւատում է Աւետարանի ճշմարտութեանը, թէ՝ «Երանի է նրանց ովքեր քաղցած են և ծարաւի արդարութեան» և թէ՝ «Սգաւորները պիտի մխիթարուեն» (Մատթ. Ե 4, 6):

Յիրաւի հայոց պատմութիւնը մի դիւցազներգութիւն է վասն Յիսուսի և վասն արդարութեան: Այդ հաւատքը լուսաւորեց մեր ազգի հոգին ու մեր պատմութիւնը, Սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսեալ, բայց մանաւանդ հինգերորդ դարի Աւարայրի ճակատամարտից: Անցնող տասնհինգ դարերը վկայում են՝ թէ սրբազան մարտը վասն հաւատոյ և վասն հայրենեաց ազատութեան արիաբար շարունակուեց տարբեր պայմաններում, տարբեր գաղափարական տարաներով, տարբեր դրօշներով, բայց միշտ ի խնդիր քրիստոսաւանդ նոյն արդարութեան յաղթանակի, միշտ ի խնդիր նոյն յաւերժական Հայաստանի:

Մեր ազգի պատմութիւնը մի կենդանի յուշարձան է աշխարհի հորիզոնի վրայ բարձրացող, մարմին ու կեանք առած նահատակների արիւնով, բարուն և գեղեցիկին ծառայելու ստեղծարար հանճարով, սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կրքով: Եւ այդպէս ահա Նա բացել է դռները իր հոգու ուժերի, դռները յաւիտենական կեանքի:

Այսօր, Մայր Հայրենիքում թէ սփիւռքում բնակուող բոլոր հայերը, առաւել համերաշխած ու եղբայրացած, Աստուծոյ և պատմութեան առջև բերելու են իրենց նուիրական վկայութիւնը, թէ նաև մեր օրերին և գալիք ժամանակներում, շարունակելու են այդ սրբազան մարտը անմար հաւատքով ու անեղեր վճռականութեամբ, առանց կորցնելու իրատեսութեան զգացումը, առանց անհաւասարակշիռ արարքների և մանաւանդ առանց մոլորուելու ու հեռանալու մեր ոտքի տակ գտնուող հայրենի հողի հրամայականից, որ միակ գրաւականն է մեր ազգային գոյատևման և մեր արդար իղձերի ապագայ կենսագործման: Մեր օրերի վերաշինուած ու ծաղկող մայր երկիրը սուրբգրական Արարատի փէշերին, 1915-ին նահատակուած մեր ժողովրդի յիշատակը յաւերժացնող վեհագոյն յուշարձանն է և անշէջ յոյսի փարոսը արդարութեան լրումի: Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով և հայոց հայրենիքի վերածննդեան տեսիլքով:

Այսօր, այդ սև օրերից եօթանասուն տարիներ յետոյ, մեր Եկեղեցին իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և հայրենաբնակ մօտ երեք ու կէս միլիոն ժողովրդով, իրենց մայր հողի վրայ կանգնած ապահով ու ինքնավստահ կերտում են Ամենայն Հայոց առաւել լուսաւոր ապագան՝ իրենց հայեացքը յառած դրախտի դուռ Արարատին և սպասում են ժամանակների ճամբին արթուն աչքով ու լաւատես: Եւ պիտի սպասեն նրանք ու նրանց զաւակները, եթէ հարկ լինի ևս եօթանասուն տարի՝ նոյն ուխտով, նոյն երազանքով:

Հայեր բոլոր հորիզոններից, այսօր Ապրիլի 24-ին, այս ուխտով, այս տեսիլքով, ձեր հոգու հայեացքը սևեռեցէք դէպի Ծիծեռնակաբերդ ու դէպի Արարատ:

Այսու Մեր կոնդակով Մեր հայրական հրաւէրն ենք ուղղում բոլոր հայ եկեղեցիներին ու հոգևոր դասին, որ Ապրիլի 24-ին, համազգային միասնութեամբ սրբազան արարողութիւններով աղօթեն ազգիս բիւրաւոր նահատակաց հոգիների համար ու մխիթարեն մեր սգաւոր ժողովուրդը ընթերցումովը Մեր

սոյն հայրապետական կոնդակի և կազմակերպումովը սգոյ հանդիսաւոր հաւաքոյթների: Մեր յորդորն է նաև ուղղեալ հայկական միութիւններին, ազգային կազմակերպութիւններին և հայ մամուլին, որ միակամ ու միամարտ գործակցութեամբ արդար ու խաղաղ միջոցառումներով հետապնդեն 1915-ի հայոց ցեղասպանութեան ճանաչումը միջազգային իրաւական մակարդակի վրայ:

Մեր քրիստոնէական խիղճը թելադրում է Մեզ մաղթել, որ յանցապարտ լռութեան վարագոյրը համայն աշխարհի առաջ հերձուի ու ազատ ճառագայթի ճշմարտութիւնը և «բարձրանայ կողմը արդարութեան»:

Եւ ինչու չէ, միևնոյն քրիստոնէական ոգով պիտի կամենայինք յուսալ, որ մեզ դրացի՝ թուրք ազգի նոր սերունդները տեղեակ դառնալով իրաւ ճշմարտութեան, սգակիր հայ ժողովրդի հետ աղօթեն մեր նահատակների հոգիների խաղաղութեան համար:

Բարին Աստուած, անանց կեանքի աշխարհում թող յաւէտ լուսաւոր պահի արդար հոգիները մեր Եկեղեցու նահատակուած զաւակների և իր պահապան աջով միշտ խաղաղ ու անվտանգ պահպանի համայն մեր ժողովուրդը և վերածնուած մեր մայր հայրենիքը, ստեղծարար ծաղկման ու ջինարար վերելքի կատարներին:

Ազգ իմ սգաւոր, ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ էլ ժամանակը, Օսմանեան կայսրութեան ճակատից ու աշխարհի յիշողութիւնից չեն ջնջելու սև խարանը մեծ ոճիրի, մինչ դու արևի ու արդարութեան ծարաւի ժողովուրդ, քո հայրենի բարձունքներից պիտի շարունակես տիեզերքին տենչալ ու ազատ սլանալ դէպի աղբիւրները լոյսի, վասնզի դու «մահը խափանած ես յաղթութեամբ» (Ա Կորնթ. ԺԵ 55): Քեզ նոր օրհնութիւն, նոր լոյս, նոր արև:

Տէր Աստուած հարցն մերոց, բաց դռները երկնքներիդ ու քաղցրութեամբ ընդունիր մեր աղօթքները: Ու երբ մի օր, հեռու բարձունքներից հնչի հրաշքի ժամը մեծ դատաստանի, Տէր, գթութեամբ յիշիր մեր արդար մեռելներին կենաց գրքիդ մէջ և արժանի արա զանոնք յաւերժական լուսէ պսակին:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 24 Ապրիլի
1985 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1343



ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 70-ԱՄՅԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻՎ

Հայաստանյայց Առաքելական մեր Եկեղեցին, իր հոգևոր սպասավորներին ու համայն մեր հավատացյալ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, այս տարի ապրիլի 24-ին ոգեկոչելու են յոթանասնամյա տարեդարձը 1915-ի հայկական ցեղասպանության, գործադրված Օսմանյան կայսրության հրահանգով, որին զոհ գնաց Արևմտյան Հայաստանի (Անատոլիա) շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյա ազգաբնակչությունը, այդ թվում նաև տասնյակ եպիսկոպոսներ ու բազմահարյուր վանականներ և քահանաներ: Հրկիզվեցին ու քանդվեցին մոտ հազար հայկական պատմական վանքեր ու եկեղեցիներ կառուցված 5—19-րդ դարերի ընթացքում, կորստյան մատնվեցին անհաշիվ եկեղեցական սրբություններ, հին ձեռագրեր, սրբանկարներ, բոլորը պատմական ու գեղարվեստական արժեք ներկայացնող:

Հայաստանում և հայ սփյուռքի տարածքի վրա գործող բոլոր հայկական եկեղեցիներում, ապրիլի 24-ին կատարվելու են սուրբ պատարագներ և հոգեհանգստյան արարողություններ աղոթելու 1915-ի ցեղասպանության անմեղ զոհերի հոգիների համար, հայցելով բարեգութն Աստծուց ողորմություն և արդարություն: Այդ օրը աղոթելու ենք նաև համայն աշխարհի խաղաղության համար, որպեսզի այլևս երբեք և ոչ մի ազգի կյանքում չկրկնվեն նման ողբերգություններ:

Սույն Մեր գրով եղբայրական սիրով ի Քրիստոս դիմում ենք Ձերդ Սրբության, որ Ձեր աղոթքներում հիշեք 1915-ի հայ նահատակներին և Ձեր բարձր հեղինակությամբ, Ձեր արդար ձայնը լսելի դարձնեք մեր օրերի աշխարհին, որ միշտ կարիքը ունի Ձեր սխիթարիչ ու հուսադրիչ պատգամներին;

Կկամենայինք Ձեզ հավաստիացնել նաև, որ մեր ազգի մեծ ողբերգությունը ոգեկոչելիս, հեռու է մեզանից թշնամանքի ոգին կամ մտածումը ծայրահեղ արարքների: Մեր միակ հոգեկան մղումն է՝ աղոթել մեր երկու միլիոն վոհերի հոգիների համար ու արդարություն հայցել: Մոռացության տալ անցյալի ողբերգությունները՝ պիտի նշանակեր տկարացնել, մթագնել մարդկության հիշողությունը, պիտի նշանակեր եղծել պատմությունը, պիտի նշանակեր խափանել ճշմարտությունը ու խեղդամահ անել արդարության ձայնը, պիտի նշանակեր ճանապարհ հարթել ապագա նոր աղետների ու ցեղասպան ոճիրների:

Անցյալի ողբերգությունների անաչառ դատաստանը, պատմության տխուր դեպքերի ճշմարտության բացահայտումը, արդարության ձայնի բարձր ու լսելի շեփորումը,—ահա ամուր հիմքերը մի նոր աշխարհի կառուցման, ուր անխտիր բոլոր ազգերի վավակները պիտի հասնեն այն փրկարար գիտակցության, թե վավակներն են միևնույն Աստծուն, թե քաղաքացիներն են միևնույն մարդկային աշխարհին միևնույն երկնակամարի տակ և որ բոլորը ունեն միևնույն ճակատագիրը: Մարդու ճակատագիր, ազգությունների ճակատագիր, աշխարհի ճակատագիր, հետ այսու մանավանդ, կազմում են մեկ միաձույլ իրողություն, մեկ հրամայական, մեկ ապագա: Այդ գիտակցությամբ միայն, այս աշխարհի մարդիկ պիտի կարողանան միատեղ աղոթել ասելով՝ «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո որպէս յերկինս և յերկրի»: Այն ժամանակ միայն երկրի վրա պիտի լինի «խաղաղություն և հաճություն ի մարդիկ», այն ժամանակ միայն մարդիկ, որպես խաղաղարարներ, արժանի պիտի լինեն կոչվելու «որդիք Աստուծոյ»:

Հարգալից սիրով մաղթում ենք Ձերդ Սրբության, մշտատև առողջություն և ճառագայթումը Ձեր հոգևոր առաքելության Ձեր սուրբ Եկեղեցում և համայն աշխարհում խաղաղությամբ:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18 հունվար 1985 թ.



ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ-ի ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Շնորհակալ եմ 18 հունվար 1985 թվակիր Ձեր նամակի համար, որով հայտնում էիք ինձ, որ ձեր հոգևոր դասի և համայն հավատացյալների հետ պատրաստվում եք առաջիկա ապրիլ 24-ին ոգեկոչելու հիշատակը հայ ժողովրդի բազում վավակների ողբերգական մահվան, որը տեղի ունեցավ յոթանասուն տարիներ առաջ:

Ինչպե՞ս չհիշել այս առթիվ այն օգնությունը, որ այդ ցավալի աղետի ժամանակ ցուցաբերեց իմ նախորդներից Բենեդիկտոս ԺԵ Պապը, կամ ինչպե՞ս չհիշել ավնիվ ժեստը Պիոս ԺԱ Պապի, որը ապաստան տվեց հայ որբերին Կաստելգանդոլֆոյի քահանայապետական իր ամառանոցում:

Կարող եմ հավաստիացնել Ձերդ Սրբությանը, որ ես միանալու եմ այն աղոթքին, որը բարձրանալու է դեպի Տերը անմեղ զոհերի հոգիների խաղաղության համար, նաև այն բանի համար, որ նման ողբերգություններ այլևս երբեք չկրկնվեն: Ես չեմ մոռանալու նաև հրավիրել Կաթոլիկ Եկեղեցու հավատացյալներին՝ միանալու իմ բարեխոսությանը և այդպիսով արտահայտելու մեր հասարակաց հավատը, սերը և հույսը:

Ժողովուրդների պատմությունը, հաճախ իր շատ ցավագին ու դժբախտ իրադարձություններով հանդերձ, պետք է արթուն պահի մեր հիշողությունը և այդպիսով մեզ հրավիրի խորհրդածության և աղոթքի: Որպես քրիստոնյա-

ներ, մենք ստացել ենք հավատի շնորհը. հավատում ենք, որ Քրիստոսի իշխանությունը տարածվում է մարդկության ամբողջ պատմության վրա և տևապես իր լրումին է գնում մահվան և հարության խորհրդով, որը հենց իր՝ Քրիստոսի խորհուրդն է: Մեծապես կգացված այն պերճախոս վկայությամբ, որ ձեր Եկեղեցին բերել է և այսօր էլ բերում է Սուրբ Ավետարանին և հաստատելով հայկական համայնքների ներկա կենսունակությունն ու հոգևոր վերապարթոնքը՝ գոհություն եմ տալիս Աստծուն և օրհնում հիշատակը բոլոր նրանց, ովքեր, կրած լինելով Տիրոջ Խաչը, թույլ են տալիս Հայ Եկեղեցու հավատացյալներին այսօր լինել Նրա Հարության վկաները:

Քրիստոս հորդորում է մեկ լինել խաղաղարարներ. իսկ անցյալի ցավառիթ հիշողությունները մեկ մղում են կրկնապատկելու մեր եռանդը, որպեսզի մարդկությունը օգտվի այդ խաղաղությունից, որը ճշմարտության և արդարության պտուղն է:

Արտահայտելով իմ լավագույն մաղթանքները Ձեր անձի նկատմամբ և ձեր Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը վստահելով աստվածային շնորհին՝ վերստին բերում եմ Ձեզ, շատ սիրելի Եղբայր ի Քրիստոս, իմ հարգալից սիրո զգացմունքների հավաստիքը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ

Վատիկան,
16 մարտ 1985 թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս:

Ձեր ուղերձը այն մասին, որ այս տարվա ապրիլի 24-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և ողջ հայ ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, պիտի ոգեկոչեն հիշատակը նրանց, որոնք 70 տարի առաջ ցեղասպանության վոհ դարձան Արևմտյան Հայաստանում, վշտագին հիշողություններ արթնացրեց մեր մեջ՝ այդ ողբերգական իրադարձության մասին, և մեկ մղեց սրտաբուխ աղոթքի՝ կործանված բյուրավոր անմեղ կյանքերի համար: Սա մի ծայրագույն փորձություն էր, որ բաժին ընկավ բազմաչարչար հայ ժողովրդին:

Բոլոր հայերի համար անմոռանալի այդ օրը մենք մեր աղոթքները կմիացնենք Ձեր Եկեղեցու և բոլոր հայ մարտիրոսների աղոթքներին, մարտիրոսներ, որոնք նահատակվեցին այդ տխուր օրերին: Թող բարերար Աստված հանգիստ տա 70 տարի առաջ տառապած բոլոր անմեղ հոգիներին: Հավերժ հիշատակ նրանց:

Թող 1915 թ. եղեռնի վոհերի հիշատակը վճռակամություն տա մեզ՝ չարի դեմ պայքարում: Ձերդ Սրբություն, համաձայն ենք Ձեր առաջարկին՝ այդ օրը աղոթելու նաև ամբողջ աշխարհի խաղաղության համար, որպեսզի երբեք և ոչ մի տեղ չկրկնվեն նման ողբերգությունները, որպեսզի մեր տագնապալի դարում մարդը ընտրի ողջմտության ուղին:

ՀԱՅԿ ԳԻՆԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՐ ՄԵՏՍՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ

Շուտով մենք համատեղ աղոթքի ևս մի առիթ պիտի ունենանք այն կոհերի համար, որ մեր ժողովուրդները ունեցան 1941—45 թթ. Հայրենական մեծ պատերազմում: Հաղթանակի ուրախությունը, որի քառասնամյակն է տոնում մեր երկիրն ու ամբողջ առաջադեմ մարդկությունը, զուգակցվում է կրած կորստի և վշտի զգացման հետ, և նրանց հիշատակը երբեք չի մարի մարդկանց սրտերում: Մենք պարտական ենք նրանց առաջ, ովքեր իրենց կյանքը հատուցեցին մեր կյանքի համար:

Ձերդ սիրեցյալ Սրբություն,

Մաղթում ենք, որ Դուք ամուր առողջությամբ և Աստուծո ամենակոր օգնությամբ հաջողապես իրագործեք Ձեր քահանայապետական ծառայությունը՝ հուրախություն Հայոց Սուրբ Եկեղեցու բոլոր հավատարիմ զավակների:

Ձեր նկատմամբ մեծ հարգանքով և ի Քրիստոս անդավաճան սիրով՝

ՊԻՄԵՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

№ 1001
10 ապրիլ, 1985 թ.
Ք. Մոսկվա





ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ՍԵՐԱՖԻՄԻ ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին, Հայաստան, ՍՍՀՄ

Ձերդ Սրբություն,

Խորապես կգացվեցինք Ձերդ Սրբության հունվար 18-ի նամակից, որով տեղեկացնում էիք 70-ամյակը 1915 թվականի ողբերգական Եղեռնի, որ գործվեց հայ մարտիրոս ժողովրդի դեմ, որ արժեց միլիոնավոր անմեղ կոհերի կյանք:

Մեր Եկեղեցին և ապգը հատկապես դյուրապգաց են հայ ժողովրդի կրած այս հալածանքների նկատմամբ, որովհետև նրանք նույնպես ենթարկվել են նման պայմանների և բաժանել են նման ճակատագիր: Երկարատև բարեկամության կապերն ու ընդհանուր տառապանքները ամրացրել են մեր համերաշխությունը մեր հայ եղբայրների հետ: Վստահեցնում ենք Ձերդ Սրբությանը, որ մեր մտածումներն ու աղոթքները միշտ Ձեզ և Ձեր ժողովրդի հետ են և Ձեզ հետ պիտի լինեն հատկապես այդ ողբերգության ոգեկոչման օրը:

Թող Աստված հանգիստ տա այդ անթիվ հոգիներին, որոնք անարդար մահվան արժանացան իրենց հավատքի համար: Թող Տերը առաջադիմություն և բարգավաճում պարգևի Ձեր Եկեղեցուն և ապգին և իրականացնի Ձեր ապնիվ ակնկալությունները:

Առավել սիրով ի Քրիստոս՝

ՍԵՐԱՖԻՄ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ



ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ, ՆՈՐԻՆ ԳԵՐԱՇՆՈՐՀՈՒԹՅՈՒՆ ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻԻ ՆԱՄԱԿԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը, որով հաղորդում էիք հայկական ջարդերի ոգեկոչման մասին: Բոլոր քրիստոնյաներն ու բարի կամքի տեր մարդիկ բաժանում են հայ ժողովրդի մորմոքը՝ 1915 թվականին կատարված սարսափելի գործողությունների առթիվ: Որոշ իմաստով սրանք նախընթացն էին հրեաների հալածանքների՝ նացիստական Գերմանիայում:

Կարող եմ ստուգապես Ձեզ վստահեցնել, որ ես ապրիլի 24-ին պիտի մտածեմ Ձեր, Հայ Եկեղեցու և ժողովրդի մասին, և պիտի անեմ այն ամենը, ինչ կարող եմ՝ բարձրացնելու համար անգլիացի քրիստոնյաների ճանաչողությունը հայոց պատմության մասին՝ իր ուրախություններով և տառապանքներով:

Սիրով ի Քրիստոս՝

ՌՈԲԵՐՏ ՌԸՆՍԻ
ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻԱՅԻ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ

22 փետրվարի, 1985 թ.
Լամբեթ Պալես, Լոնդոն



ԱՆՏԻՈՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԱՐՈՆԻՏՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՌ ԽՈՐԵՅՇԻ ՆԱՄԱԿԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Էջմիածին

Շատ հարգելի Եղբայր ի Քրիստոս,

Խոր հուզումով է, որ ծանոթացա 18 հունվար 1985 թվակիր Ձեր սրտահույզ ուղերձին, որը գալիս էր ոգեկանության այն պատմական կենտրոնից, որ Սուրբ Էջմիածնի ձեր Կաթողիկոսարանն է: Արդարև, ես մասնավորապես զգացված եմ այն փաստից, որ առաջիկա ապրիլի 24-ին աշխարհի բոլոր հայերը ոգեկոչելու են ահավոր մի ցեղասպանության զոհ գնացած երկու միլիոն հավատացյալների հիշատակը, հավատացյալներ, որոնք 70 տարի առաջ վայրագորեն սպանվեցին իրենց հավատի համար:

Հղում եմ Ձեզ իմ ամենաջերմ եղբայրական զգացումները որքան ցավագին, նույնքան և փառավոր այդ ոգեկոչման առիթով: Հենց այդ նույն օրը մենք նշում ենք մեր Մարոնիտ Եկեղեցու առաջին Պատրիարքի՝ Սուրբ Ժան Մարունի տոնը: Այս հանգամանքն ինձ մղում է առավել ջերմեռանդությամբ մասնակցելու Ձեր նամակում հիշատակված աղոթքներին և հոգևոր արարողություններին, քանի որ մեր Եկեղեցին ևս ենթարկվել է բազում հալածանքների իր պատմության ամբողջ ընթացքում, և նրա հավատացյալ զավակներից հազարավորների անունները, որոնք անմեղորեն զոհվում են ահա արդեն տասը տարուց ի վեր, արձանագրված են նրա նահատակության գրքի տխուր էջերում:

Մեծարգո Եղբայր, ես գիտեմ, թե ինչքան վեհ և ուժեղ է ինչպես Ձեր մեջ, այնպես էլ Հայ Եկեղեցու եպիսկոպոսական դասի հարգարժան անդամների, այլև ձեր ողջ հոգևորականության և բոլոր հավատացյալ սրտերում ներողամտության և եղբայրասիրության ոգին, որով դիմավորում եք այդ ցեղասպանության 70-ամյակը: Նրա ոգեկոչումը ձեզ և մեզ համար հանդիսանում է խորհրդածության և բարեպաշտ ինքնամփոփումի սրբական մի պահ բոլոր այն հոգիների հետ, որոնք կալմում են մեր Տիրոջ հետևորդների գունդը: Դրանում, ձեզ հետ միասին, մենք տեսնում ենք նաև լավագույն մի առիթ՝

մի անգամ ևս կոչ ուղղելու աշխարհին և քաղաքակիրթ մարդկությանը, որ հիշեն կատարված ցեղասպանությունը՝ ինքնատիրապետման հասնելու և անելու համար ամեն ինչ, որպեսզի վերանան ատելությունները, սանձվի բռնությունը, և կրոնական ու գաղափարական մոլեռանդության բոլոր նկատումներից վեր՝ հաղթանակեն հարգանքն ու սերը մարդու նկատմամբ: Հիրավի, դա փրկարար սերն է Քրիստոսի, որն Իր Խաչի վրայից չի դադարում կոչ ուղղել բոլոր մարդկանց՝ ինքնագիտակցության գալու և ապրելու որպես Աստուծո որդիներ և միմյանց եղբայրներ:

Ընդունեցեք ուրեմն, մեծարգո Եղբայր, իմ վշտալից զգացումների հավաստիքը այս առթիվ, զգացումներ, որ Լիբանանի հայկական համայնքի և աշխարհի բոլոր հայերի հետ միասին բաժանում են նաև մեր Մարոնիտ Եկեղեցու եպիսկոպոսական դասի պատվարժան անդամները, մեր կրոնավորներն ու համայն հավատացյալ ժողովուրդը: Մենք ևս մեր ճակատագիրը վստահում ենք աստվածային Նախախնամության տնօրինություններին և այդպես հարատևում ենք Հույսի մեջ Ձեզ հետ, ձեր հավատացյալների ու բոլոր նրանց հետ, որոնց ոգեկոչում է հավատն ի Քրիստոս և միացնում միմյանց Սիրո պատգամը, որ Աստվածորդին թողել է նրանց:

Թող Տերը բարեհաճի ընդունել մեր աղոթքներն ու ցանկությունները, որ բարձրացնում ենք առ Նա, վի «գա Նրա թագավորությունը և լինի Նրա կամքը երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:

Ձեր Եղբայրը ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՆՏՈՒԱՆ ՊԻԵՌ ԽՈՐԵՅՇ
ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՐՈՆԻՏՆԵՐԻ

Բեյրութ,
2 մարտ 1985 թ.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը տարվույս 20 փետրվարին հղել է ուղերձներ, գեղագիր հատուկ կոնդակներով՝

1. Նորին Վեհափառություն Հուսեյն Բ թագավորին՝ Հորդանանի,
2. Վսեմաշուք նախագահ Հաֆեզ Ասատին Սիրիայի Հանրապետության,
3. Վսեմաշուք նախագահ Ամին Ճեմայելին Լիբանանի Հանրապետության,
4. Վսեմաշուք նախագահ Սատտամ Հուսեյնին Իրաքի Հանրապետության,

հետևյալ բովանդակությամբ՝

«Գոհություն Աստուծո ամենակալին, որ պատեհությունը ունենք հայ ազգի հավատքի կենտրոն բազմադարյան Ս. Էջմիածնից, օրհնությամբ Մեր այս ուղերձը առաքելու Ձերդ Գերազանցության, իմաստուն և քաջարի նախագահիդ:

Այս պատեհությունը Մեզ ընծայում է ողբերգական հիշատակը Հայ Եկեղեցու և ժողովրդի մոտ երկու միլիոն զավակների նահատակության, որի յոթանասունամյա տարելիցը ոգեկոչելու են աշխարհի բոլոր հայերը, որ ի Սովետական Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, առաջիկա 24 ապրիլին:

Սգո և աղոթքի այս սրբազան պահին, Հայ Եկեղեցին ու ժողովուրդը չեն կարող մոռանալ այն մարդասիրական վերաբերմունքը, որ այնքան մեծահոգությամբ ցուցաբերեցին Ձեր երկիրը և հայապաշտպան արաբ ազնիվ ժողովուրդը բազմահազար թշվառ հայերի նկատմամբ, որոնք վերապրողներն էին Օսմանյան կառավարության կողմից 1915 թվականին կազմակերպված ցեղասպանության, որին զոհ գնաց ամբողջ հայ ազգաբնակչությունը Արևմտյան Հայաստանի: Նահատակված մեր անմեղ զավակներից վերապրողները, մեծ մասամբ որբեր, արաբ ազնիվ ժողովրդի ծոցում գտան՝ ապահով ու խաղաղ ապաստան, եղբայրական հոգատարություն և ամեն ազատություն ապրելու և կազմակերպելու իրենց համայնքային եկեղեցական կյանքը, կրթական ու մշակութային հարակից հիմնարկություններով, մնալով հավատարիմ ու շինարար քաղաքացիները իրենց նոր հայրենիքի:

Ցեղասպանության ճիրաններից ապատված տասնյակ հազար հայ ընտանիքներ, 1915-ից հետո ապաստան գտան նաև Արևելյան Հայաստանում, ուր այսօր ապրում և վարգանում է փրկված հայ ժողովրդի մայր վանգվածը Սովետական Հայկական Հանրապետության հովանու ներքո, խաղաղ ու ապահով:

Հայ Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը, սկսած Սովետական Հայաստանից մինչև աշխարհի բոլոր հորիզոնները, ուր մի հայ մարդու սիրտ է բաբախում, այսօր անհուն երախտագիտությամբ հիշում են Ձեր երկիրը և արաբ ավնվահոգի ժողովրդին, ու Մեր միջոցով նրանք բոլորը Ձերդ Գերազանցության են ներկայացնում իրենց խորագգաց շնորհակալությունը և աղոթում, որ բարին Աստված միշտ պահապան ու մարտակից մնա Ձեզ և Ձեր երկրին ու հավետ պահպանի այն խաղաղության, հառաջդիմության և ծաղկման մեջ, իրականացումովը արաբ ազգի բոլոր արդար իդեալների:

Թույլ տվեք, վսեմաշուք Տիար Նախագահ, Մեր այս ուղերձով բերել նաև անձամբ Ձեզ Մեր ջերմագին բարի մաղթանքները Ձեր արևշատության և Ձեր իմաստուն իրագործումների ամրապնդման համար, ավելի ու ավելի ճառագայթումովը Ձեր հեղինակության միջազգային կյանքում:

Օրհնություն և փառք Ձեր մեծ հայրենիքին»:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
22 փետրվար 1985 թ.



Խմբագրական

Ի ՀԵԾՈՒԿՍ ԽԱՎԱՐԻ ՈՒԺԵՐԻ

Մեծ հայրենասեր վաղամեռիկ բանաստեղծը, Ի դարի հայ մտքի ցոլացումներից մեկը՝ Պարույր Սևակը, անմահանուն Կոմիտասին նվիրված «Անլռելի Զանգակատուն» եղերերգության մեջ մի այսպիսի ընդհանրացում ունի:

«Կյանքում կան բաներ, որոնք չեն քերվում,
Ինչպես չի քերվում արյունը սրտից
Կամ գույնը՝ վարդից»:

Ուզում ենք ավելացնել «ինչպես պատմությունը՝ ժողովրդից»: Իսկ 1915 թվականի եղեռնաբեր գարունը մեր ժողովրդի պատմությունն է, նրա գոյության մի մասը, ուստի և հնարավոր չէ քերել նրա հիշողությունից, ուրեմն և հնարավոր չէ մոռանալ, որ Մեծ եղեռնը քսաներորդ դարի առաջին քաղաքականապես գիտակցված և ծրագրորեն իրագործված ցեղասպանությունն էր, որ հետապնդում էր երկու որոշակի նպատակ.

ա) Քարտեզից քերել Հայաստան անունը՝ այն կամուրջ դարձնելով մինչև Ծայրագույն Արևելք ձգվող Պանթուրանական կայսրության:

բ) Ոչնչացնել Հայաստան երկիրը բնակեցնող բնիկ ժողովուրդը՝ միանգամ ընդմիշտ ձերբազատվելու համար Հայկական Հարցի առթած անհանգստություններից:

Ձախողվեցին այս երկու նպատակներն էլ, որովհետև՝ ա) այսօր կա Խորհրդային Հայաստանը՝ իր պետական կառուցվածքով, բազմազգ և հզոր պետությունների եղբայրակցության մեջ, մշակութապես՝ հարաճուն, ռազմապես՝ ապահով. բ) կա եռապատկված հայություն նորաստեղծ հայրենիքում, թերևս և այդքան Հայաստանից դուրս, Սփյուռքը թերևս միակ շոշափելի հետքն է այդ օրերի: Ուրեմն և կա Հայկական Հարցը:

«Այո, կենդանի է այսօր հայ ազգը,—ընդգծեց Վեհափառ Հայրապետը իր Զատկական քարոզում,—եռանդով լեցուն ու ստեղծարար տենչով գոտեպինդ ի Մայր Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որ վերանորոգված ուժերով ու ներշնչանքով, քայլ առ քայլ ընթանում է դեպի բարձունքները նոր նվաճումների, նոր իրագործումների»:

Ինչպես Վեհափառ Հայրապետը ուղենշեց իր սրբատառ կոնդակում՝ հայ ժողովուրդը պիտի գոյատևի՝ «ՄԻԱԿԱՄ ՈՒ ՄԻԱՄԱՐՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ», «սուրբ պահելու նրանց յիշատակը և հաւատարիմ մնալու նրանց ուխտին, նրանց երազանքին՝ հայ ազգը համայն մէկտեղուած ու հայոց երկիրը ամբողջացած տեսնելու»:

Հայ ժողովուրդը թուրքական հրոսակ ցեղերի սրի հարվածը կգաց ԺԱ դարից: Բյուզանդական կայսրերը իրենց հայահալած անհեռատես և կույր քաղաքականությամբ թուլացրին մոտ երեք դար արաբական զորքերին դիմագրաված Բագրատունյաց թագավորությունը, և այն չդիմացավ սելջուկ-մոնղոլական ճնշմանը: Արևելքից եկած այս անքաղաքակիրթ ցեղերի ռազմավարական քաղաքականության պատճառով Հայաստանը երկար դարեր դարձավ պատերազմի թատերաբեմ՝ թուրք-բյուզանդական, թուրք-պարսկական, ապա և թուրք-ռուսական բախումների համար: Հյուծվեց ժողովուրդը, բայց չընկրկեց և ԺԷ դարից սկսած հայ ազատագրական շարժումները հետզհետե վերաճեցին բարենորոգումների անհրաժեշտության և դարձան Հայկական Հարց: Օսմանյան

Բարձրագույն Դուռը բազմիցս խոստացավ բարենորոգումներ իրականացնել հայկական նահանգներում, բայց արյունարբու Համիդները շատ շուտ անդրադարձան, որ բարենորոգումներ «առաջադրող» եվրոպական պետությունների համար Հայկական Հարցը լուսանցքային կարևորություն ուներ: Բարենորոգման պահանջները հատուցվեցին 1895—96 թվականների վանգվածային ջարդերով: 1908 թվականի Իթթիհատ վե Թերաքի կուսակցության կառավարությունը խոստանում էր սահմանադրական իրավակարգ՝ ժողովուրդների հավասարության հիմքի վրա: Բայց անմիջապես հաջորդեցին 1909 թվականի Կիլիկիայի հայկական ջարդերը: Եվ բացահայտվեց երիտթուրքական կառավարության էությունը. այն կոչված էր ոչ թե սահմանադրական իրավակարգ ստեղծելու, այլ ձգտում էր վերականգնել թուրք ցեղի «ազգային արժանապատվությունը»: «Օսմանյան» արտահայտությունը փոխարինվեց «Թուրքական» կոչումով՝ ընդգծելով երիտթուրքերի խիստ ազգայնական, շովինիստական քաղաքականությունը: «Տիրող ժողովուրդ» և «ենթակա ժողովուրդ» կապակցությունները դարձան թուրքական պետության սահմանումի հիմնական եզրերը. թուրքական այլամերժությունը վերաճեց «ենթակա ժողովուրդների» բնաջնջման գաղափարին՝ լուծելու համար դարերով փայփայված երազը՝ Պանթուրանական կայսրության ստեղծումը: Նման ոճրային ծրագիրը հաջողապես և արագ իրագործելու համար **պանթուրանիզմը** գունավորվեց **պանիսլամիզմով՝** օգտագործելու համար երկրի այլ **իսլամ հրոսակների բարբարոսությունը:**

Քրիստոնյա աշխարհի աչքի առաջ սրածվում էր Արևելքի ամենահին քրիստոնյա ժողովուրդներից մեկը, բայց չէր ուրանում կրոնը և չէր կորցնում հավատքը վաղվա օրվա նկատմամբ, որովհետև գիտեր, որ Գողգոթային ու խաչելության պիտի հաջորդի հարությունը և ժողովուրդը պիտի վերականգնվի թեկուզ և մոխիրներից: Իրենց հոտի ու հավատացյալների շարքում նահատակվեցին և հավարավոր հոգևորականներ, որոնք ոչ միայն կրեցին իրենց ժողովրդի տառապանքն ու խաչը, այլև խաչ ի ձեռին ամենուր մասնակցեցին դիմադրական շարժումներին՝ արյան նահատակությամբ: Դա հայ հոգևոր դասի դարերի ճակատագիրն էր, և նա այս փորձության ու ողբերգության պահին պատվով կատարեց իր առաքելությունը, քանի դր վերապրող եկեղեցականները դեռ պետք է կազմակերպեին հայ ժողովրդի խըլյակները ի սփյուռս աշխարհի՝ այս անգամ եկեղեցին դարձնելու համար հայապահպանության ամրոց:

Կայսերական Գերմանիայի սանձավերծած պատերազմը դարձավ **հարմարագույն առիթ՝** իրագործելու կանխագծված հրեշավոր նախճիրը: Պատերազմը ոչ թե պատճառ էր, այլ հարմար առիթ՝ իրականացված եվրոպական դաշնակից տերությունների նենգ հաշիվների և Գերմանիայի բացարձակ անտարբերության պայմաններում: Թուրքերը հայերին «սահմանամերձ շրջաններից տեղափոխեցին»՝ իբրև թե վախենալով հայերի ռուսաստեր կողմնորոշումից: Բայց թուրքերը չսխալվեցին մեկ բանում. հայ ժողովրդին տեր պիտի կանգներ ռուսական բանակը: Այդ բանակի ստեղծած ապահովության պայմաններում էր, որ հարյուր-հազարավոր հայեր փրկվեցին՝ անցնելով Արևելահայաստան: Հայ ժողովուրդը նաև դիմադրեց. ինքնապաշտպանական հզոր մարտեր մղվեցին Վանում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Զեյթունում, Ուրֆայում, Մուսա լեռան վրա և այլուր: Այդ դիմադրական ալիքը պսակվեց Սարդարապատի փառապանծ հաղթանակով, և հայը, ի հեճուկս խավարի ուժերի, հաստատեց իր ապրելու իրավունքը և 1920 թվականին ընդգրկվեց սովետական ժողովուրդների հզոր եղբայրակցության մեջ ու խորտակեց խավարի ուժերի դարավոր սպասումները:

Այսօր հայ ժողովուրդը ի պայծառ Հայաստան և ի սփյուռս աշխարհի կերտում է վերածնյալ գոյություն և ինչպես Սևակը պիտի ասեր.

«Եվ ուր էլ լինեն այրերի որդիք,
Ինչքան էլ լինեն իրարից բաժան,
իրար անճանաչ,
Նրանց հաշվեցեք հատուկ կորագունդ,
Եվ նրանց շնչից դեռ օդը պիտի լցվի
սարսուռով
Ու հողն ունենա երկրաշարժային
գլխապտույտներ»:

Այս իմաստով մարգարեական պատգամի ուժ է ստանում Վեհափառ Հայրապետի կոչը.

«Ապգ իմ սգաւոր, ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ էլ ժամանակը, Օսմանեան կայսրութեան ճակատից և աշխարհի լիշողութիւնից չեն ջնջելու սև խարանը մեծ ոճիրի, մինչ դու արեւի ու արդարութեան ծարաւի ժողովուրդ, քո հայրենի բարձունքներից պիտի շարունակես տիեզերքին տենչալ ու ապատ սլանալ դէպի աղբիւրները լոյսի»:

«ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»



ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 70-ԱՄՅԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» (Ժամագիրք)

«Ով Հայոց աշխարհ»... «Հայաստան երկիր դրախտավայր»,... Թևածում էր երգը:

Սակայն 1915 թվականին դրախտային մեր երկիրը դարձավ ցեղասպան Թուրքիայի ծրագրված ցնորքների կոհը և վերածվեց «ողբի ու որբի, վարկված ու վրկված հայրենիքի»:

70 տարի է անցել այդ սև օրերից, սակայն հայ ժողովրդի նոր սերունդները ոչ միայն մոռացության չեն մատնել իրենց 2 միլիոն ապգակիցների հիշատակը, այլև, ընդհակառակն, միաուժ և միասիրտ ջերմեռանդ աղոթքով ոգեկոչում են միլիոնավոր այն հոգիների խնկելի հիշատակը, որոնք չտեսան Հայաստանի նոր արշալույսը և արյան փոթորիկներից մեկընդմիշտ փրկված Հայաստան աշխարհը:

Արարատյան դաշտավայրում, Ս. Էջմիածնի, Արարատի և Արագածի հայացքների տակ, ապատ ու անվախ ճախրում է Նոյան խաղաղաբեր աղավնին: Այլևս չկան սև ամպեր, որ Հայոց աշխարհը ծածկեն մահաբեր ստվերներով:

1985 թ. ապրիլի 24: Մայր Աթոռ Ս. Էջմիածնում արև է, գարուն: Մարդկանց աչքերը, հայացքները ուղղվում է դեպի նահատակաց հուշարձան: Նահատակների հուշարձանը քարե սովորական մի կառույց չէ: Այն դարձել է հայ ժողովրդի դարավոր պայքարի, ապատատենչ երազների, միասնության, արդար իղձերի իրականացման ու նոր կյանքի խորհրդանիշ: Քարե կոթող, որ հսկա մի խաչքար է, միլիոնավոր անթաղ ու անհայտ հայորդիների եղբայրական գերեզման, սրբավայր է՝ ոխտի և աղոթքի:

Առավոտյան ժամը 10,00-ին Վեհափառ Հայրապետը՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիարք Անդրանիկ Հասրաթյանի և Ռաֆայել Զարգարյանի, հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետի անմիջական տեղակալ հարգարժան տիար Արման Նշանյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի մեծահարգ անդամների, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների ուղեկցությամբ, այցելում է Երևանի Ծիծեռնակաբերդի Եղեռնի նահատակների հիշատակն անմահացնող հուշարձան՝ աղոթելու և հարգանք մատուցելու հայ ժողովրդի 2 միլիոն անմեղ հոգիներին:

Ամեն մի հայի համար, աշխարհի որ ծայրում էլ որ նա գտնվի, Ծիծեռնակաբերդը դարձել է սրբական ու նվիրական մի վայր: Այս բլրի վրա հանդիպում են հայ ժողովրդի աշխարհասփյուռ վավակների բոլոր երազանքներն ու ցանկությունները, դառնում միասնական մեկ բռունցք, մեկ ոգի, և ծիծեռնակների ապատ ու անկաշկանդ ճախրի հետ սավառնում են մեր հին ու նոր մայրաքաղաքի վրայով, սլանում են դեպի միլիոնավոր հայոց հոգիները, որոնք օրհներգում են Հայոց երկիրը, սրբական հողը հայրենի.

«Փառք քեզ, միշտ փառք, Սովետական Հայաստան»:

Համբաքայլ ու երկյուղած թափորը աղոթամրմունջ մոտենում է հուշարձանին և ծաղկեպսակ կետեղում հուշարձանի պատվանդանին:

Անշնջ հուրի վրա կռացած քարերը՝ իրենց քարե ձեռքերը երկինք կարկառած գիշեր ու կոր աղոթում են «վասն բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան»:

Անմար կրակի շուրջ խմբված հոգևորականները քարերի աղոթքին են միացնում իրենց աղոթքը, սերը և երկնային Հորից աղերսում երկնային հանգիստ ու խաղաղություն նահատակված հոգիների համար:

Ապա Հայրապետական թափորը վերադառնում է Մայր Աթոռ, ուր տեղի է ունենում սրբական պատարագ՝ նահատակաց հոգիների համար:

Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը:

«Տեր Ողորմեա»-ից առաջ պատարագիչ սրբազանը ոգեշունչ ձայնով ընթերցում է Եղեռնի նահատակների 70-ամյակին նվիրված Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը (տես էջ 10):

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, եկեղեցական թափորը ուղղվում է դեպի վանքի նահատակաց հուշարձան: Հուշարձանին ծաղիկներ կետեղելուց հետո սկսվում է հոգեհանգստյան արարողությունը:

Հոգեհանգստյան արարողությունից հետո եկեղեցական թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Վեհարան:

Հետ միջօրեի սարկավագներն ու հոգևոր ճեմարանի սաները այցելում են Ծիծեռնակաբերդի նահատակաց հուշարձան:

Լուռ է ծով բազմությունը: Ողջ հայ ժողովուրդը մեկ մարդու նման եկել է Ծիծեռնակաբերդ՝ աղոթելու և ոգեկոչելու իր 2 միլիոն նահատակների հիշատակը:

Դարասկզբին նահատակվեց մեր ժողովուրդը: Սակայն քրիստոնյա հայ ժողովուրդը հարություն առավ մահվան գերեզմանից և ապացուցեց իր անմահությունն ու հավերժությունը: Հայը չի մեռնի, հայը կշարունակա և կբազմանա, քանզի Աստվածորդին Հայոց երկիր կատարած Իր էջքով անմահության կնիքը դրեց Հայոց դրախտավայր հողին, իսկ այդ աստվածակնիք հողից սնված ու մեծացած հայորդիները պատրաստ են անգամ իրենց արյան գնով պաշտպանել իրենց հայրենիքի ապատությունն ու անկախությունը:

Շարքերը լուռ, դանդաղ առաջ են գնում: Գնում է ժողովուրդը հայոց, ստեղծագործ հայ շինականը, հայ մանչուկը և եղեռնի արհավիրք ապրած վառամյալ ծերունին՝ տխուր ու գլխահակ: Սակայն երբ բարձրացնում է գլուխը և իր աչքերի առջև տեսնում է մոխիրներից վեր սլացող հայ մտքի քարե հրաշքը՝ մարպահամալիրը, ուրախությամբ է լցվում հոգին ու խրոխտ կրկնում է. «Ոչ, իմ ժողովուրդը չի մեռնի»:

Հաջորդ օրը, ապրիլի 25-ին, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Մեծ եղեռնի նահատակների հիշատակի ոգեկոչման 70-ամյակին:

Դահլիճը լեփ-լեցուն էր հրավիրյալներով: Հանդիսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալներ տիարք Ա. Հասրաթյանն ու Ռաֆայել Զարգարյանը, Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետի անմիջական տեղակալ տիար Արման Նշանյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի հարգարժան անդամները, Շիրակի և Արարատյան հայոց թեմերի առաջնորդ սրբազանները քահանայից դասով, հայրենի մտավորականներ, մայրավանքի միաբանությունն ու պաշտոնեությունը և բազմաթիվ այլ հյուրեր:

Սկսվում է հանդիսությունը Վեհափառ Հայրապետի արտասանած Տերունական աղոթքով, ապա հնչում է Խորհրդային Հայաստանի պետական հիմնը: Հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը.

«Վեհափառ Տէր, հոգևոր եղբայրներ, պատուարժան հիւրեր և սիրելի հանդիսականներ.

Թէև 70 տարի անցած է 1915-ի Ապրիլեան Եղեռնէն, սակայն թարմ է նահատակաց յիշատակը հայ ժողովուրդի սրտին մէջ, հայութեան հոգին դեռ կը փոթորկի, կ'ըմբոստանայ ցեղասպանութեան ոճիրին դէմ. նահատակներու սերունդը կ'ապրի և պիտի ապրի հայութիւնը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այսօր կրկնապատկուած է հայ ազգի թիւը Մեծ Եղեռնէն ի վեր: Ինչպէս ծառը կ'ապրի իր արմատներով, նոյնպէս ազգերը կ'ապրին իրենց արմատներով, իրենց անցեալի և նախնեաց ժառանգութեամբ: Եզեկիէլ մարգարէի տեսիլքին նման—ինչպէս որ Իսրայէլի բանակին չորցած ոսկորները վերա-

կենդանացան, այդպէս ալ հայ ժողովուրդի չորցած ոսկորները կենդանացան, և հայ ազգը յարութիւն առաւ գերեզմանէն Աստուածորդւոյն պէս, վերածնաւ հայոց աշխարհը, ծաղկեցաւ Արարատեան երկիրը ու հայ ժողովուրդը փիւնիկ թռչունի պէս յարութիւն առաւ իր աճիւններէն:

Նահատակաց պարտամուրհակը դեռ չէ վճարուած, տակաւին արդար հատուցում չէ եղած: Պէտք է ազգովին ուխտել և հետապընդել անոնց արդար դատը՝ մինչև որ ոճրագործը խոստովանի իր անսերելի ոճիրը և աշխարհը ընդունի հայ ազգի իրաւունքը:

Հայ ժողովուրդը՝ թէ ի Հայաստան և թէ սփիւռքի տարածութեան վրայ՝ նահատակաց յիշատակին յուշարձաններ կանգնած է աշխարհի ամէն կողմը: Հայրենի պետութիւնը Ծիծեռնակաբերդի բարձունքին վրայ կանգնած է նահատակաց մեծ յուշարձանը, ուր անշէջ բոցը և Կոմիտասի անլռելի երաժշտութիւնը միշտ բոցավառ կը պահեն նահատակաց յիշատակը: Այսօր, ինչպէս հոս, նոյնպէս սփիւռքի բոլոր հայ գաղթօճախներու մէջ կը նշուի հայութեան բիւրաւոր նահատակներու տօնը, ու անոնց անմեռ հոգին կը խօսի մեզի, և կը պատգամէ, թէ հայ ազգը կ'ապրի ու պիտի ապրի՝ որքան ատեն մենք հաւատարիմ ենք անոնց ուխտին ու պատգամին:

Աղօթք և յարգանք նահատակաց յիշատակին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Այնուհետև ամբիոն է հրավիրուած օրվա բանախոս «Էջմիածին» ամսագրի խմբագիր, հոգևոր ճեմարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու տիար Երվանդ Մելքոնյանը:

Հարգարժան բանախոսն իր ելույթի մեջ ի մասնավորի ասում է.

«1915 թվականի եղեռնաբեր գարունը մեր ժողովրդի պատմությունն է, նրա գոյության մի մասը, ուրեմն հնարավոր չէ մոռանալ, որ Մեծ եղեռնը Ի դարու պատմության առաջին քաղաքականապես գիտակցված և ծրագրորեն իրագործված ցեղասպանությունն էր մի ժողովրդի նկատմամբ, որ ապրում էր խաղաղ և ստեղծագործ կյանքով. իր լուման էր ներդնում համաշխարհային մշակույթի զարգացման մեջ: Հատկապես վերջին տարիներին թուրք պատմագրությունն ու դիվանագիտական բոլոր մակարդակները ոգի ի բռին աշխատում են ետ մղել 1915 թվականին հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության պատասխանատվությունը:

Ավելին, կեղծելով պատմությունը՝ ջանում են հերքել ցեղասպանության փաստն անգամ՝ հույս ունենալով ապակողմնորոշել համաշխարհային հասարակական կարծիքը: Ոչ միայն փորձեր են արվում սեփականելու մեր ժողովրդի պատմական ժառանգությունը, այլև տագնապալի մղձավանջով ձգտում են հերքել մեր իսկ պատմությունը՝ պետականություն չտեսնելով մեր հալարամյակների պատմության մեջ: Սա նույնպես յուրահատուկ եղեռն է՝ մշակութային և գիտական, որ սակայն, լավագույն դեպքում, կարող է դառնալ կարիճի ինքնախայթում՝ առաջադրված խնդրի ապացուցման անկարողությունից մոլեգնած:

Հայտնի է, որ հայ ժողովուրդը թյուրքական հրոսակ ցեղերի հարվածը կրաց ԺԱ դարի կեսերին: Բյուզանդական կայսրերը իրենց հայահալած, անհեռատես և կույր քաղաքականությամբ տկարացրին մոտ երեք դար արաբական վորքերին դիմագրաված Բագրատունյաց թագավորությունը, և այն չդիմացավ սելջուկ-մոնղոլական ճնշմանը: Պատմության տրամաբանությունը պահանջում էր ուժեղացնել հայկական պետությունը, որը հաջողապես կարող էր պատվար դառնալ թյուրքական առաջխաղացքի դեմ, թերևս և կասեցներ նրանց թափանցումը Եվրոպա: Նույնպիսի անհեռատես քաղաքականության զոհ գնաց նաև Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ Միջերկրականի արևելյան ավազանը ամբողջապես թողնելով թյուրքացող հորդաների կրունկի տակ:

Արևելքից եկած այս անքաղաքակիրթ ցեղերի ռազմավարական տարածողական քաղաքականության պատճառով Հայաստանը երկար դարեր դարձավ պատերազմի թատերաբեմ՝ թուրք-բյուզանդական, թուրք-պարսկական, ապա և թուրք-ռուսական բախումների համար: Հայաստանը հյուծվեց, բայց ժողովուրդը չընկրկեց և ԺԷ դարից սկսած հայ ազատագրական ձգտումները հետզհետե հասունացան և դարձան քաղաքական որոշակի հեռանկար հետապնդող շարժումներ:

Հայ սթափ և ողջամիտ մտածողներ կանխենթադրեցին ցարական Ռուսաստանի ձգտումը դեպի Անդրկովկաս և «տաք ջրեր» և հայ ժողովրդին առաջադրեցին ռուսական կողմնորոշումը՝ որպես քրիստոնյա պետության հովանավորություն և օժանդակություն՝ սեփական հայրենիքի ստեղծման համար: Փոխադարձ դիվանագիտական շահերը վերաճեցին քաղաքական համագործակցության և հանգեցին Արևելահայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկման: Պատմությունը ապացուցեց ռուսական կողմնորոշման ողջամտությունը, փաստ՝ այսօրվա մեր պայծառ Հայրենիքը: Մյուս կողմից, սակայն, պատմական Հայաստանի մեծագույն մասը հեծում էր օսմանյան ճնշման տակ: Ճնշու-

մը հետևիհետե անտանելի էր դառնում և Արևելահայաստանի ֆիզիկական ապահովությունը ռուսական կողմնորոշման համար նպաստավոր հող ստեղծեց նաև Արևմտահայաստանում: Օսմանյան լծի տակ հեծող ուրիշ ժողովուրդներ նույնպես սկսեցին իրենց ազատագրական պայքարը: Դժգոհության ալիքը բարձրացավ նաև սերբերի, բուլղարների, հույների մեջ և առաջ եկավ **բարենորոգումների հարցը,** որի իրականացումը վերապահվեց եվրոպական պետություններին: Սակայն եվրոպական պետությունները իրենք միասնական չէին, ավելին, ունեին հակադիր շահեր և հակասական քաղաքական հեռանկարներ՝ տկարացող Օսմանյան կայսրության նկատմամբ: 1880-ական թվականներից Թուրքիայի և նրա խնդիրների նկատմամբ հատուկ հետաքրքրություն ցուցաբերեց Գերմանիան: Նա որոշակիորեն ձգտում էր դեպի նավթի ակունքները և տեղի ունեցավ յուրահատուկ փոխըմբռնում Գերմանիայի և Թուրքիայի միջև. Թուրքիան Գերմանիային հնարավորություն պիտի տար հասնել առայժմ դեռ թուրքական տնօրինության տակ գտնվող տարածքի նավթային ակունքներին, ի հակադրություն նույն շրջաններին ձգտող Անգլիային և Ֆրանսիային, իսկ Գերմանիան պիտի օգներ Թուրքիային ոչ միայն լուծելու իր ներքին խնդիրները՝ խուսափելու քրիստոնյա փոքրամասնությունների պահանջներից, այլև տարածվելու դեպի Արևելք՝ միավորելու թուրքական ցեղերին՝ վերականգնելու համար արևմտյան սահմանների կորուստը: Երկու ծավալողական ձգտումներ համընկան. Պանթուրանիզմը և կայզերական Գերմանիայի շահերը լրացնում էին իրար և 1883-ից նրանց միջև սկսեց քաղաքական սերտ համագործակցություն: Շուտով Գերմանիայի դրամական ներդրումները Թուրքիայում այնքան մեծացան, որ Գերմանիան դարձավ թելադրող ուժ, Թուրքիայի ամբողջ արևելահայկական վիլայեթային ներդրումների 45.4 տոկոսը գրտնվում էր Գերմանիայի ձեռքը, իսկ սա նշանակում էր Թուրքիայի ամբողջական կախում գերմանական շահերից: Անշուշտ եղան բարենորոգումների բազմաթիվ խոստումներ, նույնիսկ 1863 թվականի սահմանադրությունը, Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովները, բայց այդ բոլորը մնաց թղթի վրա, ոչինչ չփոխվեց Թուրքիայի ներքին քաղաքականության մեջ. ընդհակառակը դաշնակից Գերմանիայի անտարբերության, որոշ իմաստով նաև խրախուսանքի պայմաններում, Թուրքիան անցավ ազգային փոքրամասնությունների ֆիզիկական բնաջնջման քաղաքականության. Վիլհելմ կայսրը նույնիսկ հատուկ շքանշան պարգևեց Սուլթան Համիդին, երբ այդ հրեշը արդեն արյունապարտ էր 1895—96 թվականներին 300.000 հայերի ջարդով: Հայկական Հարցը դարձավ գորդյան հանգույց:

1908 թվականին Իթթիհատ վե Թերաքի կուսակցությունը երկրում այսպես կոչված հեղափոխություն իրագործեց՝ սահմանադրական իրավակարգ և ժողովուրդների հավասարություն ստեղծելու հավակնությամբ, բայց ոչ մի դրական տեղաշարժ չեղավ ո՛չ թուրքական արտաքին և ներքին քաղաքականության և ո՛չ էլ Գերմանիայի դեպի նավթահորերը ձգտումների մեջ, մանավանդ որ Թուրքիայի տեսադաշտում հետևիհետե մեծանում էր ցարական Ռուսաստանի՝ դեպի Միջերկրական էջքի վտանգը: Չփոխվեց նաև թուրքական քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ, այն տարբերությամբ միայն, որ այժմ իշխանության գլուխ էին բարձրացել **Երիտասարդ թուրքերը** և ջանացին երիտասարդական եռանդով իրագործել այն, ինչ Սուլթան Համիդն ու նրա նախորդները չէին կարողացել իրագործել. «Դա ազգայնամոլական հեղափոխություն էր: Նրա առաջնահերթ խնդիրն էր ապահովել Օսմանյան պետության վերապրումը: Բնականաբար նրա ազատականությունն ու սահմանադրականությունը ստորադասվեցին ազգայնամոլական ձգտումներին»: Ուինսթոն Չերչիլը այդ ձգտումը պիտի ձևակերպեր շատ կարճ. «Ցեղի մաքրալտում», հասկանալի է, այլ ազգությունների բնաջնջման հաշվին: «Միայն ռասիզմի հասնող ազգայնամոլությունը կարող էր փոխհատուցանել օսմանյան կորուստները, թուրք ցեղի գերակայության տեսությունը միայն կարող էր բավարարել երիտթուրքերի և թուրք ժողովրդի ազգային հպատակությունը», պիտի գրեր մի այլ անգլիացի դիվանագետ: Դրա լավագույն ապացույցը եղան 1909 թվականի Կիլիկիայի հայկական ջարդերը: «Օսմանյան» արտահայտությունը փոխարինվեց «Թուրքական» անվանումով՝ ընդգծելով երիտթուրքերի ազգայնամոլական քաղաքականությունը: Շրջանառության մեջ մտավ «Տիրող ժողովուրդ» և «Ենթակա ժողովուրդ» տեսությունը. թուրքական այլամերժությունը վերաճեց «ենթակա ժողովուրդների», այսինքն ազգային փոքրամասնությունների բնաջնջման գաղափարին: Երիտթուրքերը պատասխանատու զգացին սրբագրել **թուրք ցեղի** պատմական սխալները՝ երկրի քրիստոնյա տարրի նկատմամբ վարած դարավոր մեղմ և հանդուրժողական քաղաքականությունը: Օրինաչափորեն այն բոլորը, ինչ ընդհանուր էր՝ «Օսմանյան», դարձավ յուրահատուկ՝ «թուրքական» և երկրում բարձրացավ թուրք ազգայնամոլական մի

փոթորիկ, որ վերաճեց կույր մոլուցքի և սպառնում էր խեղդել այն բոլորը, ինչ թուրքական չէր. մշակույթ, քաղաքակրթություն և ... ժողովուրդ:

Ահա այս մթնոլորտում էր, որ համաշխարհային տիրապետման ձգտող կայսերական Գերմանիան սանձազերծեց աշխարհավեր առաջին պատերազմը: Պատերազմական իրավիճակը, եվրոպական պետությունների հակամարտությունը լավագույն պայմաններն էին ստեղծում՝ իրագործելու ազգային փոքրամասնությունների բնաջնջումը: Եվ երիտթուրքերը լավագույնս օգտվեցին այդ առիթից: Ինչպես Լորդ Ջեյմս Բրայսը պիտի ընդգծեր, պատերազմը հարմարագույն առիթն էր, և ոչ թե պատճառը, 1915 թվականի ցեղասպանությունը իրականացնելու համար: Երիտթուրքերը գտան նաև Հայկական Հարցի լուծման դիվանագիտական հիմնավորումը. նրանք հայտարարեցին. ա) հայերը ընդհանրապես ունեն ռուսական կողմնորոշում. բ) հետևաբար, պիտի գործակցեն ռուսական թշնամի բանակների հետ. և գ) հայերը ապըստամբում են պետության դեմ: Իսկ լուծումը՝ հայերի տեղափոխությունն էր սահմանամերձ շրջաններից: Նույնիսկ այսօր, երբ պատմական անհերքելի փաստերն ու արխիվային հարուստ նյութերը անժխտելիորեն ապացուցում են հայկական ցեղասպանության կանխամտածված և հետին մանրամասնությամբ ծրագրված լինելը, թուրք պատմագիտությունը հենվում է վերոհիշյալ սին պատճառաբանությունների վրա և փորձում է մեղմել և արդարացնել կատարվածը, բայց դեռ 1915 թվականին Լորդ Ռոբերտ Սեսիլը անգլիական Համայնքների պալատում հայտարարում էր. «Ոճիրները կանխամտածված էին, ոչ թե պատժելու համար ապստամբությունները, այլ ջնջելու համար հայ ցեղը», իսկ նույն Լորդ Բրայսը պիտի հաստատեր. «Կազմակերպված ապստամբություն չկար Վանում. հայերը իրենց թաղամասը ամրացրին միայն թուրքական խմբերի կողմից հարձակման ենթարկվելուց հետո»: Բարեբախտաբար վերջին տարիներին, թեև պետք է ասել բավական ուշացումով, լույս են տեսնում հարցը լուսաբանող բազմաթիվ արխիվային նյութեր ռուսական, անգլիական և ֆրանսիական արտաքին գործերի նախարարությունների այդ օրերի թղթակցությունները ներկայացնող, որոնք լրացնելով մեկը մյուսին, բացահայտում են երիտթուրքական կառավարության ճշմարիտ դեմքն ու նպատակները: Միայն մեկ վկայություն թուրքական արխիվներից. դեռևս 1914 թվականի օգոստոսի 17-ին Իթթիհատ վե Թերաքի կուսակցության կոմիտեի քարտուղար Միդհատ Շուքրին ծանուցում էր Բեհաէդդին Շաքիրին. «Ռազմական գործողությունները պլանավորված են եղել պատերազմի սկսվելուց շատ առաջ. դա եղել է կոմիտեի նպատակն ու ցանկությունը»: (Փակագծում ասենք, որ Թուրքիան պատերազմի մեջ մտավ միայն 1914 թվականի հոկտեմբերի 30-ին): Իսկ ինչ է եղել այդ նպատակն ու ցանկությունը. ահա ականատես անգլիացի բժշկի վկայությունը. «Տղամարդկանց միմյանց կապելուց հետո գնդակահարել էին քաղաքի պատերից այն կողմ: Կանանց ու երեխաներին քշել էին մոտակա գյուղերը, և հարյուրներով տներում տեղավորելուց հետո կենդանի վիճակում այրել էին, իսկ մնացածներին նետել էին ջուրը... մարդկային ոտքեր, ձեռքեր և մարմնի պատառոտված այլ անդամներ մեխել էին տախտակների վրա: Աքցաններով քաշում էին վոհյալների մատներն ու եղունգները, մորուսն ու հոնքերը: Ինչպես ձիերին, մեխերով պայտում էին նրանց ոտքերը, իսկ շատերին գլխիվայր վիճակում կախել էին արտաքնոցների պատերից». անգլիական արտաքին գործերի մինիստրության հղված հեռագիրը պիտի ավելացնի. «Ամբողջ հայ բնակչությանը՝ մոտ 830 հազար հոգի կամ սպանված են, կամ աքսորված, կամ բռնի կերպով իսլամացված»: Դեռևս 1913 թվականին Անգլիայի արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչը հեռագրում էր Լոնդոն. «Բացարձակապես անհնար է կանխել ջարդերը Հայաստանում, բացի այն դեպքից, եթե այդ շրջանները գրավվեն ռուսական զորքերի կողմից, երևույթ, որ ցանկալի չէ այլ պատճառներով»:

Հետևաբար անհիմն են թուրքական հին և նոր բոլոր պնդումները՝ ժխտելու ցեղասպանության փաստը, կամ լավագույն դեպքում երևույթը բացատրելու պատերազմական իրավիճակով կամ Թուրքիայի մտամտությամբ՝ հայերի ռուսների կողմը անցնելու: Փաստեր կան, որ նույնիսկ Գերմանիայի մեղմակից կառավարության համար դեպքերի այդպիսի ընթացքը սասսալի չէր. գերմանացիները համաձայն էին տեղափոխության գաղափարին, այն հույսով, որ գործարար և աշխատասեր մի ժողովրդով կլրացնեն իրենց սասա տիրույթը՝ հատկապես Իրաքի տարածքում, բայց թուրքերը գերազանցեցին նրանց բոլոր սասսումները: Արտանստոռու Թաւեաթի հրահանգով նախկին ամրաններից ու ճանապարհներից ստեղծված հատուկ կորագնդերը՝ «Թաշքիլաթ Մախսուսի», գործեցին ըստ առաջադրված ծրագրերի և աննախադեպ վարագուրամբ: Այդ շրջանում Ֆրանսիայի ազգային ժողովի դեպուտատների ապայտի նախագահ (ռուս և սոցիալիստ) Պոլ Դեշանելը ահռելի ելույթներ. «Հայերը ուղղակի վոհեր էին նա-

խապես խնամքով կազմված պլանի համեմատ իրականացվող սպանության»: Հետագային Թալեաթը փորձեց եղեռնը բացատրել հայերի և քրդերի «ցեղական հակամարտությամբ», իբր այդ հակամարտության «պատմական օրինաչափ տխրալի ավարտ»: Սա նույնպես կեղծիք էր, որովհետև երիտթուրքերը պարզապես կարողացան օգտագործել քրդական ցեղերի կրոնական մոլեռանդությունը՝ պանթուրանիզմը ներկայացնելով պանիսլամիզմի անվան տակ:

Այն տպավորությունը չստեղծվի, որ միայն գերմանացիները անտարբեր եղան հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Եվրոպական մյուս պետություններն էլ՝ յուրաքանչյուրը իր հերթին և իր չափով հանցապարտ են կատարվածի համար, որովհետև նրանք նույնպես ձգտում էին առյուծի բաժնին, ունեին իրենց շահերը, բայց մանավանդ մտահոգությունները՝ արգելելու ռուսների վայրէջքը Միջերկրական: Թեև եղան բավմաթիվ եվրոպացի անհատներ (Ժան Ժորես, Վիկտոր Բերար, Անատոլ Ֆրանս, Անտուան Մեյե, Ժագ դը Մորգան, Գլադստոն, Լորդ Բրայս, Մարկվարտ, Լեփսիուս, Նանսեն, ամերիկացի Մորգենթաու և ուրիշներ—պատիվ և հարգանք նրանց), որոնք սրտացավություն ցուցաբերեցին հայ ժողովրդի նկատմամբ, հնարավոր միջոցներով փորձեցին ազդել համաշխարհային քարացած խղճի վրա, բայց դժբախտաբար չկարողացան փոխել իրենց կառավարությունների դիրքը և նրանց շահերը համաձայնեցնել հայերի պաշտպանության հետ: Թուրքիային տրվեցին նույնիսկ պաշտոնական սպառնալիքներ, բայց երբեք չէին կարող բոլորի շահերը համատեղվել, ուստի բոլորի համար Հայկական Հարցը դարակում պահված խաղաքարտ էր. դեռ Դիզրայելին ասել էր. «Անգլիան հավատարիմ բարեկամներ չունի, Անգլիան չունի հավատարիմ կենդանիներ, Անգլիան ունի հավատարիմ շահեր»: Անգլիական դիվանագիտության լավագույն ապացույց կարող է լինել ականատեսի վկայությունը այն մասին, որ մինչև այսօր դեռևս անգլիական արխիվներում կան հարյուրավոր նամակներ, որոնք գրված են եղեռնի օրերին՝ հայերի և այլոց կողմից՝ հայկական ցեղասպանության մասին, և մնում են չբացված. մարդիկ սրտի արյունով են գրել «մարդասեր» քրիստոնյա Եվրոպային, իսկ այդ «ապավենները» նամակները նույնիսկ չեն բացել. այսպես էր Եվրոպան «տեր կանգնում» Հայկական Հարցին: Պատկերացնո՞ւմ եք ինչպիսի նավերով էր ուզում փրկվել հայ ժողովուրդը՝ սպանդի և մահվան համատարած օվկիանոսից: Իսկ այդ սպանդը խլեց մոտ երկու միլիոն անմեղ զոհերի կյանք:

Հրեշավոր նախճիրին զոհ գնաց հայ մտավորականության սերունդը, բոլորն էլ մտքի ու լեզվի, ձևի ու ձայնի՝ քանքարներ՝ մարգարեական շնչով և տեսիլքով: Մտավորականության ձերբակալությունը դարձավ Ապրիլյան եղեռնի ազդանշանը, որովհետև, ինչպես այդ օրերին գերմանական դեսպանության աշխատակից Ֆոն Նոյրաթն էր հեռագրում Գերմանիա. մեծ է հայ մտավորականության ազդեցությունը ժողովրդի վրա և թուրքերը շատ են վախենում այդ ազդեցությունից: Հայ մտավորականը նաև քաղաքական և հասարակական գործիչ էր և նրան էր վերապահված գնահատել երկրի քաղաքական վիճակը և կազմակերպել ժողովուրդը: Եթե հայ մտավորականները կարողացան լավագույնս գնահատել իրավիճակը, ապա չհաջողվեց իրականացնել ամբողջական կազմակերպումը: Դեռևս 1914 թվականի օգոստոսի 3-ին Գրիգոր Զոհրապը իր անտիպ օրագրում զարմանալի հայտնատեսությամբ գրում էր.

«Այս միջոցին Եվրոպան տակն ու վրայ է. պատերազմին ո՞ր կողմին յաջող թուելու մասին դեռ ոևէ յայտարար նշան չի կայ: Միւս կողմէ Թուրքիոյ մէջ ալ կացութիւնը ծանր է: Թուրքերը ներկայ խռովեալ վիճակէն օգտուիլ կ'ուզեն. Ոմանք՝ մեծ, խիստ մեծ, ոմանք պզտիկ, համեստ չափով: Մաս մը կայ, որ Արշիպելագոսի կղզիներուն վերստացումն ունի միայն մտքի առջև: Մասն մըն ալ Ռուսիոյ, Ֆրանսիայի և Անգլիոյ վճռումովն կ'ուզէ վերահաստատուիլը տեսնել իսլամական մեծ կայսրութեան մը, որ Միջերկրականի հարաւային բոլոր ծովեզերքէն սկսելով պիտի երկարի դեպի Կովկաս, Խրիմըն ալ միասին առնելով պիտի հասնի մինչև Թուրքեստան ու թերևս Հնդկաստանի ու Չինաստանի իսլամութիւնն ալ պիտի կուլ տայ: Ասոր փոխարեն բոլոր քրիստոնեայ տարրը մտահոգ է... Թուրքիոյ քրիստոնեայ տարրին աւելի կամ նուազ պաշտպան Եվրոպան՝ այսօր գոյութիւն ունենալէ դադրած է, չի կայ նաև Ռուսիոյ վախը: Թուրք և իսլամ տարրը իր հակաքրիստոնէական ատելութեանց մէջ ոչ ոքէ վախու տեղ ունի»: Ահա թե ինչու երիտթուրքերը նախ ժողովուրդը զրկեցին իր մտավորական տարրից:

Սեփական ժողովրդի հոգևոր և մտավոր ծառայության պահին նահատակվեցին ավելի քան 4000 հոգևորականներ՝ ոմանք ողջ-ողջ այրվելով: Հայաստանյայց Եկեղեցին գիտակից էր իր պատմական դերին և բաժանեց իր հոտի ճակատագիրը և՛ արհավիրքի ճամփաներին և՛ վենքը ձեռքին՝ միշտ մնալով աատնեջի վրա: Հազարավոր կանգուն եկեղեցիներ քանդվեցին, ձեռագրեր ոչնչացվեցին, եկեղեցական հարուստ սպասք թալան-

վեց կամ փչացվեց: Առաջին համաշխարհային պատերազմը վաղուց է անցել, սակայն մինչև այսօր պայթեցման և ոչնչացման են ենթարկվում հայ մշակույթի բազմաթիվ արգելքներ:

Բայց հայ ոգին չընկրկեց և ժողովուրդը չկորցրեց իր ապրելու կամքն ու հարության հույսը: Նա նաև ոտքի կանգնեց պաշտպանելու սեփական տունն ու պատիվը, անհավասար գոռ մարտեր մղվեցին Վանում, Ուրֆայում, Շապին Գարահիսարում, Մուսա լեռան վրա, Սասունում, Զեյթունում և բազում այլ վայրերում: Այդ մարտերը ճգնաժամային եղան և բազմազոհ, բայց 1918 թ. մայիսի 22-ից—26-ին պսակվեցին Սարդարապատի հաղթական փառքով, որտեղ ինչպես Էդվարդաս Մեժելայտիսն է ասում.

«Եվ նա, ով մահն էր բերում հայերի,
Ինքը գալարվեց մահվան սև ճահճում»:

Սարդարապատով, ինչպես Ավարայրով, հայ ժողովուրդը իր կամքն ու գոյությունը պարտադրեց թշնամուն: Եվ այս էլ քանիերորդ անգամ մոխիրից հառնեց Հայոց երկիրը, դարձավ պետություն և բռնեց վերելքի և ստեղծագործական ինքնանորոգման ուղին: Ավարտված էր Առաջին համաշխարհային պատերազմը և պատերազմի մասնակիցները կլոր սեղանի շուրջ շարունակում էին դիվանագիտական խաղերը, սակայն Թուրքիան չէր հրաժարվել իր նպատակներից և շարունակում էր ռազմական ճնշումը Հայաստանի վրա: Բայց 1920 թվականի նոյեմբերին Հայաստանը՝ իր մի բուռ արյունաքամ ժողովրդով և բռի մեջ սեղմվող տարածությամբ ռուս մեծ ժողովրդի օգնությամբ սովետականացավ և միանգամ ընդմիշտ ի դերև հանեց թշնամու ձգտումներն ու հույսերը:

Յուրաքանչյուր պատմական տարեթվի ոգեկոչում իմաստ կունենա միայն այն դեպքում, եթե ժողովուրդը կարողանա ընդհանրացումներ կատարել՝ գնահատել ու իր պատմական անցյալը և կանխորոշելու իր ապագան: Այսօր, այս սրբական Աթոռի դարավոր կամարների տակ հավաքված ենք ոգեկոչելու մեր երկու միլիոն կոհերի հիշատակը: Ի՞նչ ընդհանրացումներ կարելի է մակաբերել պատմական այդ իրավիճակից.

Ա. Ցեղասպանությունը ծրագրված ոճիր էր և իրագործվեց հետևողականորեն: Սակայն դա անհատի կամ մոլեռանդ մի խմբի մտագարություն չէր, այլ իրագործվեց վանգվածների կողմից, որոնց ներարկեցին ահավոր մի ատելություն հայ ստեղծարար ժողովրդի նկատմամբ: Վաղուց հայտնի ճշմարտություն է, որ «Յուրաքանչյուր ժողովուրդ տերն է իրեն արժանի կառավարության»: Այնպես որ պատասխանատու է ոչ միայն այդ օրերի Թուրքիան, այլ նաև վաղվա Թուրքիան, քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիան ցույց տվեց, որ հայ ժողովրդի և Հայաստանի նկատմամբ իր թշնամանքն ու ձգտումները կենդանի են և նա չի փախցնելու ամենադույն առիթը, հաշվեհարդար տեսնելու մնացյալ հայության և Հայաստանի հետ. Գորշ գայլը Ստալինգրադի անկմանն էր սպասում՝ իր վճռական ցատկը կատարելու համար:

Բ. Ուրեմն ըստ այնմ պետք է գնահատել մեր այսօրվա և վաղվա խնդիրները: Կա երկատված հայություն, հակընթաց կենսունակությամբ. եթե Խորհրդային Հայաստանի մեջ յուրաքանչյուր արևածագ իր հետ բերում է նորանոր նվաճումներ, այստեղ մենք իբրև ազգ և մշակույթ ինքնահաստատման ապառաժ ենք կռում, ժամանակակից առաջընթաց արդյունաբերությամբ, հողային և կլիմայական դժվար պայմաններում հաջողապես իրագործվող գյուղատնտեսությամբ, ազգային ինքնատիպ արվեստով, առաջավորի և հարաճուն գիտությամբ՝ ակադեմիայով և բազմաթիվ գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատություններով, բարեկարգ և կենսախինդ քաղաքներով ու գյուղերով և վերջապես օրավուր աճող և լավատեսությամբ ու հավատքով ապագային նայող բնակչությամբ, ապա Սփյուռքի ողջ տարածքում ինքնակալման և ազգային հյուծման ընթացք է, և հայապահպանությունը դարձել է ամենամեծ հրամայականը: Բարեբախտաբար Սփյուռքը վաղուց թոթափել է որբության և տնտեսական խեղճության վիճակը և այս նոր պայմաններում պետք է կարողանալ վերացնել այսպես կոչված «Ներքին», բայց ըստ էության «արտաքինից» թելադրվող երկպառակությունները, և աշխարհին ներկայանալ միասնական պահանջկոտությամբ: Ինչպես Վազգեն Ա Վեհափառ Հայրապետն է ընդգծում Իր ապրիլյան սրբատառ Կոնդակում, այսօր ավելի քան երբեք մենք պետք է հանդես գանք «միակամ ու միամարտ գործակցությամբ՝ սուրբ պահելու նրանց հիշատակը և հավատարիմ մնալու նրանց ուխտին, նրանց երազանքին՝ հայ ազգը հայայն մեկտեղված ու հայոց երկիրը ամբողջացած տեսնելու»: Սփյուռքի որոշ հոսանքներ այս օրերին հրապարակված որոշ կոչերում ժողովրդին դիմում են այնպես, կարծես չկա նորօրյան Հայաստանը՝ իր մոտ երեք ու կես միլիոն բնակչությամբ, զարգացած մշակույթով, առաջընթաց արդյունաբերությամբ, և, որ ամենակարևորն է, եղբայրական միաս-

նությամբ ամրապես ապահովված սահմաններով:

Խորհրդային Հայաստանի գոյության փաստը պետք է ազգային վճռականության և համախմբման հիմք դառնա, անկախ գաղափարական տարամտությունից, որովհետև **այստեղ,** և **միայն այստեղ** մենք կարող ենք ամրակայել ազգային միասնականությունը՝ ապագա բոլոր հնարավոր բարեշրջություններին ի խնդիր: Մեր ժողովուրդը անհայրենիք չէ, թող թե կիսված և փոքրիկ: Առողջ և սթափ հայրենասիրությունը պահանջում է բարձրանալ հատվածական շահերից, ձգտել համահայկական, համազգային նպատակների, որոնց իրագործման կորիզը, օրինաչափորեն, պետք է դառնա Խորհրդային Հայաստանը:

Որքան այժմեական են հնչում Ստեփան Ոսկանի դեռևս 1862 թվականին գրած բառերը. «Հայ անուն, հայ սիրտ ունեցողը մեր եղբայրն է: Հայաստանը, իր հայրենիքը սիրողը մեր բարեկամն է, մեր դաշնակիցն է... Հայաստանը պիտի ըլլայ մեր միութեան կեդրոնը, Հայաստանը պիտի ըլլայ մեր բոլոր ուխտերուն նպատակը, մեր միակ փրկութիւնը» »:

Բանախոսությունից հետո Տ. Թորգոմ վարդապետ Խարպլանը ընթերցում է Ապրիլյան եղեռնի 70-ամյակին նվիրված Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը:

Կոնդակի ընթերցումից հետո Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլապալյանը ամբիոն է հրավիրում Վեհափառ Հայրապետին՝ ասելու Իր օրհնության խոսքը.

«Հոգեկան մեծ մխիթարություն է ինձ համար, և բոլորիս համար, կարծում եմ, որ Ապրիլյան ցեղասպանության 70-րդ տարելիցը մենք նշում ենք այստեղ՝ Հայաստանում, Ս. Էջմիածնում՝ խաղաղ, ապահով ու ազգային-հայրենասիրական շինարար առաջադիմության ճանապարհի վրա:

Ես հիշում եմ, որ անցյալում միշտ չէ, որ այսպես նշվել է այս տարեթիվը: Հիշում եմ Ռումինիայում՝ իմ պատանեկության և երիտասարդության տարիներից՝ 50—55 տարի առաջ, հայերը Բուխարեստում հավաքվում էին եկեղեցի, ուր տեղի էր ունենում ս. պատարագ, հոգեհանգիստ, որից հետո փակվում էր եկեղեցու վարագույրը և սկսում էր սգո նիստը: Նիստում ելույթներ էին ունենում հասարակական գործիչներ՝ հայ, երբեմն էլ հրավիրվում էին օտար բանախոսներ՝ իրենց մխիթարական խոսքերն ասելու հայ ժողովրդին: Այդ օրերին ապրիլի 24-ը միայն ողբի և կոծի օր էր: Ես հիշում եմ, թե ինչպես ներկաներից շատերը՝ մանավանդ կանայք լաց էին լինում: Բնական էր այդ լացը՝ երկու պատճառով: Նախ, որովհետև շատ թարմ էր վիշտը և այդ լացողներից շատերը աքսորի սև տարիներին կորցրած հարազատներ ունեին և իրենք վերապրողներ էին: Երկրորդ, օտար երկնքի տակ այնքան էլ՝ ազգային տեսակետով մխիթարվելու հիմքեր, տվյալներ չունեին: Այդ տարիներին Հայաստանը հեռավոր, անծանոթ և գրեթե մոռացված երկիր էր: Համատարած հուսահատություն էր և ողբ:

Այսօր ապրիլի 24-ը, իհարկե ուրախության օր չէ, բայց, կարծում եմ, որ այլևս լացի ու կոծի օր չէ: Մեր օրերին, թե այստեղ, թե արտասահմանում բոլոր հայերի համար ապրիլի 24-ը ա՛յո, տխրության և ծանր հիշատակների վերապրումի օր է, բայց նաև մեր ժողովրդի իրական վերածնունդով մխիթարվելու օր է, մանավանդ մայր հայրենիքում ապրողներիս համար: Ինչպես իմ կոնդակում ասել եմ, մեր այսօրվա վերածնված ու ծաղկող Մայր Հայաստանը երեք և ավելի միլիոն բնակչությամբ, բոլոր հայերիս համար ամենամեծ և անփոխարինելի մխիթարությունն է և ամենաշքեղ ու մնայուն հուշարձանը՝ նվիրված նահատակների հիշատակին:

Ուզում եմ մեկ թարմ պարագա հիշել ձեր ներկայությամբ՝ խորհրդանշելու համար մեր վերածնունդի, լավատեսության և ինքնավստահության ապրումը: Ինչ-որ չար պատահարի հետևանքով հրկիզվեց Երևանում նոր կառուցված համալիրը: Եվ, ինչպես գիտեք, մեր ժողովրդի վրա, մի տեսակ, ճնշող տխրության զգացում իջավ: Բայց այդ կարճ տևեց, որովհետև մի քանի օր անց մեր հայրենի կառավարությունը որոշեց այդ համալիրը վերականգնել, վերաշինել, և մեր երկրի առաջին դեկավարը հայտարարեց, որ կարճ ժամանակամիջոցում կվերականգնվի համալիրը՝ ավելի շքեղ, քան առաջ: Կարծում եմ, որ այս պարագան խորհրդանշում է այն իրողությունը, այն զգացումը, որի մասին ես խոսեցի: Եվ ես պիտի ավելացնեի, պատիվ մեր հայրենի կառավարության և շինարար ժողովրդին, որ այսպես է հարգում հիշատակը մեր բյուրավոր նահատակների:

Մենք այս օրերին մխիթարված ենք նաև, որ մեր ժողովրդի զավակների հետ միասին, եղբայրական, բարեկամ ժողովուրդների ներկայացուցիչներ վշտակցում են մեզ հետ և ցավակից են լինում մեր անցյալի ողբերգություններին: Դա նույնպես մեզ համար մխիթարական է:

Եղեռնի յոթանասունամյակի առիթով քանի ամիս առաջ գրավոր կոչեր ուղարկեցի մի շարք Եկեղեցիների պետերի՝ հրավիրելով, որ իրենք ևս՝ մասնակցեն մեր ազգի մեծ սուգին: Ստացա սքանչելի պատասխաններ, որոնցից ուզում եմ նշել երեք

պատասխանները՝ ա. Ռուս Պրավոսլավ Եկեղեցու պետ Պիմեն Սրբազան Պատրիարքից, բ. Քենթրբերիի Գերաշնորհ Արքեպիսկոպոսից, և գ. Հռոմի Սրբազան Պապից:

Ուրիշ երկրներում, նույնպես, մենք բազում այլազգի բարեկամներ ունենք՝ մտավորականներ և պետական պատասխանատու անձինք: Այդ շարքում առաջին տեղն է գրավում Ֆրանսիան: Հատկապես ուզում եմ հիշել Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ Ժոզեֆ Ֆրանչեսկին, որը պետք է հիմա այստեղ լիներ, բայց իր կամքից անկախ պատճառներով չկարողացավ գալ և իր փոխարեն եկել է իր տեղակալը՝ իր աջ բազուկը, հայազգի տիար Արման Նշանյանը:

Առանց չափազանցնելու, կարծում եմ, որ Ալֆորվիլ քաղաքը ամբողջ երկրագունդի վրա՝ դեպի մեր երկիրն ու մեր ժողովուրդը ունեցած բարեկամական տեսակետից առանձին տեղ է գրավում: Ժոզեֆ Ֆրանչեսկին քսան տարի շարունակ Ալֆորվիլի քաղաքապետն է, շատ սիրված ու հարգված իր ժողովրդի կողմից: Ալֆորվիլը Փարիզի արվարձաններից է և ունի 40 հազար բնակչություն, որի 6—7 հազարը հայեր են: Պարոն Ժոզեֆ Ֆրանչեսկին իսկապես հայասեր մարդ է: Դրա վառ ապացույցներից մեկը այն է, որ իր քաղաքի մեջ չորս փողոցներից մեկը անվանել է «Արմենիա», մյուսը՝ «Կոմիտաս», երրորդը՝ «Ապրիլի 24», չորրորդ փողոցն էլ՝ «Վազգեն կաթողիկոս»»:

Ապա Վեհափառ Հայրապետը հրավիրում է տիար Արման Նշանյանին՝ իր սրտի խոսքը ասելու օրվա առթիվ:

Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքից հետո ամբիոն է հրավիրվում հարգարժան տիար Արման Նշանյանը, որը դահլիճում հավաքվածներին է հաղորդում Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետ մեծահարգ տիար Ժոզեֆ Ֆանչեսկիի ողջույնները: «Ժոզեֆ Ֆանչեսկին,—ասում է տիար Ա. Նշանյանը,—շատ կցանկար այսօր այստեղ ըլլալ՝ մեզ հետ աղոթելու համար մեր եղբայրներու ու քույրերու անմեղ հոգիներու հանգստության համար:

Առաջին այցելությունս է Հայաստան, և կվախնայի, որ հուսախաբ ըլլամ: Նախապաշարումս սխալ է. ես չափազանց ուրախ եմ ու խանդավառված: Խանդավառված՝ երբ կտեսնեմ հավատացյալներու բազմությունը, որ հարգանքով ու վստահությամբ կը-շրջապատե Ձեզ, Վեհափառ Տեր: Խանդավառված՝ երբ կտեսնեմ մեր պատմության հրաշալիքները կանգուն ու վերանորոգված: Խանդավառված՝ երբ կտեսնեմ, որ մեր ժողովուրդը այս հրաշալի և խաղաղած հողի վրա նոր կյանք կկառուցե: Խանդավառված՝ երբ կտեսնեմ տեղի հայության ջերմ ու անմիջական հյուրընկալությունը՝ հավատարիմ մեր հերոսներուն, հավատարիմ մեր մարտիրոսներուն, մեր անցյալին, կապրին՝ աչքերը դեպի ապագան հառած: Եթե 20 տարի վաղ կհամարեի Ալֆորվիլի հայերու սպասարկող, այժմ վաղ պարտական ու ծառան կկգամ մեր հավատքին և մեր ժողովուրդին: Կթվի, թե հիմա այլևս դյուրին պիտի ըլլա Ֆրանսայի մեջ բոլոր հայերու հույսի բանբերը ըլլալ:

Երախտապարտ եմ, Վեհափառ Տեր, Ձեր այդքան ազնվության, ջերմ ու հայրական հյուրընկալության համար»:

Տիար Ա. Նշանյանի խոսքից հետո հայտարարվում է փոքրիկ դադար, որից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական մասը:

Հոգևոր ճեմարանի ուսանողների խմբական արտասանությամբ սկսվում է հանդեսի համերգային ծրագիրը: Նրանք հատվածներ են արտասանում Պարույր Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմից:

Ներկաներին Կոմիտասյան անմահ երաժշտությամբ հիացնում է Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ Կոմիտասի անվան պետական լարային քառյակը: Ապա Հանրապետության ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դափնեկիր Վարդուհի Վարդերեսյանը արտասանում է Միամանթոյի «Հույսին համար» և Պարույր Սևակի «Մենք քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունները:

Մայր տաճարի երգչախմբի մեներգչուհի Արաքսյա Դավթյանը կատարում է Կոմիտաս վարդապետի «Կռունկ» և «Օրորոցային» տոհմիկ երգերը:

Հանդիսությունն ավարտվում է Մայր տաճարի քառաձայն երգչախմբի (գեղարվեստական ղեկավար Հայկական ՍՍՀ վաստակավոր արտիստ Խորեն Մեյխանեջյան) ելույթով: Երգչախումբը կատարեց Ալ. Հարությունյանի «Գթա Տեր» և «Հայրենիքիս հետ» ստեղծագործությունները, Կոմիտաս վարդապետի «Սուրբ սուրբ»-ը:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ՀԱՅՈՑ ԴԱՆԹԵԱԿԱՆԸ» ՊՈԵՄԻՑ

Ով աստվածային դժոխքի Դանթե,
Թե թափառում ես դու դեռ դժոխքում,
Թե հիանում ես դեռ մահով, կամ թե
Քավարանն ի վեր քո մեղքն ես քավում
Կամ թե լուսաթև քո Բեատրիչեն
Դեպի դրախտ է քեզ առաջնորդում
Եվ կամ նրա հետ ճախրում ես արդեն
Քո աստվածության կապույտ դրախտում,
Ուր էլ որ լինես, հորս հոգու պես,
Ուր էլ որ այժմ ճախրես դու անհոգ,
Իշիր մի վայրկյան, պաղատում եմ քեզ,
Իշիր, քեզ տանեմ այնպիսի դժոխք,
Որ դու մոռանաս դժոխքը երգիդ,
Որ Աստծո ճակտին անեծք խարանես
Եվ մահից խնդրես բալասան վերքիդ,
Իշիր, թե ունես դեռ լացող աչքեր՝
Կիսելու վիշտը մի կիսված ապգի:
Պաղատում էի այսպես գիշերով
Մասիսի առջև, կարոտով նրա,
Երբ որ լուսաթև մի ամպ հուշերով
Անշշուկ իջավ իմ լեռան վրա
Եվ ինքը դանդաղ հալվեց վերստին՝
Իմ դեմ թողնելով Դանթեին անձայն:
Նա դափնեպսակ ուներ ճակատին
Եվ աչքերի մեջ ժպիտ հարցական,
Խոսքի հետքն անգամ չկար շրթունքին,
Բայց ես կարդացի հայացքն հայրական,
Երբ գրկեց գլուխս ու ապշեց լռին՝
Ձերմակ տեսնելով մանուկ մակերիս.
—Օ, գնանք, հայր իմ, բանամ քո առջև
Ձերմակ մակերիս գաղտնիքները սև,
Օ, գնանք, հայր իմ, որ աչքով տեսնես,
Ինչ որ չես տեսել Աստծո դժոխքում,
Մարդկային վշտի ձևերը պես-պես
Զարմանատեսիլ ու քրստմնամեծ:
Կտեսնես, որ քո դժոխքն էլ չուներ,
Անմեղ դժոխքն էլ քո աստվածաստեղծ:
Հայտնվեք և դուք, ով հայ անմահներ,
Իշեք, թե իրավ անմահ է հոգին,
Դու, արև Մաշտոց, գեթ ստվերդ բեր,
Քո ուրվականն էլ մահ է մողոգին,
Հայտնվիր և դու, մեծ Նարեկացի,
Ով աստվածապեղ, մռնչա և դու,
Դու, որ բուրվառն ես մեծ առեղծվածի,
Որ կշռում էիր մեղքերը մարդու,
Աստծո պես էիր Աստծո հետ խոսում,
Իշիր, որ ապգիդ վիշտն էլ կշռես
Կոտորածների լաբիրինթոսում,
Մեղքից կարհուրած՝ ոխդ բուրվառես՝
Ահեղ դատաստանն աշխարհ բերելով,
Ուր մեղքն անպատիժ ու դեռ վիշտն է ծով:
Լուռ պաղատեցի ես վերջին անգամ
Մասիսի առջև իմ պառնասալեռ:
Եվ իսկույն իջան մեր աստվածակարմ
Հայոց մեծերի ոգիներն անմեռ՝
Վաթսուն անմահներն իմ Հայաստանի:
Եվ Դանթեն շիկնեց որպես պատանի,
Երբ Նարեկացին ասաց՝ «Իմ որդյակ,
Դժոխքն այնտեղ է, ուր պիտի գնանք,
Ուր այս մանուկը մեկ կառաջնորդե,
Ուր աչքեդ պիտի Հորդանան հորդե»:
Ու ճամփա ընկանք մենք ոգելռին
Դեպի եղեռնի դժոխքն ահարկու,
Ու լոկ աստղերը մեկ ճամփու դրին
Որպես աչքերը հայոց Աստծու:
Լիալուսինը Զանգրի ձորի
Աչքերն էր թարթում որպես ահապանգ,
Երբ սուրբ անեծքով մեր հայոց խորին
Եղեռնադժոխք Դեր-Զորին հասանք:
Սարսափն էր սառել լուսնի աչքերին,
Նրանից, ինչ-որ մենք հետո տեսանք:
Ու գնում էինք մենք էլ ախ առած,
Հոգեհանգստի բուրվառներ դառած,
Ու ԿՈՄԻՏԱՍԸ ապշած աչքերով
Թարթիչների պես շուրթերը թարթում,
Տեր ողորմյայի խոսքի խունկերով

Հոգեհանգիստ էր վոհերին կարդում:
Եղե՛ռն: Ի՞նչ Ապրիլ: Այս ի՞նչ գարուն է,
Հայ ժողովրդի սիրտը արյուն է.
Այս ի՞նչ արյուն է, Տեր իմ, ողորմյա,
Մեղա աչքերիս, որ տեսա, մեղա,
Տեսնելն էլ մեղք է, ուր մնաց գործել.
Վաթսուն հապար գյուղ, թե՛ մանուկ, թե՛ ծեր,
Մորթեցին: Աստծո սիրտն էլ կդողա,
Անձրևից անգամ արյուն կցողա:
Ամպը Դեր-Զորի իմ հայ վոհերի
Արյունն է խմել բերանով չարի,
Արյուն կխաղե աշխարհի վրա
Իմ արցունքի քույր անձրևն էլ նրա:
Ու կարհուրաբիբ աչքերը թարթում,
Հոգեհանգիստ էր վոհերին կարդում,
Դանթեադժոխք մեր ողջ ճամփեքին
Կարծես շիրիմ էր դնում ողջ ապգին,
Հոգեհանգիստ էր խնկարկում խոսքով
Առանց բուրվառի և առանց խունկի,
Աչքի բուրվառով, արցունքի խունկով
Մերթ մի գանգի դեմ գալիս էր ծունկի,
Մերթ մի դիակի առջև հառաչում,
Մերթ ողբում ինչպես տաճարն ավերված,
Մերթ մրմնջում էր, մերթ մռնչում,
Տեսնելով մանուկ ուղեղներ ցրված.
Կարծես ուղեղը մահիկ էր խրվում,
Նրա քայլ առ քայլ միտքն էր խաթարվում,
Կրծքի մսերն էր պոկում կայրագին,
Աչքերը կարծես դուրս էին թռչում,
Կարծես ուղեղը խարանում էին,
Խելահեղվոռ էր, մերթ համր մռնչում,
Գալիս էր ապշյալ աչքը վոհերին:



ՀԱՏՎԱԾ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ «ՌԵՔՎԻԵՄ» ՊՈԵՄԻՑ

Աշխարհում՝ անթիվ գերեզմանոցներ,
Անթիվ շիրիմներ՝ հողագունդն ի վար...
Եվ սակայն շիրիմն իմ ժողովրդի,
Իմ մի բուռ, փոքրիկ իմ ժողովրդի
Ամենամեծն է
Աշխարհում արար...

Դեր-Զորի քամին
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել
Եվ արշալույսի խաղաղության մեջ
Սուլում էր մահվան անմահ նվագներ:
Սուլում էր, հուշում,
Որ ավազի տակ
Մի կարմիր կանաչ
Ու մի կապուտակ
Երակ կա թաղված...
Եվ անապատը,
Որ հսկա ու փակ
Մեռյալի կոպ էր թվում իմ աչքին,
Շարժվում էր ասես
Ու այն կապուտակ,
Այն կարմիր կանաչ
Երակն էր ցոլում...

...Հետո գիշերը կանգնել էի ես
Եփրատի դաժան կամուրջի վրա:

Լուսինը ելավ:
Անապատային կարմիր մի լուսին:
Կարմիր լուսնի տակ
Եփրատը կարմիր ցոլանք էր տալիս,
Ու թվում էր ինձ,
Թե երակն է նա,
Բացված երակն է
Հայոց աշխարհիս:
Կանգնել էի ես:

Սպիտակ հագած մի բարակ աղջիկ
Եփրատի դաժան կամուրջի վրա
Եվ լուսնկայի անուրջի վրա
«Սուրբ-սուրբ» էր երգում:
«Սուրբ-սուրբ»-ը՝ սարսուռ,
«Սուրբ-սուրբ»-ը՝ ոգի,
«Սուրբ-սուրբ»-ը՝ լույսը
Անմահ մորմոքի,
«Սուրբ-սուրբ»-ը՝ կարոտ
Ու վերին թախիծ,
«Սուրբ-սուրբ»-ը հյուսված
Կիրակնալույսից ու մթնշաղից,
Հյուսված արցունքից
Ու խնկաբույրից,
Պոկված դեղձենուց,
Լեռան աղբյուրից,
Պոկված մայր հողի բացված երակից,
Զոհասեղանի կապույտ կրակից,
Մեր անդունդների խորացումներից,
Մեր կատարների ցոլացումներից...
«Սուրբ-սուրբ» էր երգում:
Լսում էր, լսում Եփրատը լռած
Ու հետո ասես ինչ-որ բան հիշում
Ու հայերեն էր Եփրատը խշշում:

«Սուրբ-սուրբ» էր երգում...
Ու տիեզերքում
Լռություն էր խոր:
Ու «Սուրբ-սուրբ»-ի մեջ
Իմ հայրենիքն էր ցոլում հեռավոր:

Լեռները կապույտ
Ու թանձր կապույտ ալիքներ տալով,
Ծփում են, ծփում ու չեն քարանում,
Տիեզերական զրնգուն ու զով
Մի լռություն է այդ վեհարանում:
Արարատ լեռը անհունին թիկնել,
Ցոլքեր է նետում ձյան ու սառույցի,
Կատարի ամպը արևից ջիկնել
Ու բաշ է դարձել քնած առյուծի:
Իսկ այնտեղ՝ ցածում,
Ապրիլ է նորից...
Ձնհալը լացել,
Խենթացել,
Անցել,
Հետքից թողել է փրփուրը ծաղկի...
Ցոլանքների մեջ արևածագի
Մեղվի
Ու ծաղկի
Ներդաշնակությունն է քաղցրորեն զնգում,
Դաշտը ծայրեծայր այրվում է քնքուշ,
Դաշտը ծայրեծայր հեղեղ է ծաղկի,
Հրդեհ է ծաղկի,
Ծաղկի ծով է ծուփ,
Ծաղկի զրնգոց...

Ապրիլը դաշտից առել կայծ ու բոց,
Լեռներն է ելել
Ու լեռներն ի վեր
Վառել մասրենու վայրենի թփեր,
Վառել կակաչներ ու հորոտ-մորոտ,
Զանգակածաղկի ծիծաղն արևոտ
Եվ հրաշքներ է վառել անանուն,
Իսկ հավերժության կապույտ սահմանում
Վառել է ահա՝
Հարության նման
Հրեղեն ու բորբ
Մի ցայգածաղիկ...
Ախ, իմ հայրենիք,
Անապատները նետեցին վրադ,
Որ դու չծաղկես...
Ու հիմա հեռվից,
Այս անապատից
Նայում եմ ես քեզ,
Ես քեզ եմ նայում, իմ հին տառապանք,
Ես քեզ եմ նայում, դարավոր իմ խաչ,
Եվ մահվան մթին այս անապատում
Ես ծնկաչոք եմ
Քո ծաղկի առաջ...





ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ

ՀԱՏՎԱԾ «ԱՐԱՐԱՏԻ ՀԱՆԴԵՊ» ՇԱՐՔԻ «ՔԱՐԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԻՑ

Ես, որ քար էի,
Արյունոտվեցի,
Խաղացի մի դեր, որ ողջ աշխարհում
Դեռ չէր վիճակվել խաղալ ոչ մեկին:
Եվ հեղինակն այդ սև ողբերգության
Հանճարեղ էր, քան Չինգիզխանն ինքը...
Եվ հեղինակն այդ սև ողբերգության,
Որի անունն է «ցեղասպանություն»,
Սուպեր դահիճն էր,
Եվ նույն ժամանակ
Սուպերճորտն էր նա իր նյութած մահվան...
Եվ թող դարեդար անիծված լինի...

Եվ ես մնացի այդպես արյունոտ,
Եվ ես մնացի այդպես բկկտված,
Եվ ես մնացի այդպես ցիրուցան,
Սակայն մնացի,
Սակայն մնացի...

Զայնով մայրերի ու մանուկների,
Սերմնացանների, բանաստեղծների,
Ես անիծեցի ցեղասպաններին,
Ես ատամներս սեղմեցի ամուր,
Ամուր, շատ ամուր ու դարձա ամուր,
Առավել ամուր, քան էի առաջ:
Եվ իմ քնարի քաղցր մեղեդին
Վերածվեց քարե ահեղ մեղեդու,
Ու երգում եմ ես.

Քար է ոգիս
Ու կամքս՝ քար,
Պիտի ապրեմ
Ես դարեդար...

Ողջ աշխարհում քիչ կան պատեր,
Որ նմանվեն ոգուս պատին,
Ես հույսով-եմ նայում անվերջ
Իմ սրբազան Արարատին:

Թեև բախտն իմ շատ էր դաժան,
Բայց մնացել եմ ես անեղծ.
Քանզի քար եմ ես անսասան,
Քանզի քար եմ և բանաստեղծ...



ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ԱՌՋԵՎ

Ես այսօր տեսա ավերակները,
Ավերակները մեր հին Անիի
Սիրտս ու հոգիս ավերակ դարձան,
Թրջվեցին աչքերս արցունքով աղի:

Ես այսօր տեսա արցունքոտ քարեր
Ու տեսա քարեր տառապանքով լի.
Ես տեսա արյուն, ես տեսա ավեր
Ու հեծկլտում էր հողը Անիի:

Անին մոտ էր ինձ ու այնքան հեռու,
Անին՝ արցունքոտ, Անին՝ սգավոր,
Աչքով ես միայն գրկեցի Անին,
Շղթայված էին ճամփեքը բոլոր:

Անին վիրավոր կռունկի նման,
Փռվել էր գետին, ողբում էր ասես,
Անին՝ մայր լքված ու անօգնական,
Որդոց աչքի մեջ, երկնի պես անհաս:

Իրիկնանում էր: Նիրհում էր Անին,
Նիրհում էր, ասես, հողը դարավոր,
Իսկ ես որբացած, իսկ ես վշտահար,
Աչք չէի կտրում հողից մենավոր...

ԱՆԻԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԽՇԿՈՆՔԻ ՎԱՆՔԸ, 1905 Թ.



ԽՇԿՈՆՔԻ ՎԱՆՔԸ, 1980 Թ.



ԱՆՊԱՐՏԵԼԻ ԿԱՄՔՈՎ ԵՎ ԳՈՅԱՏԵՎԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

70 տարի առաջ քաղաքակրթության դահիճները ձեռնամուխ եղան իր աստվածաշնչական հողում ծվարած մի հին, մի հաշտ ժողովրդի բնաջնջման հրեշավոր գործին: Առաջին համաշխարհային պատերազմը հայասպան ծրագիրն իրագործելու ամենահարմար միջոցային իրադրությունն էր ստեղծել բիրտ օսմանցիների համար:

ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին եվրոպական տերությունների խոստումները վարդագույն հույսեր էին հուշում դարեր շարունակ պատմության կեռմաններում դառնության բաժակը ցմրուր ըմպած հայ ժողովրդին: Սակայն մեծ տերությունները շատ շուտ մոռացան տրված խոստումները. նրանք իրենց հաշիվներն ունեին, ինչ փույթ, որ դրանց հորձանուտում կնահատակվեր ամբողջ մի ժողովուրդ, միակը, որ ոչ մի մեղք չուներ վերահաս պատերազմի սանձազերծման գործում:

Տերությունների հակասությունները հանգեցրին թնդանոթների որոտին, որը ճակատագրական դարձավ հայ ժողովրդի համար: Երկու մրցակից խմբակցությունների միջև 1914 թ. օգոստոսի 1-ին պայթեց համաշխարհային առաջին պատերազմը՝ աշխարհի վերաբաժանման, գաղութային թալանի, ժողովուրդների ստրկացման ու կեղեքման համար: Պատերազմի սանձազերծման գլխավոր հանցագործը կայզերական Գերմանիան էր: Մեղսակից էին նաև Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, ցարական Ռուսաստանը, Ճապոնիան, Թուրքիան և ուրիշ երկրներ:

Պատերազմը ապատ արձակեց թուրք ղեկավարության ոճրապարտ ձեռքերը՝ հայ ժողովրդի հառաջը արյան ճապաղիքների մեջ խեղդելու համար: Ներկայացած առիթը ավելի քան հարմար էր: Անօգնական մնացած հայության ճիչը խլացավ հրանոթների որոտից:

Սկսված համաշխարհային պատերազմը առարկայական հիմք դարձավ իրականացնելու ժամանակակից ամենադժնի ցեղասպանությունը «քաղաքակիրթ» մարդկության անտարբեր աչքերի առաջ: Առարկայական հանգամանքները ծնունդ տվեցին և ոճրագործների՝ Թալեաթ, Էնվեր, Ջամալ, Նազիմ բեյ:

Ահավոր այդ կուգադրումը հանգեց 1915 թ. հայոց Մեծ եղեռնին: Դեռ շատ վաղուց թուրքերի գերիշխանության տակ գտնվող հայն անապահով էր իր պապենական դարավոր հարկի տակ: Արևմտահայության տառապալից կյանքում կոտորածներն առօրյա երևույթներ էին: Դրությունը սակայն առավել աղետալի դարձավ ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին՝ արյունախում Սուլթան Համիդի օրոք, որը հայության հանդեպ իր ունեցած ամենաանհեթեթ կասկածն անգամ փորձում էր փարատել կոտորածներով: Դրա պերճախոս վկայությունը Սասունի և Ադանայի կոտորածներն էին:

1890-ական թթ. կոտորածներ եղան նաև Պոլսում, Ուրֆայում, Կարինում, Շապին-Գարահիսարում, Ակնում, Մալաթիայում, Արաբկիրում, Սեբաստիայում, Մարաշում, Տիգրանակերտում, Այնթապում, և այլ քաղաքներում: Քաղաք-անունների այս թվարկումից իսկ պարզ է, որ ամբողջ Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում գրեթե չմնաց հայաբնակ և ոչ մի վայր, որտեղ չթափվեր անմեղ հայի արյունը: Այդ կոտորածներին զոհ գնաց մոտ 300 հազար հայ: Կսկիծը մեծ էր: Այստեղ մարտիրոսացած բանաստեղծի կարկամած շրթունքները մրմնջում էին՝ «Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ, քաղաքներեն ներս և քաղաքներեն դուրս»:

Արյունոտ Սուլթանի նպատակը պարզ էր՝ օսմանավարի, հրի ու սրի միջոցով լուծել հայկական հարցը: Անլուր կեղեքումներից և ի սպառ բնաջնջումից փրկվելու համար հայերը հաճախ ստիպված էին դիմել ինքնապաշտպանության: 1890-ական թվականներին ինքնապաշտպանության փայլուն օրի-



Սիամանթոն և Ավետիք Իսահակյանը

նակ տվեցին արծվաբույն Զեյթունի քաջարի բնակիչները: Ավելի քան երկու ամիս մի բուռ զեյթունցիներ դյուցազնական մարտեր մղեցին թուրքական տասնապատիկ ուժերի դեմ, ամեն տեսակ կրկանքներ կրեցին, բայց մնացին անընկճելի. «եղեգները չխոնարհվեցին»:

Զեյթունի օրինակին հետևեց Վանը: Ինք-



Սիամանթոյի նամակը

նապաշտպանական մարտեր տեղի ունեցան Սվեդիայում, Տիգրանակերտում և այլուր: Այդ անհավասար, անհունորեն ծանր պայքարի ընթացքում ծնվեցին ժողովրդական հերոսներ Անդրանիկը և բազում ուրիշներ, որոնց հիշատակը խնկելի է մեկ համար այսօր:

Բայց ավաղ, ուժերը շատ էին անհավասար. հայ ժողովուրդը աստիճանաբար հյուծվում էր և արյունաքամ լինում: Այսուհանդերձ, պարբերաբար կազմակերպվող հայկական կոտորածները չէին տալիս թուրք համաձուլարարների ակնկալած արդյունքները, քանի որ աշխատասեր և ստեղծագործ հայ ժողովուրդը, կապված լինելով իր պապենական հողին, ամեն անգամ փյունիկի

նման վերածնվում էր ու վերակենդանանում, հանուր աշխարհին ապդարարելով գոյատևելու, ապրելու իր իրավունքը:

Վիկտոր Հյուգոն, նկարագրելով Հունաստանում 1821 թ. թուրք հրոսակների գործած ավերածությունները, «Հույն Մանուկը» բանաստեղծության առաջին տողում գրում է. «Թուրքն է անցել այստեղից», ամեն ինչ հասկանալի է. նշանակում է՝ իկուր է այստեղ կյանքի նշույլ փնտրելը:

Այս բոլորը, սակայն, նսեմանում են 1915 թ. կարհուրելի եղեռնի առաջ, երբ սև ձյուն իջավ մեր Մասիսներին:

Համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիայում իշխանության գլուխ անցած իթթիհատական երիտթուրքերը դրժգոհ էին սուլթանական կարգերից: Նրանք դժգոհ էին համիդյան վարչակարգից ոչ թե նրա բռնակալական ոգու, այլ «մանր ջարդերով» սահմանափակվելու համար: Երիտթուրքերին չէին բավարարում մինչ այդ կազմակերպված պարբերական կոտորածները Արևմտյան Հայաստանում: Նրանք հղացան հայկական տարրը իսպառ բնաջնջելու դիվային ծրագիրը: Սուլթանի մեծ վեզիրը դեռևս 1870-ական թթ. գրում էր. «Ուստի հայերի բնաջնջման սուրբ նպատակին հասնելու համար պետք է, և պետական իրավունքը պահանջում է, որ արևէ կասկածելի տարր անհետ կորուստի մատնենք, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը պետք է վերացնել, անհետ անելու: Եվ այդ գլուխ բերելու համար մեզ ոչ մի բան չի պակսում. ամեն գործիք պատրաստ ունենք. կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ կհայտարարենք և դյուրին պատերազմ, այնպիսի մի ազգի դեմ, որ ոչ կենք ունի, ոչ զինվորություն»:

Սա պանթուրքիստական քաղաքականության նախերգանքներից մեկն էր:

Նույն ոճրապարտ մտքին հանգեցին իթթիհատական ղեկավարները 1915 թ. գումառած իրենց գաղտնի խորհրդակցությունում, որտեղ նրանց ղեկավարներից Նազիմ բեյը այդ ասպարեզում երիտթուրքերի վարելիք քաղաքականությունն ավելի որոշակի է ձևակերպել. «Եթե այս (իմա՝ հայերի) մաքրագործումը վերջնական և ընդհանուր պիտի չլինի, օգուտի տեղ վնաս է անպայման. ետք է, որ հայ ազգը արմատախիլ լինի, մեր հողին վրա մի հոգի անգամ չմնա, հայ անունը մոռացվի: Հիմա պատերազմի մեջ ենք, սրանից հարմար առիթ չի գտնվի, մեծ պետությանց միջամտությունը և թերթերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կարող լինել: Եթե նույնիսկ լինի, խնդիրը կատարված իրողություն կդառնա և կփակվի»: Ոչ թուրք ազգերի բնաջնջումը իթթիհատականները դիտում էին իբրև իրենց «նպատակը և ծրագիրը»:

1915 թ. ապրիլի 15-ին իթթիհատական կոմիտեն կազմեց հայերի զանգվածային տեղահանության ու ոչնչացման հետևյալ անողոք հրահանգը. «Որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի մեզ ընձեռած անկախությունից, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել այն, բնաջնջելով անհարազատ այդ տարրերը, քշելով նրանց դեպի Արաբիայի անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգի»:

Պակաս կարհուրելի չէր այդ հրահանգի շարունակությունը, որը հայրենիքի և կրոնի թշնամի էր համարում և գերագույն պատիժ սահմանում այն բոլոր թուրքերին, որոնք կխուսափեն հրամանը կատարելուց և թեկուզ մի հայի պաշտպանելու կամ պատսպարելու փորձ կանեն: Իթթիհատական եռյակի ստորագրությունը կրող այս սև հրահանգը անձնական բնույթի գրություն չէր, այլ պետական օրենքի ուժ ունեցող պաշտոնական կարգադրություն, հայ ժողովրդի ցեղաջնջումը նախապատրաստող նողկալի մի փաստաթուղթ:

Այս հրահանգից հետո սև եռյակը կազմում է անմիջական գործողության որոշակի ծրագիր, որի էությունը հետևյալն էր.

1) Փակել բոլոր հայ ընկերակցությունները, ձերբակալել նրանց ղեկավարներին և աքսորել Մուսուլի ու Բաղդադի շրջանները և ոչնչացնել ճանապարհին:

2) Որևէ դիմադրություն անհնարին դարձնելու համար նախապես հայերի մոտից հավաքել բոլոր տեսակի զենքերը:

3) Թուրք բնակչության մեջ բորբոքել իսլամի մոլուցքը:

4) Բնաջնջել 50 տարեկանից ցած հայ տղամարդկանց, իսկ երեխաներին պահել՝ իսլամացնելու համար:

5) Տարբեր պատրվակներով պետական բոլոր պաշտոններից հեռացնել հայ պաշտոնյաներին:

6) Թուրքական բանակում գտնվող հայերին ոչնչացնել:

7) Գործողություններն սկսել ամենուրեք միաժամանակ, որպեսզի հայերին հնարավորություն չտրվի ինքնապաշտպանության դիմելու:

8) Գործողությունների այս ծրագիրը պահել խիստ գաղտնի:

Սև-մութ ամպեր էին կուտակվում հայոց երկնակամարում: 1915 թ. ապրիլի 24: Գարնան կեսին ձյուն մաղվեց հայերի գլխին: «Գարուն ա, ձուն ա արել»; Արյունարբուկ

սկսեց իր նախճիրը: Գործի դրված պետական ահավոր մեքենան որոշել էր բոլոր միջոցներով սկզբից ևեթ անգլուխ թողնել արևմտահայությանը: Միայն պոլսահայ գաղութը զրկվեց ավելի քան 600 հայ մտավորականներից: Դահճի մոլեգնությանը զոհ գնաց Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի, Թլկատինցու, Երուխանի, Ռուբեն Զարդարյանի քանքարը: Հարվածի ահագնությանը չդիմացավ Կոմիտասյան հանճարը և... խախտվեց: Նույնիսկ երեսփոխանական անձեռնմխելիության իրավունքը չփրկեց Գրիգոր Զոհրապին, դոկտոր Տաղավարյանին, Վարդգեսին և մյուսներին:

Հայ մշակույթի այս ականավոր ներկայացուցիչներին թուրք ոստիկանները տարբեր ուղղություններով քշեցին աքսոր: Ճանապարհին նրանց գավանաբար հոշոտեցին:

Այդ օրերին քաղաքների հրապարակները կախաղանների անտառի վերածեցին:

Ապրիլի 24-ը աղետների սկիզբն էր միայն: Դրանով բացվում էր սարսափների այն ամբողջ շղթան, որ իթթիհատականները ջուտով շղթայազերծեցին: Երբ արդեն արևմտահայությունը գլխատված էր, զրկված իր ղեկավարներից, թուրք կառավարողները ձեռնամուխ եղան հայերի բնաջնջման հիմնական գործին, որի կարևորագույն օղակը հայերի տեղահանությունն էր և աքսորումը իրենց պապենական երկրից: Տեղահանությունն սկսելուց առաջ երիտթուրքերը անհրաժեշտ համարեցին հայերի մոտ եղած բոլոր տեսակի զենքերը հավաքել, հավանական որևէ դիմադրություն կանխելու համար: Այս գործողությունները ևս թուրք կառավարողները իրագործեցին անլուր խոշտանգումների միջոցով:

Արևմտահայության տեղահանության առերևույթ պատրվակը՝ Թուրքիայի սահմանամերձ գոտիներից հայկական տարրը հեռացնելն էր, իսկ դրա պաշտոնական նպատակ հայտարարվեց՝ Բաղդադի երկաթգծի կառուցման շրջանը բնակչությամբ և աշխատող ձեռքերով ապահովելը: Հայաբնակ բոլոր վայրերը համարվեցին սահմանամերձ... Տեղահանված հայերը չհասան Բաղդադի երկաթգծի կառուցման շրջանը, քանի որ Թալեաթը իր ստորադրյալներին և բոլոր պաշտոնյաներին հրամայել էր. «Հայերի համար Թուրքիայի հողի վրա ապրելու և աշխատելու իրավունքը ամբողջովին ջնջված է: Կառավարությունը, ստանձնելով ամբողջ պատասխանատվությունը, հրամայում է՝ չխնայել նույնիսկ օրորոցի մանուկներին»:

Իրենց բնակավայրերից տեղահանվեցին և խումբ առ խումբ դեպի արաբական անապատները քշվեցին ավելի քան երկու միլիոն հայ: Տեղահանվածները ճանապարհին ենթարկվում էին քստմնելի խոշտանգումների: Պակասը լրացնում էին քաղցը, ծարավն ու հիվանդությունները, հնձելով տառապյալներին, որոնց փոքր մասը միայն հասավ Դեր-Զորի կիզիչ անապատները՝ այնտեղ իր անթաղ գերեզմանը գտնելու համար: Եդեմական հայրենի Եփրատն ու Տիգրիսը ծածկվեցին անմեղ հայերի դիակներով:

Համաշխարհային պատմությանը մինչ այդ հայտնի բոլոր խժդժությունները՝ Սարգոնից մինչև Չինգիզ խան ու Լենկթեմուր, խունանում են Իդարի վանդալների կատարած ոճրագործությունների առաջ: Այդ ճշմարտությունը նշել է նաև պատերազմի տարիներին Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն. «Ես համոզված եմ, որ տիեզերական պատմության մեջ ավելի զարհուրելի դրվագ չկա, քան հայկական ջարդերը: Անցյալ ժամանակների մեծ հալածանքները գրեթե աննշան են թվում այն տառապանքների մոտ, որ հայ ազգը կրեց 1915 թվականին»:

Աղետն ահավոր կլիներ, եթե հայ ժողովուրդը Գողգոթայի և մարտիրոսության այդ օրերը պատմությանը հանձներ միայն ողբ ու լացով: Երբ արդեն դանակը ոսկորին էր հասել և իր ամբողջ ահավորությամբ հայի առաջ ծառացավ լինել-չլինելու հարցը, Ավարայրով անցած մեր ժողովուրդը, որը քաջ գիտեր, թե իմացյալ մահը անմահություն է, արդարացի ընդվզումի պոռթկումներ ունեցավ: Վերջնական բնաջնջման դեմ հանդիման, մի շարք քաղաքներում և գյուղերում հայերը դիմեցին զինված ինքնապաշտպանության: Սա կենսական անհրաժեշտություն էր, գոյամարտ, մաքառում ցեղաջնջման դեմ:

Առաջինը շարժվեց Վասպուրականը, Վան քաղաքով: Այստեղ հայերը մոռանալով իրենց կուսակցական տարաձայնությունները, միավորվեցին և ստեղծեցին ինքնապաշտպանության կոմիտե և զինվորական մարմին: Վանը վերածվեց ռազմական ճամբարի: Տղամարդիկ, կանայք, երեխաներ մի մարդու պես կենաց և մահու կռվի դուրս եկան անարգ թշնամու դեմ:

Ամբողջ մի ամիս Վանի կուսակալ Զևդեդ փաշան բազմահազար զորքով կատաղի գրոհներ ձեռնարկեց Վանը պաշտպանողների վրա, բայց քաջարի վանեցիները, տոկալով ամեն տեսակի զրկանքներին, ոչ մի թիզ հող չզիջեցին թշնամուն: Միաժամանակ ինքնապաշտպանական ուժեղ մարտեր տեղի ունեցան Շատախում, Արճեշում, Հայոց Զորում և այլուր: Վանի հերոսական պաշտպանությունը պսակվեց փայլուն հաղթանակով: Զևդեդ փաշան խայտառակ պարտություն կրեց և փախավ Բիթլիս: Մայիսի 19-ին ռուսական զորքերը և հայ կամավորական խըմ-

բերը մտան Վան: Վանի և Վասպուրականի հայերը փրկված էին:

Վանի ինքնապաշտպանությունը տասյակներ Վասպուրականի հայերին տեղահանելու և կոտորելու երիտթուրքերի ծրագրերը: Դա ոգեշնչեց և պայքարի հանեց արևմտահայ մյուս հատվածներին:

Ամբողջ 7 ամիս ինքնապաշտպանական մարտեր մղեց Տարոնի հայությունը: Քաջարի մշեցիներն ու սասունցիները կռվեցին մինչև վերջին շունչը:

Ոտքի կանգնեց հերոս Անդրանիկի ծնընդավայր Շապին-Գարահիսարը իր մի բուռ քաջերով: Կռիվն անհավասար էր: 27 օրվա հերոսական մարտերից հետո ընկավ Շապին-Գարահիսարը, որի պաշտպաններն, ասում էին. «Մեռնելու երկու ձև կա, պատվով և անպատիվ: Թող աշխարհն ասի, թե շապին-գարահիսարցիք պատվով մեռան»:

Ինքնապաշտպանության փայլուն օրինակ ցույց տվեց Ուրֆան, մեն-մենակ ծառանալով դահիճների դեմ, դյուցազնաբար ցույց տվեց սերունդներին, թե մարդկանց համար կարհուրելի չէ թիվը, եթե նրանց հոգում բռնկվել է սրբական խենթությունը՝ անձնվեր հայրենասիրությունը:

Ինքնապաշտպանական այս կռիվներին արձագանքեց հայրենիքից կտրված, Միջերկրականի ափերին գտնվող Սվեդիան՝ Մուսա լեռը: Ֆրանց Վերֆելի գրիչը ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ հռչակեց մի բուռ սվեդիացիների 40-օրյա դյուցազնամարտը: 40 օր նրանք կռիվ մղեցին գերազանց ուժերի դեմ, մինչև որ ֆրանսիական ռազմանավերը նրանց Պորտ Սաիդ փոխադրեցին, և Մուսա լեռը պատմության գիրկն անցավ իբրև մեկն այն հպարտություններից, որոնցով ոգևորվում են սերունդները, ամուր կառչելու համար հայրենի սրբություններին:

Արյունից չհագեցած թշնամին փորձեց ապրիլյան մի նոր եղեռնի ճապաղիքներում վերջնականապես խեղդել հայության վերջին մնացորդացը՝ արևելահայությունը:

Ամեն կողմ նորից արյուն, նորից կոտորած, թշվառություն, մահ, բայց և մաքառելու, ապրելու և հավերժելու վճռականություն. Սարդարապատի հերոսամարտը կասեցրեց ահեղ թշնամու առաջխաղացքը և ձախողեց նրա նպատակը: «Ընդ եղեգան փող բոց ելանէր»: Ու ծնվեց նոր Վահագնը մեր արյան ծովից, մեր նահատակության բոցերից հուր հեր և «արեգակ աչկունք» ունեցող նորամանուկը՝ Սովետական Հայաստանը:

Այդ ծանր, օրհասական պահին եղբայրական օգնության ձեռք մեկնեց ռուս մեծ ժողովուրդը: Դանդաղ, բայց աստիճանաբար պայծառացավ հայոց երկինքը: Ի հեճուկս բոլոր ջարդարարների, սկիզբ դրվեց մեր ազգային վերածնունդին: Փարատվեց մըղձավանջը և բացվեց հուսալից լուսաբացը հայոց աշխարհում՝ խաղաղության, ապահովության, առաջադիմության լուսաբացը:

Հայ ժողովուրդը նոր կյանքի կոչվեց իր ծվատված հայրենիքում. ծիծեռնակը վերաշինեց իր բույնը հայրենի կտուրի տակ, կռունկները տուն դարձան, և կատարվեց մեծ հրաշքը: «Որբի ու ողբի» հայրենիքը փոխակերպվեց հույսի ու լույսի հայրենիքի, որն ահա 65 տարի է, ինչ փարոսի նման դեպի իրեն է ձգում աշխարհասփյուռ հայությանը:

Այս կարճ ժամանակամիջոցում Հայաստանը ավերի երկրից դարձել է հրաշքների երկիր, որին ի տես ամերիկացի նկարիչը բացականչում է. «Եթե ինձ հարցնեին, թե մեր մոլորակի վրա որտե՞ղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը»:

Եթե մեր հաջողություններն անկեղծորեն ուրախացնում են աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց, ապա իթթիհատականների հետնորդներին դրանք այսօր ավելի են կատաղեցնում: Նրանք տեսնելով, որ բիրտ ուժը անզոր եղավ աշխարհից ջնջելու համար հայ անունը, այժմ արդեն դիմում են հոգևոր կենքի: Թուրքական պատմագրությունն այժմ ձեռք է մեկնել մեր պատմությանը և փորձում է խեղաթյուրել այն, սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Մեր կարևոր խնդիրներից է անխնա մերկացնել թուրք պատմագրության այդ տեսակետները որտե՞ղ և ի՞նչ բնույթով էլ որ դրանք երևան գան:

Մեր երկրում ձեռք բերված նվաճումները յուրաքանչյուր հայ մարդու սիրտը հիրալի լցնում են ազգային հպարտության զգացումով:

Այսօր, եղեռնից 70 տարի անց, պայծառ է վերածնված մեր ժողովրդի ներկան, էլ ավելի պայծառ է ուրվագծվում նրա ապագան:

Այսօր, մեր նորոգ հայրենիքում յուրաքանչյուրիս ազգօգուտ աշխատանքը մի հակահարված է արյունարբու համաձուլարարներին և իրականացումը մեր նահատակների երազանքի, հանուն որի նրանք մարտիրոսացան:

Այո, իզուր չի անցել Ապրիլյան եղեռնի զոհերի թափած սուրբ արյունը: Հայ ժողովրդի համար նվիրական է միշտ մեր նահատակների խնկելի հիշատակը երեկ, այսօր և վաղը:

Հավերժ հիշատակ մեր բյուր-բյուրավոր նահատակներին:

Ա. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԵՐԵՃՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳՆԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻՆ ԲԱՐԵՋԱՆ ՔԱՐՈԶԻՉԻՆ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Պէյրութ

Բարին Աստուած Իր լուսապսակ հովանիին տակ շէն ու պայծառ կը պահէ մեր եկեղեցիները, որոնք մշտապէս Սուրբ Հոգւոյ կենարար շնորհները կը բաշխեն իրենց սուրբ Սեղաններէն մեր հաւատացեալ ժողովուրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Մենք հոգեպէս մխիթարուած ենք, որ մեր եկեղեցիները, հայ հաւատացեալ ժողովուրդի ծոցին մէջ իրենց այս առաքելութիւնը ի կատար կ'ածեն, մանաւանդ նուիրեալ հոգեշէն վերատեսչութեանը ներքև մեր բարձրաստիճան եկեղեցական սպասաւորներուն:

Սիրելի Սրբազան, Դուք ևս կը պատկանիք մեր Եկեղեցւոյ նուիրեալներու հոյլին, շուրջ կէսդարեայ Ձեր եկեղեցանուէր ու մանկավարժական կրթական գործունէութեամբ, մշտանորոգ եռանդով և անվարան հաւատարմութեամբ Մայր Աթոռիս հանդէպ, գնահատուած և սիրուած տեղւոյդ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ համայնքի, ինչպէս և համայն մեր հաւատացեալ ժողովուրդին կողմէ;

Արդ, Ձեր ծննդեան եօթանասունամեակի առթիւ, ջերմապէս գնահատելով բազում տարիներու Ձերդ Սրբազնութեան հոգեշէն ու ազգանուէր ծառայութիւնները, այլև ընդառաջելով Սուրբ Գէորգ եկեղեցւոյ յարգարժան թաղականութեան խնդրանքին, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, սրտեռանդ աղօթքով, որ Տէրը Ձեզի շնորհէ ևս բազում տարիներ քաջառողջութեամբ, շարունակելու համար Ձեր առաքելութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, Ձեզի յատուկ խանդավառ սրտով և ոգեշնչումով:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եղիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 29 Յունուարի
1985 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1342

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ՆԿԱՐԻՉ ՀՐԱՆԴ ԱՎԱԳՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀՐԱՆԴ ԱՎԱԳՅԱՆ*

Բուխարեստ, Ռումինիա

Սրտանց կշնորհավորենք Ձեր կյանքի ութսունհինգ տարիները և Ձեզի կբերենք Մեր ամենաջերմ գնահատանքն ու օրհնությունը Ձեր վաստակին՝ նվիրված նկարչական արվեստին: Տասնամյակներ շարունակ վրձինը Ձեր մաքուր ձեռքին ստեղծեցիք գույներու ինքնուրույն նոր աշխարհ մը, Ձեր աշխարհը՝ արտահայտությունը Ձեր ներաշխարհին, Ձեր հույզերուն, Ձեր հոգվույն բարի ու խաղաղ պատկերին:

Սուրբ Էջմիածնին Ձեր նվիրած բազմաթիվ գեղանկարները Մեր օրերուն և գալիք ժամանակներուն բոլորին պիտի բաշխեն Ձեր գույներուն լույսերը, թովչությունը և երազները: Ձեզի, վարպետ Հրանդ, կմաղթեմ կենաց նոր երանդ, նոր ներշնչանք՝ շարունակելու գեղեցիկին ծառայելու Ձեր ակնիվ առաքելությունը:

Մեր օրհնությունը Ձեզի և Ձեր անպուգական քրոջ՝ օրիորդ Բեաթրիսին, պահապան հրեշտակը Ձեր կյանքին:

«Ողջ լերուք կօրացեալ Սուրբ Հոգւով»: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
26 մարտ 1985 թ.

---

* Հրանդ Միհրանի Ավագյանը ծնվել է Սիրիայի Հալեպ քաղաքում, 1900 թ. մարտի 29-ին: Նախնական կրթությունը ստացել է տեղվույն Ներսեսյան վարժարանում և գերմանական լիցեյում: 1920 թ. տեղափոխվել է Ռումինիա և մշտական բնակություն հաստատել Բուխարեստում: Այստեղ նա պարարտ հող գտավ զարգացնելու իր նկարչական կարողությունները, և հատկապես աշակերտելով մեծանուն նկարիչ և ակադեմիկոս Ժ. Ա. Ստերիադիին՝ աճեց իբրև ինքնուրույն գունային զգացողություն, հարուստ ներաշխարհ և խորունկ մտածողություն ունեցող տաղանդավոր նկարիչ: Մի քանի անգամ եղել է Հայաստանում և ունեցել երկու անհատական ցուցահանդես: Հայաստանում նույնպես ստեղծել է հայկական բնաշխարհի գողտրիկ նկարներ: Մեծ է Հրանդ Ավագյանի վաստակը նաև ռումինական հին նկարների վերականգնման շնորհակալ աշխատանքում:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶ

Սույն թվականի փետրվարի 22-ից մինչև մարտի 9-ը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ոչ պաշտոնական այցով եղավ Փարիզում: Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Փարիզի հայոց առաջնորդարանում Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպում ունեցավ Փարիզի հայոց Կրոնական Ընկերակցության և Ներկայացուցչական Ժողովի մի շարք պատասխանատու անդամների հետ՝ գլխավորությամբ Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյանի: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն ֆրանսահայ թեմը նոր կանոնադրությամբ օժտելու հարցի շուրջ: Առավել հստակվեցին ֆրանսահայ թեմի վերակազմակերպման, նրա ղեկավարման սկզբունքների հետ կապված որոշ հարցեր: Թեմական նոր կանոնադրության նախագծի կազմությունն ընթացքի մեջ է: Կանոնադրության պատրաստման համար ստեղծված է հատուկ հանձնաժողով, որի մեջ ընդգրկված են ֆրանսահայ մի շարք իրավագետ ազգայիններ:

Վերոհիշյալ հարցի շուրջ հանդիպում և խորհրդակցություն տեղի ունեցավ նաև Վեհափառ Հայրապետի և Լիոնի շրջանի հայ եկեղեցական վարչության անդամների միջև, որոնք Փարիզ էին ժամանել՝ գլխավորությամբ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի:

Ամենայն Հայոց Հայրապետը հնարավորություն ունեցավ նաև վբաղվելու Փարիզում «Զայն Եկեղեցվո» անունով Հայ Առաքելական Եկեղեցու կրոնական մի պարբերաթերթ հրատարակելու ծրագրի իրականացման հարցով: Այդ նպատակով կազմված հանձնաժողովի անդամները, Տ. Գյուտ եպիսկոպոսի գլխավորությամբ, խորհրդակցական մի հանդիպում ունեցան Վեհափառ Հայրապետի հետ:

Փետրվարի 28-ին Փարիզում Հայոց Հայրապետը ընդունեց այցելությունը Վենետիկի Մխիթարյան Միաբանության ներկայացուցիչների, որոնք Ամենայն Հայոց կաթողիկոսին հանձնեցին միաբանության Ընդհանուր Աթոռական Հայր Բարսեղ վարդապետ Չեպիճյանի ընդարձակ կեկուցագիրը Ս. Ղազար վանքի տնտեսական ներկա տագնապալի վիճակի մասին: Ապա մարտի 7-ին Վեհափառ Հայրապետին այցելեցին Մխիթարյան Միաբանության «Օժանդակ Մարմնի» մի շարք անդամներ՝ գլխավորությամբ Հայր Ռաֆայել վարդապետի և «Օժանդակ Մարմնի» նախագահ պր. Վահե Յակմատարյանի, որոնք Հայոց Հայրապետին մանրամասն տեղեկություններ հաղորդեցին ֆինանսական այն ծանր կացության մասին, որին ենթարկված է այժմ միաբանությունը: Այս առիթով Մխիթարյան Միաբանության և «Օժանդակ Մարմնի» ներկայացուցիչները խնդրեցին Ամենայն Հայոց Հայրապետին, որ իր բարձր հեղինակությամբ իր բարոյական նպաստը բերի ստեղծված տնտեսական տագնապի բարվոք լուծմանը: Նորին Սրբությունը, բաժանելով միաբանության վիշտը, պատրաստակամություն հայտնեց հնարավորության սահմաններում օգտակար լինելու:

Մարտի 3-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում ներկա եղավ սուրբ պատարագի արարողությանը և արտասանեց հոգեշեն մի քարոզ ի մխիթարություն եկեղեցում հավաքված խուռներամ հայ հավատացյալների:

Փարիզում գտնվելու օրերին Հայոց Հայրապետը հանդիպումներ և տեսակցություններ ունեցավ հայ եկեղեցական համայնքների, հասարակական գործիչների, ինչպես նաև «Յառաջ» օրաթերթի խմբագիր Արփիկ Միսաքյանի և «Աշխարհ» թերթի ներկայացուցիչ Արտավազդ Պերպերյանի հետ:

Փետրվարի 28-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելությունը Լոնդոնից ժամանած Անգլիայի հայոց թեմական առաջնորդ Տ. Եղիշե եպիսկոպոս Կիլիրյանի՝ և Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցու Խնամակալության նախագահ Ճորճ Քյուրքճյանի և զրույց ունեցավ նրանց հետ եկեղեցական ընթացիկ հարցերի շուրջ:

Մարտի 2-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց նաև այցելությունը Նյու Յորքից հատուկ ժամանած Տիկին Լուիզ Սիմոնի, իսկ մարտի 4-ին՝ Բոմբեյի հայ համայնքի ներկայացուցիչ Տիկին Նվարդ Մեդայի:

Մարտի 11-ին Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ:



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 25-ից մինչև ապրիլի 2-ը Հին Կտակարանի արևելահայերեն թարգմանության աշխատանքների ընթացքին ծանոթանալու համար Մայր Աթոռ էին հրավիրվել Աստվածաշնչական Ընկերության Եվրոպական երկրների ներկայացուցիչ դոկտ. Յան Վաարդը, Աստվածաշնչական Ընկերության Մերձավոր Արևելքի ներկայացուցիչ վերապատվելի դոկտ. Մանվել Ջինբաշյանը և Աստվածաշնչական Ընկերության Կենտրոնի աշխատակից Սամվել Եղնապարը:

Նրանք այդ մեկ շաբաթվա ընթացքում Աստվածաշնչի թարգմանական արվեստի վերաբերյալ գործնական խորհրդակցություններ ունեցան թարգմանիչների հետ: Նայվեցին և տեղում համեմատական ուսումնասիրության ենթարկվեցին որոշ հատվածներ՝ թարգմանիչների անմիջական մասնակցությամբ: Մտքերի փոխանակությունը, հաճախ մեկ բառի խորագույն վերլուծությունը օգտակար դարձան՝ թարգմանիչների հետագա աշխատանքը ավելի արդյունավետ դարձնելու համար: Թարգմանությունը ավելի կատարյալ և անվրեպ տեսնելու համար՝ մշակվեցին որոշակի սկզբունքներ, որոնց հիմնական նպատակն է հնարավոր չափով միասնականություն և ժամանակակից հնչեղություն հաղորդել նոր թարգմանությանը:

Նման համագործակցությունը անպայմանորեն կապահովի ցանկալի և որակյալ թարգմանություն:





ԱՎԱԳ ՇԱԲԱԹԸ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Մահուամբ զմահ կոխեաց,
Եւ Յարութեամբն Իւրով,
Մեզ զկեանս պարգեւեաց,
Նմա փառք յաւիտեանս, ամէն:

Գարնանային կենսապարգև արեգակի շողերը առաջնորդեցին մեզ դեպի Իշման ս. սեղան՝ ուռենու ոստերով, օվսաննաներով ու օրհներգություններով դիմավորելու մեր Տիրոջը և Փրկչին:

Քառասնօրյա պահքի, տրտմության և ապաշխարության օրերին փոխարինելու էր եկել ուրախությունը. ալելուիա, օվսաննա Բարձրյալին:

Հրեա ժողովրդի նման հայ ժողովուրդը, Ծաղկազարդի առավոտյան, խռնվել էր հայոց Երուսաղեմի՝ Միածնաէջ տաճարի շուրջը:

Մինչև երեկո տևող այդ ցնծությունը Ավագ շաբաթը խոկումներով, աղոթքներով ու սաղմոսերգություններով անցկացնելու երաշխիք է դառնում:

Ապրիլի 4-ին, Ավագ հինգշաբթի.—Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը ընթերցում է Ս. Բարսեղ Կեսարացու աղոթքի աշխարհաբար թարգմանությունը:

Երեկոյան հանդիսավոր ժամերգությունից հետո բացվում է Ավագ ս. սեղանի վարագույրը և սկսվում է Ոտնլվայի Քրիստոսահաստատ արարողությունը՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի:

Ծնրադիր սրբազանը մեկ առ մեկ լվանում և օծում է պայծառ հայացքներով իրեն մոտեցող տղաների ոտքերը:

Պահն այնքան է խորհրդավոր, որ ս. սեղանից լսվում է դարերի խորքից հնչող Աստվածորդու հորդորն Իր աշակերտներին. «Գիտէ՞ք զինչ արարից ձեզ. Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, եւ բարւոք ասէք, քանզի եմ իսկ: Իսկ արդ, եթէ ես լուացի զոտս ձեր, Տէրս եւ Վարդապետս, եւ դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ: Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ դուք առնիջիք»:

Ոտնլվայի արարողությանը ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Այդ օրվա խորհուրդը ավելի հուզիչ է դարձնում Տիրոջ Մատնության և Չարչա-

ռանքների արարողության կարգը, որը ավարտվում է Խավարման խորհրդանշական պահի կատարումով:

Հիսուս խաչի վրա է՝ շուրջը հեթանոսներ, խաչված ավազակներ: Իր երկրային տառապանքների գագաթնակետի՝ խաչի վրա անգամ, բարության Իր գերմարդկային հոգով, աղոթում և ներում է հայցում երկնավոր Հորից՝ Իր երկու կողմում խաչված ավազակների համար:

Խաչված Աստվածորդին Իր աստվածային փառքի հետ վերջին վայրկյանին ցույց է տալիս նաև Իր մարդկային բնության հատկանիշները:

Բնության տարրերը ողբում են իրենց Արարչի տառապանքները:

Խավարում է աշխարհը: Այդ պահին խավարի մեջ էին նաև մարդկանց հոգիները:

Եկեղեցին ընկղմված էր թանձր խավարի մեջ: Ս. սեղանից, խորհրդավոր, հնչում է Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի ձայնը.

«Էլի, էլի, լամա սաբաքթանի. այսինքն է՝ Աստված իմ, Աստված իմ, ընդէ՞ր թողեր զիս (Մատթեոս ԻԷ 46):

Ամբողջ Ավետարանի պատմությունը, մի տեսակ, առաջաբան է Ավագ շաբաթի համար, իսկ Ավագ շաբաթը հավատացյալին տանում է դեպի Հիսուսի խաչելությունը և հարությունը:

Տակավին մի քանի օրեր առաջ, Ծաղկազարդի տոնին, օլսանաներով, օրհներգություններով և ալելուիաներով ողջունում էին Հիսուսի Երուսաղեմ մուտքը: Եվ Երուսաղեմի փողոցներում դեռ արձագանքում էին այդ ողջույնի ձայները: Հիսուս Պասեքը՝ Իր վերջին ընթրիքը, ուտում է Իր աշակերտների հետ միասին, և նրանց միջոց է տալիս, որպեսզի երբ մարմնով վերանա նրանցից, անպայման լինի նրանց հետ՝ հիմնելով պատարագի սուրբ խորհուրդը: Պատարագից հետո Հիսուս Իր աշակերտներին տալիս է նաև խոնարհության դասը, որ այսօր երեկոյան տեսաք Ոտնլվայի արարողությամբ: Հիսուս Ինքը՝ Տերը և Վարդապետը, խոնարհվեց և լվաց Իր աշակերտների ոտքերը: Մի խոնարհություն, որը մի քիչ անց Իր կյանքով և մարմնով իսկ պիտի փաստեր համայն մարդկությանը: Ամեն ինչ արված էր, ամեն ինչ ասված էր արդեն: Եվ Հիսուս Իր աշակերտներով առանձնանում է Գեթսեմանիի պարտեզը՝ աղոթելու և խոկալու: Հիսուս ցանկանում էր նախապատրաստել Իր աշակերտներին գալիք դեպքերին: Բայց աշակերտները մի կողմից անզոր լինելով հասկանալու կատարվող դեպքերը, մյուս կողմից հոգնած լինելով օրվա աշխատանքից, անզոր դիմադրելու մարմնի տկարությանը, թուլանում են և քնում: Սակայն Հիսուս աղոթքի էր կանգնած Իր հոգու հետ, Աստուծո հետ, որովհետև պետք է վորացներ մարմինը: Եվ աղոթում էր Աստծուն ասելով. «Տեր անցկացրու այս բաժակն ինձանից, բայց ոչ այնպես, ինչպես Ես եմ ուզում, այլ քո կամքի համաձայն»: Որովհետև, թեև հոգին հոժար էր, բայց տկար էր մարմինը: Մինչև արևածագ աղոթելով Հիսուս կարողանում է վորացնել և պատրաստել Իր մարմինը: Եվ արևածագին արդեն ամեն ինչ վճռված և որոշված էր: Եվ Հուդան գալիս է փարիսեցիների, քահանայապետների և դպիրների խմբով մատնելու և ձերբակալելու իր Տիրոջը: Սակայն Հիսուս Ինքն է ընդառաջ ելնում բռնողներին, կամովին Իրեն հանձնելով քահանայապետներին ասելով. «Ավազակ բռնելո՞ւ եք եկել, որ զենք ու զրահով եք գալիս: Միշտ ձեզ հետ էի տաճարում, ինչո՞ւ Ինձ այնտեղ չձերբակալեցիք»: Աշակերտներից ոմանք փորձում են պաշտպանել իրենց Տիրոջը, սակայն Նա թույլ չի տալիս Իր աշակերտներին ասելով. «Ձեր սուրը դրեք պատյան, որովհետև սուր վերցնողը սրով կընկնի»:

Ճշմարտության, լույսի և արդարության, գերագույն այս իրողությունների համար պայքարողը չէր կարող զենքով պայքարել: Բայց սրից, նետից, զենքից ավելի ուժեղ մի զենք գոյություն ունի. դա խոնարհությունն ու համբերությունն է: Հիսուսի խոնարհության այդ օրինակը ներշնչող ուժ է մեզ համար: Հիսուս Ինքն Իրեն կամովին է հանձնում հրեաներին: Նրան տանում են դատելու: Կարծեք դերերը փոխվել էին: Պատկերացրեք մի դատարան, որտեղ գողերն ու ավազակները ստանձնում են դատավորի պաշտոնը և դատում են դատավորին: Ճիշտ այդ պատկերն էր այնտեղ: Եվ դատելու կարիք էլ չկար, որովհետև նրանք նախօրոք որոշել էին դատավճիռը: Մահ և ուրիշ ոչինչ:

Եվ անօրինակ այս որոշումը մի կերպ կարդարացնելու համար Հիսուսին տարան Երուսաղեմի հռոմեացի կառավարիչ Պիղատոսի մոտ, որպեսզի նա տա վերջնական որոշումը: Պիղատոսը ուզեց իմանալ, թե հրեաները ինչո՞ւ են այսքան կամենում այս մարդու մահը, մոտիկից ծանոթանալով գործին զգում է, որ Հիսուսին մահվան դատապարտելու համար ոչ մի հիմնավոր պատճառ չկա: Եվ կարծեք նույնիսկ փորձում է Նրան ազատել. ծեծել է տալիս, փշե պսակ է դնում գլխին, ծիրանի է հագցնում և ծաղրում է, որպեսզի հրեաները կարողանային ասել, որ ոչ, մենք Նրա մահը չենք ցանկանում: Նույնիսկ առաջարկում է մի ավազակի փոխարեն Նրան ազատ արձակել: Սակայն, ով մարդկային ողբերգություն: Նույն ամբոխը, որ օրեր առաջ օլսանաներով էր դիմավորում Հիսուսին, իրենց ղեկավարների առաջ-

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

(Մայր Աթոռ, 7 ապրիլի 1985 թ.)

«ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ»

(Մայր Աթոռ, 7 ապրիլի 1985 թ.)

նորդությամբ գոռում էին. «Խաչ հանիր Նրան, խաչ հանիր»:

Այո: Պետք է կատարվեր այն, ինչ որ վիճակված էր: Հին Կտակարանում մարգարեների բերանով ասվել էր այս բոլորը, և բաժակը պետք էր ըմպել մինչև մրուր: Եվ Հիսուս ուսին դրած խաչը դանդաղ բարձրանում էր Գողգոթայի բարձունքը: Հանկարծ այնտեղ խաչի վրա իրական խավար է տիրում: Այդ խավարն ավելի ահարկու էր նրանով, որ խավարեցնում էր մարդկանց հոգիները: Նրանք չէին տեսնում այն, ինչ կատարվում էր: Խաչելով Հիսուսին նրանք կարծում էին, որ այդ ձևով հնարավոր կլինի սպանել լույսը, ճշմարտությունը և արդարությունը:

Սակայն Հիսուսի խաչվելով վերջ չգտան ճշմարտությունն ու արդարությունը:

Հայ ժողովուրդը, 1915 թ., ամենանեղ պահին, եթե հավատք ու հույս չունենար, թե կարող է ապրել, պետք է որ մահացած լիներ արդեն: Հայրենական պատերազմին նույնպես. եթե մեր երկրի ժողովուրդները չհավատային իրենց կամքին, իրենց գործի արդարությանը, արդեն պարտված և ոչնչացած կլինեին:

Հիսուս խաչի վրա ավելի կորավոր ու ամուր էր, քան երբեք: Երկնքում փայլատակող կայծակը լուսավորում էր խաչը: Պատկերացրեք այդ հրաշալի տեսարանը, երբ խավարի մեջ խաչից լույսն էր արձակվում: Այո: Եվ այդ լույսն ընկնում էր ոչ թե հրեաների վրա, այլ խաչափայտի կողքին կանգնած հեթանոս հարյուրապետի վրա, որ ասում է. «Իսկապես այս մարդն Աստուծո Որդին է»: Սրանից ավելի մեծ հայտարարություն և ճշմարտության ճանաչում այլևս չէր կարող պատահել: Խաչից ելնող լույսը պիտի տարածվեր դատարկ գերեզմանից, պիտի հասներ Իր աշակերտներին մինչև Համբարձում և Հոգեգալուստ: Բայց այն աշակերտները, որոնք թողել-գնացել էին, այդ խաչից ճառագող լույսից ոգևորված, այդ խաչից հեռացած առաքյալները իրենց կյանքը պիտի տային այդ խաչի համար:

Այս խավարի և տրտմության պահին, խաչից ճառագող լույսը թող մեկ ուղենիշ լինի, որպեսզի խավարի մեջ չմնա մեր հոգին, և ոչ միայն այս պահին, այլ նաև՝ մեր բոլոր խավար պահերին: Որովհետև, ինչպես Պողոս առաքյալն է ասում՝ «Եթե մենք քրիստոնյա ենք, ուրեմն մեր մարմնի վրա կարող ենք կրել Քրիստոսի չարչարանքները, եթե քրիստոնյա ենք, ուրեմն կարող ենք խաչվել, որովհետև մենք հավատում ենք, որ խաչելությունից հետո մեկ լուսավորելու է Հարությունը»:

Թող խաչյալ Քրիստոսի խաչից ճառագայթող շնորհները մեր մեջ լինեն, այժմ և հավիտյանս հավիտենից, ամեն»:

Վարագույրի ետևից, խորհրդավոր մթության մեջ, լսվում է Հիսուսի կողմից Աստվածամորն ուղղված աղերսագին խոսքերի սրտատրոֆոր երգը. «Ո՞ւր ես մայր իմ»: Այդ բոլոր տառապանքներից հետո «Յիսուս արձակեաց ձայն մեծ և եհան զոգի»:

Ապրիլի 5-ին, Ավագ ուրբաթ.—Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, միջօրեին, Տ. Ներսես սրբազանի նախագահությամբ, կատարվում է «Խաչելութեան կարգն ըստ Տօնացոյցի», իսկ երեկոյան ժամերգությունից հետո՝ թաղման կարգն ու թափորի հանդիսավոր արարողությունը:

Ապրիլի 6-ին, Ավագ շաբաթ.—Ճրագալոյց Զատկի:

Երկնակամարը արևամուտի ճառագայթներից ուրախության ծիրանի էր հագել, և Մասյաց լեռնապարը ողողվել էր վառ կարմիրի տոնական գույներով:

Ուխտավորները շարան-շարան լցնում էին Մայրավանքի Ս. Աստվածածին եկեղեցին ու բակը:

Հավարավոր հավատավոր հոգիներ պահոց շրջանի տխուր օրերի ընթացքում միշտ ունեցել են Հարության բերկրալի ավետիսը լսելու երջանիկ սպասումը:

Երեկոյան ժամը 20-ին, ճաշու հանդիսավոր ժամերգությունից հետո, սարկավագն իր «Օրհնեա Տէր»-ով ավետում է ժողովրդին սուրբ և անմահ պատարագի սկիզբը:

Օրվա պատարագիչն է Տ. Արսեն եպս. Բերբերյանը: Լուսավոր ջահերի և բոցկլտացող կանթեղների պայծառ լույսի տակ պատարագիչ սրբազան հայրը ժողովրդին բաշխում է երկնային խաղաղությունը, իսկ դպրաց դասը, տաճարի սրբազան կամարների տակ, ի լուր ամենքի, տարածում է Փրկչի հրաշափառ Հարության ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ավետիս աշխարհին, ավետիս՝ խաղաղության, ճշմարտության և արդարության կարոտ հոգիներին: Ավետիս աշխարհի չորս ծագերին. հարություն առավ խաղաղության, լույսի և ճշմարտության Արքան՝ աշխարհի Արարիչն ու մարդկության Փրկիչը:

Ողջույնի պահին ալիքվում է ժողովուրդը, և սրբազան համբույրի հետ բոլորի սրտերին դրոշմվում է Հարության ցնծալի ավետիսը:

Ս. պատարագի վերջում եկեղեցական թափորը առաջնորդում է Վեհափառ Հայրապետին դեպի Վեհարան, ուր մեկ անգամ ևս

միմյանց հաղորդելով Քրիստոսի Հարության ավետիսը՝ աջահամբույրով շնորհավորում են Վեհափառ Հայրապետի Հարության տոնը:

Ապրիլի 7-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Աւետումն Ս. Աստուածածնի:

Բարի լույս, ավետավոր լույս, իմաստալից ու սիրո լույս է ծագել Հայաստան աշխարհի վրա՝ ոչ ամենօրյա, սովորական լույսի նման, այլ տոնական ու հաղթական:

Լույս, բարի լույս: Թռչունների երգի հետ խոխոջում են Վաղարշապատի առվակները, լույսի և արեգակի հետ խաղում են մարդկանց՝ տասնյակ հազարավոր ուխտավորների աչքերը, որոնք նայում են Մայր տաճար Ս. Էջմիածնի կանգակատանը, որտեղից ծիծեռնակների ճախրի միջից լսվում է Փրկչի Սուրբ Հարության ս. պատարագին ներկա գտնվելու հրավերի կանգակների ձայնը:

Ուրախ են բոլորը՝ թե՛ ծեր, թե՛ մանուկ: Ամենուրեք լսվում են ուրախաբեր ողջույնները. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Եվ միաբերան թնդացող պատասխանները լրացնում են վանքը. «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Հրաշափառի երգեցողությամբ սրբազանը առաջնորդվում է դեպի ատյան:

Նորից լսվում է դպրաց դասի ցնծագին ավետիսը. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Ցնծում է ժողովուրդը, երգվում են օվսաննաներ, ալելուիաներ, օրհներգություններ, քանզի.

«Այսօր յարեաւ ի մեռելոց,
Փեսան անմահ եւ երկնաւոր,
Քեզ աւետիք խնդութեան,
Հարսն ի յերկրէ եկեղեցի.
Օրհնեա ի ձայն ցնծութեան,
զԱստուած Քո Սիօն»:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի եկեղեցական թափորը Վեհափառ Հայրապետին առաջնորդում է Վեհարան:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

«Սկիզբն իմաստութեան երկեղ Տեառն: Իմաստութիւն յելս ճանապարհաց գովի, եւ ի հրապարակս համարձակութիւն բերէ: Զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո, եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում» (Առակաց Ա 7, 9, 20):

Սույն թվականի ապրիլի 1-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողապալյանի նախագահությամբ, տեղի ունեցավ Տ. Թորգոմ աբեղա Խարապյանի վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը:

Արդեն ավանդություն դարձած այս պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, ինչպես նաև հայր սուրբի հարպատներն ու այլ հյուրեր:

Հայր Թորգոմի ներկայացրած «Ս. Էջմիածնի հարաբերությունները ցարական արքունիքի հետ սկզբից մինչև 19-րդ դարի սկիզբը» խորագիրը կրող աշխատանքը քննելու համար, Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ կազմվել էր մի հանձնաժողով. նախագահ՝ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պողապալյան, անդամներ՝ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար, հոգևոր ճեմարանի վաստակավոր դասախոս տիար Պարգև Շահբազյան և «Էջմիածին» ամսագրի խմբագիր, հոգևոր ճեմարանի դասախոս տիար Երվանդ Մելքոնյան:

Պաշտպանությունը բացման խոսքով սկըսում է Տ. Ներսես եպս. Պողապալյանը, որից հետո հանձնաժողովի անդամ տիար Պ. Շահբազյանը ունկնդիրներին է ներկայացնում աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի որոշումը.

«Թորգոմ աբեղա Խարապյանի վարդապետական աշխատանքը նվիրված է «Ս. Էջմիածնի և ցարական արքունիքի հարաբերություններին», որոնց ուսումնասիրությունը կարևոր է Հայ ժողովրդի պատմության համար ընդհանրապես և Հայ Եկեղեցու պատմության համար մասնավորապես:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից և վեց գլուխներից: Ներածության մեջ խոսում է հայ և ռուս ժողովուրդների կապերի մասին ընդհանրապես, նկարագրում դրանց ուսումնասիրման վիճակը պատմագիտության մեջ, ապա ընդգծում իր աշխատության նպատակը՝ առանձնացնելու Էջմիածնի Մայր Աթոռի հարաբերությունները՝ մի կողմից ցարական արքունիքի, մյուս կողմից Ռուս Եկեղեցու հետ:

Ապա գլուխ առ գլուխ նկարագրում է Անդրկովկասի հայության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը 18-րդ դարում, պարսկական, ապա և թուրքական ահավոր ճնշումը հայ ժողովրդի վրա և ազգային-ազատագրական շարժման սկզբնավորումը. Հետո մասնավորվում են Ս. Էջմիածնի վաղեմի կապերը Ռուսաստանի հետ՝ սկսած 17-րդ դարի վերջերից՝ Հակոբ Ջուղայեցու «Անհաղթ կայսրին» նամակ-դիմումից: Հատուկ

գլուխ է նվիրված Էջմիածին-Ռուսաստան հարաբերություններին՝ Հակոբ Շամախեցի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսների օրոք, որոնք հայ ժողովրդի ազատագրման հարցը անմիջականորեն կապեցին ռուսական արքունիքի ռազմական օժանդակության հետ և որոշ հաջողություն ձեռք բերեցին: Ապա մասնավորվում են Եկատերինա Բ-ի՝ հայերի նկատմամբ վարած դրական քաղաքականությունն ու Հովսեփ Արղությանի դերը կապերի սերտացման գործում: Հաջորդ գլխում նկարագրվում են հայ-ռուս փոխհարաբերությունները Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, երբ հարաբերությունները մնում էին դիվանագիտական մակարդակի վրա՝ համագործակցության հիմքով: Վերջին գլխում արդեն խոսվում է այն մասին, որ Ղուկաս կաթողիկոսի մահից հետո ռուսաց արքունիքը անցնում է Էջմիածնի գործերին ուղղակիորեն միջամտելու քաղաքականության՝ ջանալով Արղությանին կաթողիկոսացնել: Ապա տրվում է օգտագործված գրականության ցանկ:

Հանձնաժողովը, քննելով աշխատությունը, եկավ այն ընդհանուր եզրակացության, որ իրագործված է կարևոր աշխատանք, որն ունի հետևյալ գլխավոր արժանիքները.

1. Աշխատանքը համեմատաբար ամբողջական ընդգրկում ունի և լավ պատկերացում է տալիս հայ ժողովրդի 17—18-րդ դարերի պատմության մասին:

2. Հեղինակը որդեգրել է կարևոր սկզբունք՝ պատմական դեպքերը նախ նկարագրել չեզոք մոտեցումով, ինչպես դրանք տեղի են ունեցել, և ապա միայն ցուցաբերել իր վերաբերմունքը այս կամ այն հարցի առթիվ:

3. Կարողացել է լավապես օգտվել այդ մասին եղած գրականությունից՝ քաղելով այն, ինչ առնչվում է Մայր Աթոռի պատմությանը:

4. Հեղինակը ուսումնասիրությունը կատարել է հայ եկեղեցականի և հավատավոր էջմիածնականի հայեցակետով՝ ճշտորեն գնահատելով դեպքերը և ռուսական արքունիքի կեցվածքը տարբեր շրջաններում:

5. Աշխատությունը գրված է սահուն, լավ հայերենով՝ եթե նկատի չունենանք առանձին վրիպումներ:

Աշխատությունը ավելի կատարյալ տեսնելու ձգտումով՝ հանձնաժողովս ունի հետևյալ դիտողությունները.

1. Առավելագույն չափով խուսափել օտար բառերի անհարկի օգտագործումից, որոնք եթե մի դեպքում կարող են արդարանալ հեղինակի օգտագործած աղբյուրներով, ապա ոչնչով չեն արդարանում հեղինակի շարադրանքում. օրինակ՝ էտապ, օրիենտացիա, դոգմա, պետական ապարատ և այլն: Կան նաև որոշ լեզվական անհարթություններ:

2. Ներածության մեջ սահմանվում է, որ «աշխատանքը մի փորձ է՝ վեր հանելու Մայր Աթոռի հարաբերությունները ռուսական արքունիքի հետ 18-րդ դարում», մինչդեռ վերնագրում նշված է «Սկզբից մինչև 19-րդ դարի սկիզբը»: Սա հակասություն է, որ անհրաժեշտ է վերացնել:

3. Լավ կլիներ մեջբերել «Հայ-ռուսական դաշինքի» հայոց կողմից կազմված նախագիծը (Արղության-Լազարյան), որպեսզի ընթերցողը հնարավորություն ունենար սեփական դիտումով եզրակացություն անելու և ստիպված չլիներ ընդունելու այս կամ այն ուսումնասիրողի հնարավոր անընդունելի հաստատումը:

4. Ղուկաս կաթողիկոսի ծայրահեղ զգուշավորությունը դժվար թե ճկուն դիվանագիտության ապացույց լինի. դիվանագիտությունը ծայրահեղ զգուշավորության վրա հիմնելը կարող է և սխալ հետևանքների տանել, ինչպես այս դեպքում:

Այս բոլորով հանդերձ Թորգոմ աբեղա Խարապյանի վերոհիշյալ աշխատությունը ունի պատշաճ գիտական մակարդակ և հիմք է տալիս հանձնաժողովին թույլատրել հեղինակին հանդես գալու իր աշխատության բանավոր պաշտպանությամբ»:

Հայր Թորգոմը նախ իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ հայրական հոգատար վերաբերմունքի և ուշադրության համար, ապա ներկաներին ծանոթացնում իր կատարած աշխատանքի ընթացքին, պատասխանում և որոշ բացատրություններ տալիս հանձնաժողովի կատարած դիտողություններին:

Այնուհետև հանձնաժողովը հայր Թորգոմին հարցումներ անելուց և բավարար պատասխաններ ստանալուց հետո, աշխատանքի հեղինակին հարց ուղղելու իրավունք է տալիս հոգևոր ճեմարանի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր պարոն Սիմոն Գրքաշարյանին: Պարոն Գրքաշարյանի հարցին հայր Թորգոմի գոհացուցիչ պատասխանով վերջանում են հարցումները:

Փոքրիկ դադարից հետո հանձնաժողովը հայտնում է իր որոշումը՝ ասելով, որ հայր Թորգոմի աշխատանքը գնահատվում է բավարար:

Տ. Ներսես եպս. Պոլատյանը շնորհավորանքի և քաջալերանքի խոսքեր է ուղղում հայր Թորգոմին՝ ցանկանալով նրան բեղուն և եռանդով եկեղեցական գործունեություն՝ ի շահ Հայ Եկեղեցու և ժողովրդի:

Խմբովին երգված «Հայր մեր»-ով ավարտ-

Տ. ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՐԱԶՅԱՆԸ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱԲԱՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

վում է մասնավոր վարդապետական աստիճան ստանալու համար հայր Թորգոմի ներկայացրած աշխատանքի բանավոր պաշտպանությունը:

Ապրիլի 3-ին, առավոտյան ժամերգությունից հետո, Մայր տաճարի Իշման ս. սեղանի առաջ, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլսպալյանի, կատարվում է մասնավոր վարդապետական չորս աստիճանների տվչության հանդիսավոր և հոգեպարար արարողությունը:

Ներսես սրբազանը վգեստավորված, մոմակիրների, վաղդապետների, քահանաների և սարկավագների ուղեկցությամբ ավանդատնից առաջնորդվում է Իշման ս. սեղան:

Դարավոր, սրբական ու խնկաբույր կամարների տակ նորից հնչում է աստվածաբուխ շարականների հոգեվմայլ երգեցողությունը՝ հուզելով ներկաներին և ավելի խորհրդավոր ու հանդիսավոր դարձնելով պահը: Եկեղեցու չորս կողմերում սրբական հայրը ծնրադիր հայր Թորգոմին է տալիս վարդապետական գավազանը և աղոթում Սուրբ Հոգուն, որպեսզի Նա Իր աստվածային շնորհները առատապես բաշխի հայր սուրբին՝ դարձնելով նրան լուսավոր և իմաստուն հոգի. «Առ չորրորդ աստիճան մասնաւոր վարդապետութեան ի ձեռաց Հոգւոյն Սրբոյ և երթ և քարոզեա կաւետարանն սուրբ և կպրակս առաքելոց և մարգարէից, և կպատուէր օրինադրեաց Հարցն Սրբոց՝ ողջամիտ վարդապետութեամբ՝ ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ, առանց աչառանաց և երկիւղի ուսոյ և խրատեա՛, սաստեա՛, յանդիմանեա՛, և դարձեալ մխիթարեա՛ ըստ առաքելոցն բանի: Եւ դու եղիցիս առաջի Տեառն մշակ առանց ամօթոյ ծառայ ակնուական, գրելով կանոն քո ի դպրութեան կենաց ընդ երջանիկ դասս սուրբ վարդապետաց:

Տուր՝ Տէր՝ ծառայիս քում զշնորհս քարոզելոյ ի լուր ժողովրդեան, զմեղաւորսն սրբել, զմոլորեալսն դարձուցանել, զտգետսն իմաստնացուցանել, զստահակսն կշտամբել, և զբարիսն հաստատել, և հրաւիրել զհաւատացեալ հօտս քո բանաւոր յարքայութիւն քո և ի փառս ամենակալ տէրութեանդ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Տվչության արարողության ավարտին սրբական հայրը շնորհավորանքի, հորդորների ու բարեմաղթությունների իր խոսքն է ուղղում մասնավոր վարդապետական չորս աստիճաններ ստացած հայր Թորգոմին. «Սիրելի հայր սուրբ, այստեղ հավաքված քահանաները, սարկավագները և դպիրները, ինչպես նաև ներկա հավատացյալ ժողովուրդը, վստահ եմ, որ բոլորը սրտանց շնորհավորում են ձեզ մասնավոր վարդապետական աստիճան ստանալու առթիվ: Մոտ ապագային դուք գնալու եք հովվական ծառայության և միաժամանակ, եթե առիթ գտնեք, շարունակեք նաև ձեր ուսումը: Մաղթում եմ ձեզ հաջողություններ կյանքում, և ինչ էլ որ կարողանաք կյանքում կատարել հոգևոր-ազգային, շինարար աշխատանքի բնագավառում, կատարեցեք, և ինչ-որ կարող եք առնել, գիտության իմաստով ձեր պաշարն ավելացնելու՝ առեք: Եվ մի օր՝ լցված, բեռնավորված հոգևոր աշխատանքի փորձառությամբ և նաև կրթության պտուղներով վերադառնաք այստեղ՝ ծառայելու համար Աստուծո անդաստանի մեջ: Շնորհավորում և մաղթում եմ ձեզ առողջություն և երկար-երկար տարիների կյանք և հոգևոր ծառայության ասպարեզում՝ Աստուծո օգնականություն»:

Տ. Թորգոմ վարդապետ Խարապյան

Ծնվել է 1958 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում: Ավագանի անունով՝ Խաչիկ: 1964 թ. ծնողների հետ Լիբանանից ներգաղթել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Լենինական քաղաքում: Նույն թվականին հաճախել է Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց, որի ուսման լրիվ դասընթացն ավարտել է 1973 թ.:

Նույն թվականի սեպտեմբերին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1978 թ. մայիսի 27-ին Մայր տաճարում, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1979 թ. հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի ուսումնառության վեցամյա շրջանը և անմիջապես նշանակվել Մայր Աթոռի դիվանատանը որպես քարտուղարության աշխատակից:

1980 թ. ապրիլին հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի է ունեցել նրա «Հառիճա վանքը» ավարտաճառի բանավոր պաշտպանությունը, որի համար նա արժանացել է «գերազանց» գնահատականի և հոգևոր ճեմարանի դիպլոմի:

1980—1981 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1981—1982 թթ. տարեշրջանում, որպես ապատ ուսնկնդիր, հետևել է Զագորսկի վանքի հոգևոր ակադեմիայի դասընթացներին՝ միաժամանակ ծառայելով Մոսկվայի հայոց եկեղեցում:

Զագորսկից վերադառնալուց հետո նորից աշխատել է Վեհարանում:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Ս. Էջմիածնի

Մայր տաճարում ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Ներսես եպս. Պոլադյանի:

1984 թ. ապրիլից նշանակվել է Մայր Աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան գանձատան» տնօրեն, ուր աշխատում է մինչև այսօր:

Տ. Թորգոմ վարդապետը, օժտված լինելով լավ ձայնով և ծիսագիտական հարուստ գիտելիքներով, իր եռանդուն մասնակցությունն է բերում եկեղեցական արարողություններին:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը սրտանց շնորհավորում է Տ. Թորգոմ վարդապետ Խարապյանին այս ուրախ առիթով և ցանկանում նրան եկեղեցա-ազգային անձանձրույթ գործունեություն, որպեսզի նա դառնա «հովիւ քաջ» և «մշակ առանց ամօթոյ»:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 17-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Դատաստրին):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Թորգոմ աբեղա Խարապյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Տ. Եղնիկ քին. Պետրոսյանը «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ» (Ղուկաս ԺԸ 1) բնաբանով:

Իր խոսքի ընթացքում տեր հայրն ասում է. «Քրիստոս՝ Աստծու Որդին, խոսեց երկընքի արքայության և դեպի այդ արքայությունը տանող ուղիների մասին: Քրիստոս մատնանշում է այդ ուղիներից աղոթքը: Աղոթքը հանդիսանում է ամեն մի քրիստոնյայի հիմնական պարտականություններից մեկը»:

Այնուհետև քարոզիչ տեր հայրը վերապատմում է Դատավորի առակի բովանդակությունը և շարունակում. «Այս առակից հետո, սիրելի հավատացյալներ, Քրիստոս եզրակացնում է ասելով. «Լսեք, ժողովուրդ, եթե այս անվգամ մարդը տեղի տվեց այրի կնոջ հարատև թախանձանքին», ապա մեր բոլորի երկնավոր Հայրը՝ Աստված, որ անգութ, անիրավ ու անտարբեր չէ մարդկանց նկատմամբ, որքան առավել ևս տեղի կտա մեր աղոթքներին, մեր թախանձանքներին, եթե նրանք լինեն հարատև, անկեղծ ու ակնիվ»:

Հիսուս մեզ թելադրում է հարատևություն, որովհետև մենք չգիտենք այն ժամը, որ Աստված պիտի հատուցի մեր խնդրանքները: Դրա համար պետք է աղոթել հարատև՝ գիշեր ու ցերեկ:

Մենք, գտնվելով Պահոց շրջանում, այս մտորումներով քայլ առ քայլ գնանք դեպի Քրիստոսի հրաշափառ Հարությունը»:

Տեր հայրն ավարտում է իր քարոզը հավատացյալներին ուղղված բարեմաղթություններով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մարտի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում հերթական միաբանական հավաքույթ:

Քարոզքննությունից հետո Վեհափառ Հայրապետն ունկնդիրներին պատմում է սույն թվականի փետրվարի 20-ից մինչև մարտի 11-ը Ֆրանսիա կատարած Իր այցելության և որոշ հանդիպումների մասին:

*
* *

Մարտի 23-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարի Իշման ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

*
* *

Մարտի 24-ին, կիրակի.—Քառասնորդական Պահոց (Գալստեան):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը «Որ վխորհուրդ Քո գալըստեան յառաջագոյն գուշակեցեր մարգարէիւք Իսրայելի» (Շարական) բնաբանով:

«Այսօր, սիրելի հավատացյալներ, Մեծի պահոց վեցերորդ կիրակին է, և այս կիրակին մեր հայրապետները կոչել են Գալըստեան կիրակի:

Երբ ասում ենք Գալստյան կիրակի, հավատացյալների մտքերը ակամայից բևեռվում են Քրիստոսի երկրորդ գալստյան գաղափարին: Աստված Իր Որդուն ուղարկեց աշխարհ մարդկության փրկության համար, մարդկությանը դեպի Աստվածություն՝ երկինք բարձրացնելու համար:

Քրիստոս սերը բերեց աշխարհ և այդ սերը ավելի հզոր և ուժեղ էր, քան աշխարհի որևէ ուժ կամ հզորություն: Աստվածային սիրո Ուժը, որ հորդում է մարդու հոգու մեջ և արտահայտվում սիրո, զոհողության, մարդասիրության միջոցներով, զոհվեց մեկ համար, և երեք օր հետո Իր գերեզմանից հարություն առավ: Հարությանը հաջորդեց պայծառակերպ Համբարձումը, և Հիսուս խոստացավ Իր աշակերտներին, որ նորից կգա աշխարհ՝ դատելու համար չարն ու բարին:

Գալստյան կիրակին խորհրդանշում է մարդու սպասումը Հիսուս Քրիստոսի երկրորդ անգամ աշխարհ գալուն՝ դատելու համար արդարներին և մեղավորներին:

Գրեթե իր լրումին է հասնում Պահեցողության շրջանը: Նրանք, ովքեր կարողացան այս ընթացքում բարեգործությամբ և մարդասիրությամբ մաքրել իրենց հոգիները, ուրեմն Տերը իսկապես կգա և ի դեմս նրանց կգտնի մաքուր տաճարներ: Նա մեր ներաշխարհը պետք է մաքրված տեսնի, ինչպես գարնան լուսաշող առավոտ, որպեսզի կարողանա բնակվել այնտեղ:

Այս մտքերով աստիճանաբար մոտենանք Զատկական Հրաշալի օրերին, որպեսզի Տերը կարողանա հարություն առնել նաև մեր ներաշխարհի մեջ՝ պայծառացնելու համար մեր հոգիները»:

*
* *

Մարտի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանի ընդունելությունների սրահում տեղի է ունենում հերթական միաբանական հավաքույթը:

Հավաքույթի ընթացքում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը միաբաններին է ներկայացնում Տ. Սուքիաս վրդ. Պարոնյանի «Քաղկեդոնեան ժողով և Հայաստանեայց Եկեղեցի» գիրքը:

Սրբազան հայրը ներկայացնում է գրքի բովանդակությունը. հեղինակը անդրադառնում է մինչև Քաղկեդոնի ժողովը տեղի ունեցած երեք տիեզերական ժողովներին և մանրամասն քննարկում Քաղկեդոնի ժողովի որոշ հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում են Հայ Եկեղեցու դավանանքի հետ:

Վերջում տեղի է ունենում կարծիքների աշխույժ փոխանակում:

*
* *

Մարտի 31-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

«Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը խուռներամ հավատացյալներին քարոզում է «Ծերք ոստովք ձիթենեօք եւ տղայք ոստովք արմաւենեօք եւ երամ-երամ դասուք աղաղակէին. օրհնեալ որ գայ յանուն Տեառն» բնաբանով:

«Ծաղկազարդի առավոտյան Հիսուս Իր աշակերտներից երկուսին ուղարկում է մոտակա գյուղը՝ այնտեղից Իր համար ավանակ բերելու, որպեսզի Բեթանիայից դրանով ուխտի գնա Երուսաղեմի սուրբ տաճարին: Հիսուս նստած ավանակին, Իր աշակերտների ուղեկցությամբ, ուղղություն է բռնում դեպի Երուսաղեմ: Ճանապարհին կանգնած ժողովուրդը, որը մեծ կարոտով ու ակնկալությամբ սպասում էր Մեսիային, այն Մեսիային, որը բերելու էր իրենց ցանկալի և երջանիկ կյանքը, փառավորում և մեծարում էին Աստվածորդուն ասելով. «Օվսաննա, օրհնյալ է այն, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնություն Դավթի որդուն»: Եվ ձեռներին

բռնած արմավենու և ձիթենու ճյուղեր, իրենց հագուստներն էին փռում ճանապարհին, ցնծում և ուրախանում էին բոլորը:

Հիսուս փառքով է մտնում Երուսաղեմ, իմանալով, սակայն, որ այդ փառքը անցավոր է: Այդ փառքից մի քանի օր հետո ժողովուրդը կանգնելու է հրապարակներում և աղաղակելու է՝ «Ի Խաչ հան զդա»: Երուսաղեմ մտնելուն պես տաճարը մաքրում է առևտրականներից, որով ուզեց ցույց տալ, որ ամեն մի մարդ իր կյանքի ընթացքում պետք է մաքրի իր ներսի տաճարը, ուր եթե մաքուր լինի, կբնակվի Աստված:

Սիրելի հավատացյալներ, իր ավարտին է մոտենում Քառասնորդական պահոց շրջանը: Եկող շաբաթ Ավագ շաբաթն է՝ Հիսուսի չարչարանքների շաբաթը: Մենք քայլ առ քայլ պետք է հետևենք և մասնակից դառնանք նրա չարչարանքներին և դիմավորենք նրա հաղթական հարությունը:

Սիրելի հավատացյալներ, այսօր Ծաղկազարդ է, Հիսուսի վերջին անգամ Երուսաղեմ գալու հիշատակը: Մենք վստահ ենք, որ դուք ձեր բարի գործերով այս ս. տաճարի մեջ դիմավորում եք հիմա Նրա գալուստը: Ոչ, ոչ թե տաճարից ներս, այլ մեր հոգիներից ներս: Եվ եթե մենք կարողացանք իրագործել այդ ամենը, ուրեմն երանի է մեզ, թող գա մեր Փրկիչը բնակվելու համար մեր մեջ և Իր գալուստով թող բերի աշխարհին խաղաղություն, մարդկանց մեջ հասկացողություն, հսկա պետությունների մեջ համերաշխություն և հաշտություն, որպեսզի հանկարծ այս գեղեցիկ աշխարհը չբռնկվի միջուկային կենքով և ոչնչանա:

Այս սրբազան պահին մեր բոլորիս աղոթքն այն է, որ Փրկիչը աշխարհ գա և տա խաղաղություն և մարդկանց մեջ հաճություն, այժմ և հավիտյանս, հավիտենից, ամեն»:

*
* *

Նույն օրը, երեկոյան, հանդիսավոր ժամերգությունից հետո, Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա տեղի է ունենում Դոնբացեքի հանդիսավոր և հոգեպարար արարողությունը:

*
* *

Ապրիլի 8-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Եղիշե քհն. Բաղրամյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Ապրիլի 14-ին, կիրակի.—Կրկնապատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը:

«Հայր մեր»-ից առաջ հայր սուրբը քարոզ է խոսում «Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. չէ աստ, այլ յարեաւ» (Ղուկաս ԻԴ 5—6) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին են ժամանում Միավորված Ազգերի Կազմակերպության «Ատոմային ուժերը խաղաղ նպատակներով օգտագործելու համար» հանձնաժողովի տարբեր երկրների շուրջ 70 անդամներ՝ Ռուսական ակումբի ղեկավարի գլխավորությամբ:

Հյուրերը հանդիպում են ունենում Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես եպս. Պոկապալյանի հետ, որը հյուրերին ծանոթացնում է Ս. Էջմիածնի պատմական անցյալին, Ս. Գրիգոր Լուսավորչի գործունեությանը, հայ ժողովրդի պատմության անցյալի և նորագույն ժամանակների պատմական առանձնակի դեպքերին և Հայ Եկեղեցու դերին ու նշանակությանը: Սրբազան հայրն ընդգծում է, որ հանձնաժողովի կատարած աշխատանքը ներկա ժամանակաշրջանի համար ունի շատ կարևոր նշանակություն: Ատոմային ուժը «մի ուժ է,—ասում է Ներսես սրբազանը,—որը եթե չօգտագործվի ի նպաստ խաղաղության, ապա կարող է մարդկային կյանքի կործանման պատճառ դառնալ»:

Հանդիպման վերջում սրբազան հայրը հույս է հայտնում, որ հանձնաժողովի ներկայացուցիչները կկարողանան հասնել առաջադրված նպատակին, որպեսզի ատոմային ուժը միշտ օգտագործվի խաղաղ և ստեղծարար նպատակների իրագործման համար:

Այդ օրը հյուրերն այցելում են Մայր տաճար, Վեհարան և «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատուն:

*
* *

Ապրիլի 21-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում և քարոզում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների

հայոց Արևելյան թեմի Դետրոյտ քաղաքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Փառեն վրդ. Ավետիքյանը:

*
* *

Ապրիլի 28-ին, կիրակի.—Կարմիր Կիրակէ:

Այսօր Մայր տաճարի Ավագ ս. սեղանի վրա ս. պատարագ է մատուցում Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը քարոզ է խոսում «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն Իւրով մեզ զկեանս պարգեւեաց» (Շարական) բնաբանով:

Իր քարոզի մեջ հայր սուրբն ասում է. «Սիրելի հավատացյալներ, այսօր Հինանց չորրորդ կիրակին է:

Այս կիրակին ունի հատուկ անվանում. այն կոչվում է Կարմիր կիրակի: Կարմիր գույնը փոխաբերական իմաստով կարող ենք ընդունել որպես մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի Հարության խորհրդանիշ: Սակայն կարմիր գույնն ունի նաև այլ խորհրդանշական մեկնություններ: Այն խորհրդանշում է արյուն և նահատակություն, ինչպես նաև պայքար և հաղթանակ:

Բոլոր Հինանց կիրակիները կապվում են մեկը մյուսի շարունակությունը, իմաստային կապի տեսակետից նույնպես: Քրիստոսի Եկեղեցին տարածվեց, բայց ունեցավ նաև հալածանքների, տառապանքների ու փորձությունների շրջան, որի խորհրդանիշն է համարվում այսօրվա Կարմիր կիրակին:

Մարտիրոսների սրբական արյամբ օծվել է նաև հողը Հայկական՝ նահատակությամբ Թադեոս և Բարթողիմեոս սուրբ առաքյալների»:

Այնուհետև հայր սուրբն անդրադառնում է հայ ժողովրդի արյունալի անցյալին՝ կապելով այն օրվա խորհրդին և Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակությանը: 1915 թվականի ցեղասպանությանն առնչվող որոշ խորհրդածություններից հետո հայր սուրբն ասում է. «Սարդարապատի ճակատամարտով Արևելյան Հայաստանը բռնեց փրկության ուղին, և այսօր, սիրելի հավատացյալներ, մեր մայր հայրենիքն իր նորօրյա կենցաղով, գիտությունների ակադեմիայով ու նախնիների խոսքը պեղող իր Մատենադարանով, համալսարանով, տիեզերջի անհունը քննող իր Բյուրականով և, վերջապես, համայն հայության փարոս Ս. Էջմիածնով, իր նոր խոսքն է ասում աշխարհին:

Փառք մեր վերածնված մայր հայրենիքին, փառք մեր հարուցյալ ժողովրդին և երիցս օրհնություն Եղեռնի մեր նահատակներին, ամեն»:

Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Ալֆորվիլ քաղաքի քաղաքապետի անմիջական տեղակալ տիար Արման Նշանյանն ու սփյուռքահայ այլ ուխտավորներ:



ՔԱՐՈԶ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սըրբոյ. ամէն»

«Երանի սգաւորաց, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթէոս Ե 4):

Սիրելի հավատացյալներ, ինչպես գիտենք, մեր Տեր Հիսուս Քրիստոս Իր երկրային կյանքում կանական առակների միջոցով խոսեց ճշմարիտ և առաքինի բարոյականին հասնելու մասին:

Նրա կարևոր քարոզներից մեկն է «Լեռան քարոզ»-ը, որ Փրկիչն արտասանեց քրիստոնյաների կողմից «Երանությանց լեռ» կոչված բարձունքի վրա: Հիսուս այդ քարոզը ուղղեց տասներկու նորընտիր աշակերտներին և հոգևոր ծարավով տոչորվող հավատացյալ ժողովրդին: Քրիստոս հաստատեց, որ Ինքը կորացնում է բարոյականության և առաքինության ներքին հիմքերը և ոչ թե արտաքին և աշխարհային ձիրքերը: Ներքին հկոր բարոյական հիմք ունեցողներին «Երանի՜» է տալիս, իսկ արտաքին առավելությունների ձգտողներին՝ «վա՜յ» էր կարդում: Այդ երանիներից մեկն էլ ուղղված է սգավորներին. «Երանի սգավորներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը»:

Մարդն իր ծննդից մինչև մահ ունենում է ուրախության և սգո բպում օրեր: Ուրախ օրերին՝ վայելելով երկրային բարիքները կարող է չափավանցնել դրանք, ինքնամոռացությամբ մղվել մոլության և տուրք տալ կործանարար կրքին: Մոռանում և անտեսում է իր իսկ տենչած բարիքներն ստեղծողին ու արարողին: Իսկ տրտմության և սգո օրերին մարդը սկսում է հոխորտալ ու բողոքել ընդդեմ աշխարհն ստեղծողին և նրան մեղադրել անարդարության և անգթության մեջ: Սակայն մեղավոր մարդու տրտունջքն ու ինքնաարդարացման փորձերը միշտ էլ անհիմն են եղել: Նա անխուսափելիորեն պատժվել է՝ մոլոր օրերին գործած մեղքերի համար:

Մարդկության պատմության առաջին պատիժը մարդու դրախտից արտաքսվելն էր: Սա նաև երկրային կյանքի առաջին սուգն էր: Եդեմից վռնդված մարդը գիտակցեց իր մեղքը և սգաց ոչ թե դրախտում վարած բարվոք կյանքի կորուստը, այլ սգաց Աստուծո կորուստը:

Ապա մարդաշատ փողոցում մորը կորցրած մանուկի պես՝ մարդն սկսեց փնտրել Աստծուն դարեր շարունակ, մինչդեռ բարեգութ Աստված միշտ մարդու կողքին է:

Եթե հետադարձ հայացք գցենք փնտրտուքի այդ ճանապարհին, կտեսնենք, թե մարդը հոգեկան այդ սուգը փարատելու և մխիթարվելու համար նյութական չաստվածներ է ստեղծել, ապավինել նրանց, երկրպագել ու պաշտել: Սակայն մարդու հոգին մնացել է սին ու դատարկ:

Մարդը չի դադարում Աստված փնտրելուց: Գիտակցության ավելի բարձր մակարդակում նա դիմում է իմաստության: Գիտության տարբեր բնագավառներում Աստծուն փընտրելու և գտնելու բպում փորձեր են արվում, սակայն կուր ջանքեր են գործադրվում, որովհետև փոխանակ իրենց իմաստություն տվողին պաշտեն, իմաստությունն են պաշտում: Կարծես այսպիսիների մասին է Ժողովողն ասում, «Ես իմ սիրտը իմաստությունը ճանաչելու և խնդությունը գտնելու տվի, քանի որ շատ իմաստության մեջ շատ տրտմություն կա. ու իր գիտությունն ավելացնողը իր վիշտն է ավելացնում» (Ժողովող Ա 17—18):

Չէ՞ որ մարդիկ այս երկինքն ու երկիրը ստեղծող Տեր ունեն, և մարդու գոյության իմաստը Արարչի փառաբանումը պիտի լինի, այլապես ի՞նչ իմաստ ունի գալ աշխարհ, աննպատակ ապրել և սգալ: Մի՞թե մարդն աշխարհ գալով միայն պիտի սգա և ըմպի դառնության բաժակը: Չէ՞ որ Աստված մարդու համար ստեղծեց երկիրը և ամենայն բարիք, որ նրա վրա է, ապա ինչո՞ւ պիտի մարդը սգա;

Ահա այս հակասական վիճակն էր տիրում մարդու ծարավից ճաքճքված հոգում, երբ գթառատ Աստված մարդուն կարկառեց Իր բազուկները, և Աստուծո Որդին ջանաց օգնել նրան՝ ըմպելու կենաց աղբյուրը: Փրկիչն Իր երկրային կյանքում սգաց ու տանջվեց մարդու համար և ցույց տվեց Աստծուն գըտնելու միակ ուղին: Աստվածորդին Իր արյամբ հատուցեց մարդու մեղքերից փրկությունն ու հոգեկան ապատությունը:

Այսօր մարդկությունը ավելի քան երբևէ կարիք ունի սգալու, քանզի ստորանալով, ապրելով երկրային հեշտանքներով լի կյանքով՝ բթացնում է իր հոգու զգայարանները և տուրք է տալիս մարմնի կարիքներին: Ավելին, ատամ ենք կրճտացնում միմյանց դեմ, փոխանակ հետևելու Աստվածատուր պատվիրանին՝ սիրելու մեր ընկերոջը մեր անձի պես:

Այսօր հայ ժողովուրդը սգում է իր պատմության մեծագույն ողբերգությունը՝ Եղեռնի 70-ամյակը: 1915 թվականին Թուրքիան նույնպե՞ս Աստծուն որոնելու համար իր արյան ծարավը հագեցրեց հայ ժողովրդի դեմ իրագործած սպանդով: Մի՞թե սա հոգու սով չէ: Ինչո՞ւ ենք մոռանում մարդկության փորձություններով լի ողբերգական ճանապարհը: Չէ՞ որ մեղքի հատուցումը պատիժն է, ուրեմն ինչո՞ւ է մարդն այսքան հպարտացել իր կարողությամբ և գիտությամբ և չի անսում Աստուծո ձայնին: Մի՞թե կարիք կա մի նոր Սոդոմ-Գոմորի կամ մի նոր Եղեռնի: Ուրեմն իբրև ժողովուրդ սգանք մեր նահատակ եղբայրների արդար արյունը և ձգտենք Աստվածային բերկրանքին՝ երկնից արքայության:

Քանզի միակ սպեղանին, որ կարող է բուժել մարդու սգավոր հոգին՝ Աստուծո ճըշմարիտ ճանապարհին հետևելն է:

Հետևաբար՝ «Երանի սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն»: Եվ «Վայ ձեզ, որ այժմ ծիծաղում եք, որովհետև պիտի սգաք ու պիտի լաք» (Ղուկ. Զ 25):

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ, ամէն»:

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉՈՒԼՋՅԱՆ
Հոգևոր ճեմարանի Ե լսարանի ուսանող





ՀԱՆԳԻՍՏ Տ. ԶԻՆՈՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՄԱԺՈՒԳԱՅԻ (1896—1985)

Մարտի 8-ին, կյանքի 89-րդ տարում, իր Տեր հանգյավ Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի ռուսաց տաճարի վանահայր Տեսրիցխարոյի միտրոպոլիտ Գերաշնորհ Տ. Զինովի Մաժուգան:

Հայոց Հայրապետը և Ս. Էջմիածնի ողջ միաբանությունը ճանաչում էին Տ. Զինովի միտրոպոլիտին որպես սրբակյաց, բարեհոգի և ջերմեռանդ բարի հայր: Նա Հայոց Հայրապետի և Ս. Էջմիածնի մեծ բարեկամն էր:

Տ. Զինովի միտրոպոլիտը, ավագանի անունով՝ Զախարի Աքիմովիչ Մաժուգա, ծնվել է 1896 թվականի սեպտեմբերի 14-ին Ուկրաինայի Գլուխովե քաղաքում, բանվորի ընտանիքում: Մանուկ հասակում կորկվում է ծնողներից: Նա սովորում և ավարտում է տեղի եկեղեցու ծխական ուսումնարանը: 1912 թվականին ընդունվում է Ծնունդ Սուրբ Աստվածածնի անվան Գլինսկի Անապատի վանք՝ Սումսկի մարզում, ուր ունկնդրում է վանական տարբեր դասընթացներ: 1916 թ. վինակոչվում և մասնակցում է առաջին համաշխարհային պատերազմին: 1921 թվականին, զորացրվելուց հետո, վերադառնում է իր նախկին վանք և կուսակրոն է դառնում՝ վերանվանվելով Զինովի:

1922 թվականին գալիս է Կովկաս և ընդունվում Դրանդովսկու Ուսպենսկի (Վերափոխման) վանք, Սուխումի քաղաքի մոտ, ուր և ձեռնադրվում է կիսասարկավագ, իսկ 1925 թվականին՝ աբեղա: 1925—1930 թթ. ծառայում է Սուխումի քաղաքի Ս. Նիկողայոս տաճարում, իսկ 1936 թվականին՝ Դոնի Ռոստով քաղաքի Ս. Սոֆիա եկեղեցում: 1936—1942 թթ. հիվանդության պատճառով ժամանակավորապես չի ծառայում: 1942—1945 թթ. հոգևոր ծառայություն է կատարում Թբիլիսիի Ս. Սիոն Մայր տաճարում և Մցխեթայի Օլգինսկի վանքում, 1945—1947 թթ.՝ Հայաստանի Կիրովո գյուղի Ս. Նիկողայոս եկեղեցու վանահայր, 1947—1950 թթ.՝ Բաթումի Սվյատո-Դուխովսկի եկեղեցու վանահայր, իսկ 1950 թվականից մինչև իր կյանքի վերջը ծառայել է Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի ռուսաց եկեղեցում, որպես վանահայր:

Առ ի գնահատումն իր հոգևոր անբասիր աշխատանքների, Զինովի միտրոպոլիտը իր երկարամյա ծառայությունների ընթացքում ստացել է հոգևոր բազմաթիվ շնորհաբաշխություններ, հոգևոր պարգևատրություններ և շքանշաններ ռուս, վրաց և արտասահմանյան ուղղափառ Եկեղեցիների պետերի կողմից:

Մարտի 14-ն է: Թբիլիսիի Ալեքսանդր Նևսկի եկեղեցին լեցուն է հավատացյալնե-

րի խուռներամ բազմությամբ: Հանգուցյալի հիշատակը հարգելու են եկել նաև Վրացական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի լիազոր պրն. Անզոր Ցիկլաուրին իր աշխատակիցներով:

Առավոտյան ժամը 10-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագին ներկա են Համայն Վրաց կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը, Վրաց Ուղղափառ Եկեղեցու Ս. Սինոդի բարձրաստիճան հոգևորականները, Սիմֆերոպոլի և Ղրիմի արքեպիսկոպոս Լեոնտին:

Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից սույն սրբազան պատարագին է մասնակցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը՝ Տ. Դավիթ քահանա Զելվեյանի հետ: Վիրահայոց թեմի առաջնորդը այս տխուր առթիվ Համայն Վրաստանի կաթողիկոսին է ներկայացնում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ցավակցական հեռագիրը:

Ս. պատարագից հետո, հոգեհանգստյան պաշտամունքի դամբանականից առաջ, Նորին Սրբություն Իլիա Բ-ը ի լուր ժողովրդյան ընթերցում է Հայոց Հայրապետի հեռագիրը:

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆԻՆ

Թբիլիսի, Հայոց Եկեղեցի

Խոր վշտով ընդունեցինք միտրոպոլիտ Զինովիի մահվան լուրը: Այս առիթով ցավում ենք հատկապես, քանի որ կյանքից հեռացավ հոգևոր դասի ևս մի ակնիվ ու իր կոչմանը արժանի ներկայացուցիչ, որն իր ողջ կյանքը նվիրեց ծառայելու Ռուս Պրավոսլավ Եկեղեցուն ու նրա հավատացյալ ժողովրդին: Ի Տեր հանգուցյալ Նորին Սրբություն Զինովիի հիշատակը միշտ կմնա մեր սրտերում:

Ս. Էջմիածնում ջերմորեն աղոթում ենք Բարձրյալին՝ հանգուցյալի հոգու հանգստյան համար, որպեսզի նրա հոգին արժանանա Երկնից Արքայությանը:

«Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» (Մատթ. Ե 8):

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
13 մարտ 1985 թ.

Հեռագրի ընթերցումից հետո, Համայն Վրաստանի կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ը մեծ հարգանքով և եղբայրական սիրով ու կարոտով խորին շնորհակալություն է հայտնում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին ցավակցության համար:

Հանգուցյալ Տ. Զինովի միտրոպոլիտի դիակը ամփոփվում է նույն եկեղեցու աջակողմյան գավթում: Վերջում տրվում է հոգեճաշ:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:





Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ԱԶԱՏԱՍԻՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Դժվար է ճշգրիտ ասել, երբ է Մայր Հայաստանի գաղափարը իբրև խորհրդանիշ շնչավորվել, տեսանելի կերպարանք ստացել հայ հասարակական մտքի խաչուղիներում: Բայց աներկբայելի է, որ դեռ մեր թվագրությունից առաջ, հեռավոր դարերում, Հայաստանի գաղափարն արդեն իրական կերպարանք է առել, հյուսվել և մարմնացել ժողովրդի ստեղծագործ մտքի ու հոգու թելերից, հարատևել առ այսօր և կատարել այն դերը, որ կատարել է Հայրենիքի գաղափարը մյուս ժողովուրդների պատմական կյանքում:

Հայաստանի խորհրդանշական գաղափարի նյութական արտահայտության առայժմ հայտնի նմուշները վերաբերում են առաջին-երկրորդ դարերին: Հռոմեական տիրապետության ժամանակաշրջանին վերաբերող շքադրամներն են դրանք. հռոմեացի տիրակալ Տրայանոսի ժամանակ թողարկված և շրջանառության մեջ մտած արծաթյա, ինքնակալի դիմադրոշմով շքադրամ: Եվ նույն դրամին՝ գլխիկոր, գետնին նստած կին, շուրջը ցիրուցան սրեր ու վահաններ և լատիներեն դրոշմվածք՝ «ARMENIA»: Պարտված Հայաստանի խորհրդանիշն է դա՝ կնոջ կերպարանքով, սգավոր, հնապանդ ու վինաթափ: Մի այլ շքադրամի վրա դարձյալ Հայաստանն է՝ թագավուրկ, պարտված կնոջ պատկերով: Տասնամյակներ հետո Հռոմում կտրված ոսկյա և արծաթյա շքադրամներին, որոնք ի հայտ են եկել պեղումներից, դարձյալ նույնն է: Դրամի մի երեսին Հայաստանին տիրած Մարկոս Ավրելիոս կայսեր կիսանդրիի դրոշմվածքն է, հակառակ երեսին՝ նույն սգակիր կինը, որի թիկունքին պարտության մատնված լինելու խորհրդանիշերը՝ ցցահանված վենքեր և մակագրություն՝ «ARMEN»[1]: Անիրավացի չէ արևմտահայ հմուտ բանասերը, երբ նկատում է, թե «Մայր Հայաստանի արդի ընտանեցած պատկերը իր նախատիպը կառնե Հռոմեացի կորավարներու փորագրություններեն և դրամներեն, որոնք Հայաստանը կներկայացնեն կապված և պարտված»[2]: Ս. Երեմյանն իր հերթին նկատում է, թե «տխրանույշ պատկերը... ընդօրինակություն է իտալ բանաստեղծներեն... սգավոր Մայր Իտա-

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 820—821:

[2] Հ. Օշական, Հայ գրականություն, Երուսաղեմ, 1942, էջ 135:

լիային պես՝ սգավոր Մայր Հայաստանը գեղեցիկ է, ունի մահացու վերքեր, խոր քունի մեջ: Իտալ և հայ բանաստեղծները՝ կհարցնեն, թե ե՞րբ պիտի արթնա մայր հայրենիքը»[3]:

Մայր Հայաստանի գեղարվեստական վերարտադրությունն է նաև մեր պատմահոր՝ Խորենացու Ողբը: Ընդամենը մի քանի էջում պատմահայրը խտացրել է տառապանք, սեր և աղի արցունք, վեհություն և վիշտ ու կոծ, բայց նաև հայրենասիրության՝ հայաստանասիրության մղում:

Խորենացուց սկսած, ողբն ու ողբասացությունը հագեցել են բարձր մղումներով, օժտվել ոչ միայն կորստի ցավն արտահայտելու, այլև կրկին ու վերստին հայրենասիրաբար ապրելու և արարելու կոչով: Այդպես ողբասացությունը միահյուսվել է հայրենասիրությանը: Այդ պատճառով էլ դրանք շատ են մեր պատմության ու գրականության մեջ: Ողբասացությունը թաթախված էր լավատեսությամբ, կորցրածը վերագտնելու հավատով: Ծնվում էր և ապրելու տենչը, ամեն ինչ հաղթահարելու ուժը՝ գերբնական ու աստվածատուր:

Հետաքրքրական է Ստեփանոս Օրբելյանի Ողբը Էջմիածնի մասին. Կաթողիկեն պատկերվում է իբրև Արքայուհի—**մայր թագուհի:** Նա «ավաղական ողբովք» պատմում է, որ «Էջ Միածինը» և հայոց երկիրը դարձել են «կոխան չորքոտանւոյն», իսկ ինքը՝ Մայր արքայուհին, մնացել է «միայն այրի» և կոչ է անում կավակներին.

Ո՞ւր էք, որդի՛քդ իմ սրբածին,
Եկայք առ մայրըս ձեր նախկին,
Որպէս օրէնն է կաւակին,
Տանել խնամ ծեր ծնողին
. . . . . .
Թողո՛ւմք կողբանքս ցաւագին,
Առնե՛մք աւարտ լալեաց բանին.
Յուսահատիլ չէ պարտ բնաւին:
. . . . . .
Նոր վարդարէ փառօքն հին
Եւս առուել քան զոր էին[4]:

ԺԷ—ԺԸ դարերի հայ ազատագրական պայքարի հիմքում Մայր Հայաստանն էր: Հավանաբար ազգային-ազատագրական պայքարի բովում մարմնավորվեց Մայր Հայաստանի պատկերը 1773 թվականին Մադրասում լույս ընծայված Մովսես Բաղրամյանի «Հորդորակ»-ում:

Իր գրքով Բաղրամյանը նպատակ ուներ սթափեցնել «երիտասարդացն և մանկանց Հայկազանց ի վեհերոտեալ և ի հեղգացեալ թմրութենէ քնոյ»՝ հայ ժողովրդի ազգային կապելով նրա ներքին ուժերի ու հնարավորությունների հետ:

Իր խոսքն ազդեցիկ դարձնելու համար Բաղրամյանը ոգեկոչում է հայոց սրբությունները՝ Հայկին, Արամին, Տրդատին, և Մայր Հայաստանի սրտառուչ խոսքով ասում իր ժողովրդին.

Ո՛հ թէ որպիսի էի մերթ բազմածնունդ
սերնդովք ծաւալեալ ի մէջ համասփիւռ
տանց.
Եւ այժմ քան զամենայն նեղեալ՝ և անձկացեալ անկեալ եմ ի մէջ անել տառապանաց.
Որ երբեմն էի ծիրանազգեաց Մայր՝ և Թագուհի չքնաղ քան զամենայն Հայոց ազգի.
Եւ այժմ քրձազգեաց լեալ՝ եղէ իբրև զայրի անմխիթար ի լլկելոյ այլասեռիցն ազգի ազգի...[5]:

Ողբ ու Մայր Հայաստան դարձել են մի էություն ու այդպես արձանացել ժողովրդի մտապատկերում: Պատահական չէր ողբն ու Հայաստանի փառքի ոգեկոչման շարքը մեր գրականության մեջ՝ Հարություն Շմավոնյանի «Ողբ Հայաստանյայց», Հովհան Վանանդեցու «Արփիական Հայաստան», Ալիշանի, Գամառ Քաթիպայի, Պեշիկթաշլյանի հայրենաշունչ բանաստեղծություններն ու Խ. Աբովյանի «Վէրք Հայաստանի կամ Ողբ Հայրենասիրի» դարակազմիկ վեպը: Ազգաշեն ավանդներից Զմյուռնիայում ծնունդ առան հայերեն երկու օրաթերթերը՝ չափազանց բնորոշ ու խորհրդանշական անվանումներով՝ «Արշալույս արարատյան» (1840—1846) և «Հայրենասեր» (1843—1846), Թադիադյանի «Ազգասեր»-ը (1845—1848), «Ազգասեր արարատյան»-ը (1848—1852):

1840-ական թվականներին էլ Մայր Հայաստանի գաղափարը, այսպես ասած, առարկայացել, տեսանելի է դարձել և որպես բնաշխարհի հետ կապված պատկերացումների մարմնավորում ինչեղություն ստացել թե՛ գրականության և թե՛ հրապարակագրության մեջ, հանդիսությունների ժամանակ:

«Բազմավեպ»-ը 1844 թ. սեպտեմբերին հրատարակել է անստորագիր, բայց երիտասարդ Ղևոնդ Ալիշանին պատկանող «Ոգին Հայաստանեայց» խորագրով ծավալուն չափածոն, որ արտասանվել էր Թարգմանչաց

[3] **Ս. Երեմյան,** Ազգային դեմքեր, Գրագետ հայեր, Վենետիկ, 1914, էջ 217:

[4] **Ստեփաննոս Օրբէլեան,** Ողբ ի Ս. Կաթողիկէն, Թիֆլիս, 1885, էջ 40, 47, 48:

[5] **Մովսես Բաղրամյան,** Նոր տետրակ որ կոչի Հորդորակ, Մադրաս, 1773, էջ 10:

CONFIDENCE OF LIFE

նվիրված հանդիսության ժամանակ: Շնչավորվել, կենդանություն է ստացել Մայր Հայաստանի «ոգին վեհափառ»: Նրա ուրվագիծը նկարագրված է տեսանելի ու շոշափելի.

Նըստի լըռիկ Հայաստանեայց վեհ Ոգին.
Ձեռն ի ծնոտ, յեց արմըկամբն ի տապան,
Թաւալ ի գոգս իւր ունելով հին մատեան...

Նրա շուրջը՝ գավավան, դրոշներ՝ արծվանշան դրոշմով, կնիք[6]:

50-ական թվականներին հայոց ավերակները և Մայր Հայաստանի խորհրդանշական կերպարները հաճախ ու հաճախ են կենդանանում, խիստ ազդեցիկ ու գործոն դառնում մամուլում և առօրյա պատգամներում:

1857 թ. հունվարի 31-ին «Մեղու»-ի Ժ համարում լույս տեսավ «Հայաստան Մայր» այլաբանական պատկեր-ակնարկը: Պատմողհեղինակը դիտում է վերջալույսի շողերի տակ սփռված քաղաքամայր Անիի «լուռ և տխուր» ավերակները: Շուտով արևը թաքնվում է Ախուրյանի այն կողմում. տիրում է խավար: Մոտեցող շքախմբի առջևից ընթանում է «սևազգեստ, բարձրահասակ, գանգրահեր, աքանչելի կին մը»: «Այս կինն ո՞վ է» հարցումին հետևում է պատասխանը.

«—Ակնիվ վավակս, ես ձեր մայրն եմ, ես եմ ձեր ճշմարիտ մայրը, ես եմ որդյակ՝ **Հայաստան Մայր...»:** Նա իր վավակին ցույց է տալիս երբեմնի «երկրավոր դրախտի»՝ Անիի նվիրական ավերակները, պատմում, թե ինչպիսին էր Անին: Երանելի այն ժամանակներում ամենքն իրար հետ էին, միաբան ու միակամ:

Հեղինակն ընթերցողին է թողնում իրեն պաշարած խոհերի շուրջ մտորելը՝ հուսալով արտահայտած գաղափարների հետագա ծլարձակումը: Բնական է. Թուրքիայի պայմաններում նա ավելին ասել, առավել ևս ցույց տալ չէր կարող:

Արմենակ Հայկունու այս արձակ բանաստեղծությունը նշանավորում է այն սկիզբը, երբ Մայր Հայաստանի գաղափարը ստանում է որոշակի ազատասիրական իմաստ:

1862-ին Հ. Սըվաճյանը «1862 և սկիզբ վեցերորդ շրջանին Մեղու»-ի հոդվածում հզոր թափով և արդեն ուղղակիորեն հնչեցրեց Հայաստան Մոր ձայնը. «Մենք սթափեցանք մեր թմրութենէն և սկսանք որոնել մեր հայրենիքը», «Իրավ մեր հայրենյաց մեծ մասին տերը Օսմանյան կայսրությունն է եղած, բայց ան չէ տերը»:

Եվ Սըվաճյանը Մայր Հայաստանի գաղափարը կուգակցում է հայրենասիրություն և հայրենիք գաղափարների հետ. «հայրենիքը՝ հայրենի հողը «օտարին հանձնելը օտարին գերի ըլլալ է»: Այստեղից էլ նրա կոչը՝ ով ուզում է ապրել և «ապրեցնել իր որդիքը», պետք է «տեր ըլլա այն հողին, որ իր նախնիքը ստացեր են իրեն համար»:

«Հայրենասիրություն, հայե՛ր, հայրենասիրություն. հոգ տանինք մեր հայրենյաց, եթե կուզենք ապրիլ և մա՛րդ ապրիլ», ասում է Սըվաճյանը:

1860-ին Մայր Հայաստանի գաղափարը ավելի առարկայացավ: Փարիզում տպարան հաստատած Նիկոմիդիացի Ճանիկ Արամյանը (1820—1879) այդ թվականին հրատարակեց իր կազմած չափազանց ինքնատիպ «Դասարան Հայկազեան մանկանց» դասագիրքը: Ծավալով ոչ մեծ, բայց ճոխ կերպով ու առատորեն պատկերազարդված և հիանալի տպագրված այդ դասագրքում Արամյանը կետեղել է նաև երկու նկար, որոնք ուղղակի առնչություն ունեն Մայր Հայաստանի գաղափարի հետ: Դրանցից մեկը՝ «Արդեան վիճակ Հայաստանի» (էջ 94), պատկերում է հայոց ավերակները, տխրաթախիծ, բայց «լուսափայլ աչօք» մի հայուհի, որ հոգնաբեկ ու անհույս նստած է ավերակների վրա և մտամփոփ խորհում է:

Մյուս նկարը, որ արդեն գրավում է ամբողջ էջը, «Ոգի Հայաստանեայց» մակագրությունն է կրում (էջ 96). հերարձակ, ոտաբոբիկ, տխրադեմ հայուհին ընթանում է անապատացած երկրով՝ ավերակված ու անշընչացած Հայաստանով: Իբրև լրացում այդ երկու պատկերների, Արամյանը նրանց միջև տեղավորել է պատմական Հայաստանի քարտեզը՝ դարձյալ ամբողջ էջով:

Ճ. Արամյանը Մայր Հայաստանի գաղափարը առարկայացնելով, այն ամբողջ ազգի համար տեսանելի և ընկալելի դարձրեց:

Շատ չանցած՝ 1861-ին Արամյանը վերակերտեց Մայր Հայաստանի պատկերը՝ իր մտահղացման հենքի վրա՝ միահյուսվելով հիշատակված երկու նկարները: Նա մեծ ծավալով, արդեն առանձին և տպագրական լավագույն մակարդակով Փարիզում տպագրեց Մայր Հայաստան պատկեր-պլակատը, որ մինչև օրս էլ գտնվում է շրջանառության մեջ: Դա հանրածանոթ այն նկարն է, որ ժողովուրդն անվանում է «Անիի ավերակներ» կամ «Մայր Հայաստան»:

«Ավերակաց վրա նստողն է գեղեցիկն Արմենիա կամ Ոգի Հայաստանյայց,—բացատրում է Արամյանը:— Եվ անոր ձախակողմի հեռին տեսնված լեռներն են Մասիս և Այրարատ: Մայաց ստորոտին երևցած ջուրն է Երասխ գետը...»[7]: Ապա նշվում են

[6] «Բազմավէպ», 1844, № 17, էջ 271—272:

[7] «Արշալույս արարատյան», 23 սեպտեմբերի 1861, № 658:

պատկերի մյուս մանրամասները, կրոնական խորհրդանիշերը, հիշատակված քաղաքները՝ Վաղարշապատ, Սիս, Տիգրանակերտ, Մուշ, Կարին, Վան, Անի, Դվին, Արմավիր, Նախիջևան, Արտաշատ, Կարս՝ դրոշմված ավերակների բեկորների վրա: Նկարում մեծ տեղ են գրավում հայոց աստվածուհի Անահիտը, Վահագնի մեհյանը, Բելի վրահը, Տիգրանի ու Տրդատի թագերը, Արշակունիների գետնատարած, արծվանիշ դրոշակը: «Կանգուն սյան մոտիկ,—շարունակում է Արամյանն իր բացատրությունը,—ավերակաց մեջեն դուրս ելած լուսասփյուռ ձեռքը նշան է Սահմանադրության և հայրենասիրության»: Խորհրդանշական իմաստ են արտահայտում պատերազմի դաշտը և պատկերված վենքերը, որոնք «վավեր օրինակներե նկարված» են:

Արամյանը ձգտել է իր նկար-պլակատում խտացնել հայոց ամբողջ պատմությունը՝ հեթանոսական ժամանակներից մինչև իր օրերը, երբ առաջին վավերացմամբ կյանքի էր կոչվել արևմտահայության Ազգային Սահմանադրությունը՝ երկարատև պայքարից ու բախումներից հետո, Սահմանադրություն, որ դիտվում էր իբրև ազգային վերածնության ազդանշան:

Պատկերի գեղարվեստական արժեքը մեծ չէ թերևս: Բայց Արամյանը կարողացել է Մայր Հայաստանի գաղափարն առարկայացնել ու տեսանելի դարձնել նրանով շնչող ժողովրդի համար: Պատկերը բորբոքում էր հայրենասիրության բոցը, որ անշեջ է մնացել ու սրտեր ջերմացրել տասնյակ ու տասնյակ տարիներ, նաև հայահավաքի, հայրենիքի վերաշինման, հայոց նախնի փառքը վերականգնելու կոչ արել:

Բայց «Ոգի Հայաստանի»-ն նաև մեղադրանք է, անողոքությամբ դրոշմված դատակնիք նրանց ճակատին, ովքեր դարեր շարունակ ասպատակել են Հայաստան երկիրը, ավերել նրա շեն քաղաքները, ամայության մատնել հայոց դրախտավայրը:

Զարմանալիորեն պարզ ու եզակիորեն խորհրդանշող «Ոգի Հայաստանի»-ն իր ժամանակին արտակարգ տարածվեց: Նկարը տպագրվել էր երկու չափի՝ փոքր և բավական մեծ՝ չինական առաջնակարգ թղթի վրա: Փարիզից բացի նկարը վաճառվում էր Կ. Պոլսում, Զմյուռնիայում և այլուր: Հաջորդ տարում՝ 1862-ին, ավելի լայնորեն տարածելու համար, Արամյանը «Ոգի Հայաստանի» պատկերը տպագրեց «ամեն վիճակի ազգայնոց քսակին դյուրամատույց» գնով՝ էժանագին:

Դեռ առաջին ազդարարության ժամանակ «Փարիզ» թերթը «գեղեցիկ և խորհրդավոր պատկերի» մասին նշել էր, որ «անշուշտ ամեն հայ, որ հայրենասիրություն ունի, պիտի բաղձա ստանալ այս խորհրդավոր պատկերն և յուր սենյակին ընտիր զարդարանք մը ընել»[8]: Նույն համոզմունքն է հայտնել «Մեղու»-ն. «Այս գեղեցիկ պատկերը,—գրել է նա,—որ ամեն հայրենասեր հայերու քաղցը տխրություն մը կպատճառե... պետք է գտնվի ամեն սրահներու մեջ՝ օտար ազգաց փառավոր հիշատակները ներկայացնող պատկերներու քով»[9]:

Կան հաստատուն տեղեկություններ այն մասին, որ պատկերը եղել է հասարակական սրահների զարդը, արագորեն հասել է Մոսկվա, մինչև անգամ Ալեքսանդրապոլ և, իհարկե, շատ ու շատ հայաբնակ կենտրոններ:

Զմյուռնիայում, «Վասպուրական» թատրոնի բեմադրությունների ժամանակ, ազգային-հայրենասիրական բուռն ոգևորության պահին, 1863 թ., ինչպես հաղորդում է «Արշալույս արարատյանը», բեմահարթակի՝ տեսարանին ճիշտ դեմն եղած օթյակեն «Հայաստան ի վերա Ավերակացն» պատկերը կախված էր»[10]:

Պատկերի իրական մուտքը հայ թատրոն տեղի պիտի ունենա գրեթե մի տասնամյակ հետո, 1871 թ., երբ կբեմադրվի Պ. Դուրյանի «Սև հողեր» պիեսի վերջաբանը և բեմում կհայտնվի Հայաստանի այլաբանական կերպարը՝ շղթայակապ և փշե պսակը գլխին, նստած ավերակների վրա, իբրև Հայաստանի վիճակի խորհրդանշական ցուցադրում[11]:

1865 թ. Ալեքսանդրապոլի թատրոնում, առաջին հայերեն բեմադրությունից սկսած, վարագույրի վրա յուղաներկով ու մարդաչափ մեծությամբ նկարված էր «Ոգի Հայաստանի»-ն... թագը, սուրը, վահանը, նիկակը, վենքերը», գրված էին հայոց պատմական քաղաքների անունները[12]:

1865-ին Մայր Հայաստանը խորհրդանշող պատկերն արդեն տարածում էր գտել նաև Մոսկվայում:

Բավական իշխող և ամենուր նկատվող երևույթ էր դա, որ կարելի է բացատրել հայրենասիրության բուռն պոռթկումով և ապատասիրական գաղափարների վերելքով՝ մանավանդ Զեյթունի 1862 թ. հերոսական կռիվներից հետո. առաջադիմական գաղա-

[8] «Փարիզ», 16 օգոստոսի 1861, № 52:

[9] «Մեղու», 20 նոյեմբերի 1861, № 146:

[10] «Արշալույս արարատյան», 29 հունիսի 1863, № 704:

[11] Վ. Թերզիբաշյան, Պետրոս Դուրյան, Երևան, 1959, էջ 18:

[12] «Ախուրյան», 1 մարտի 1908, № 16, «Հայկական աշխարհի կոռնկ», 1865, № 6, էջ 182—184:

փարախոսության և ազգային-ազատագրական երազանքի կիզակետում Մայր Հայաստանի գաղափարն էր:

«Հայաստանի ավերակներու համար» գործելու կոչ անելիս Ստեփան Ոսկանյանը համոզված էր, որ հայության փրկության միակ ու կայուն խարիսխը բուն Հայաստանն է, որ հայ ժողովուրդը պետք է ամփոփվի «մեկ հողի վրա ու մեկ երկնքի ներքև»:

«Հայ անուն, հայ սիրտ ունեցողը մեր եղբայրն է: Հայաստանը, իր հայրենիքը սիրողը մեր բարեկամն է, մեր դաշնակիցն է... Հայաստանը պիտի ըլլա մեր միության կեդրոնը, Հայաստանը պիտի ըլլա մեր բոլոր ուխտերուն նպատակը, մեր միակ փրկությունը հոն պիտի ըլլա»[13]:

Ոսկանյանը Մայր Հայաստանի շուրթերով աշխարհասփյուռ հայությանն ասում է.

«—Զավակներս, ահա ձեր մոր վիճակը: Նայեցեք ի՛նչ աստիճան հասեր եմ և ի՛նչ սև օրերու մեջ կապրիմ. խոսելու ժամանակը անցավ, վերքերը վիս կկրծեն և թշվառությունը վիս կ՚ոյուծե... ո՛ր կողմը դառնամ ավեր, ո՛ւր նստիմ փոշի, ո՛ւր մտնեմ մշուշ: Ես հողես չեմ կրնար վատվիլ և կողակցիս փոշվո վրա կհսկեմ լավ սեպելով իրեն քով մեռնիլ քան թե իրմե հեռու ապրիլ»:

Այդպես Մայր Հայաստանը դառնում է գործող ու գործի մղող, հայահավաքի ու հայրենիքում մեկտեղվելու կոչ անող:

Մայր կամ Ոգի Հայաստանի գաղափարը գործնական դերի մեջ դնելու հաջող փորձ է արել 1862 թ. Զմյուռնիայում հրատարակվող «Գարուն Հայաստանի» հանդեսի հմուտ խմբագիր Գրիգոր Պարտիկյանանը: Թերևս հենց նա է մեկ հետաքրքրող հոդվածի հեղինակը՝ «Ոգին Հայաստանյայց առ համորեն Հայկազունս», որ լույս է տեսել անստորագիր, իբրև խմբագրական՝ հանդեսի երեք համարներում և հավանաբար պետք է շարունակվեր, եթե պարբերականը չդադարեցվեր[14]:

Դիմելով «սիրելի Արամյանք»-ին, Մայր Հայաստանն անենայն սթափությամբ ասում է. «Ես Հայաստանյայց Ոգին, երբեք Հայաստանի սահմաններեն բաժնվելու վատությունը պիտի չունենամ: Որովհետև Հայաստանը, հետևաբար անորմե սերյալ հայ ազգը ինձի սիրելի է և հավիտյան սիրելի պիտի մնա, թեպետ թշվառ վիճակի մեջ կգտնվի այժմ»:

Հեղինակը նպատակ ունի հին սերնդի օրինակով բորբոքել հայրենասիրություն և ազգասիրություն, ընդհանուր միաբանության և առաջադիմության կոչ անել:

Ահա այդպես 1860-ական թվականներից Մայր Հայաստանի գաղափարը միաձուլվել է «Ոգի Հայաստանի» պատկերի հետ և լայնորեն ներթափանցել ազատասիրական գաղափարախոսության մեջ:

Հայ ժողովրդի պատմության խաչուղիներում ներկա է Մայր Հայաստանի գաղափարը, Հայաստանի Ոգին: Ապրել է բուն իսկ ժողովրդի ճակատագիրը, ստացել նորանոր հնչումներ, մարմին առել ամեն նոր սերնդի հետ:

Գաղափարը բազմերանգ ընկալումներով մտքից միտք, ձեռքից ձեռք է անցել, դրվել ամեն ձևի մեջ, որ կարող էր անցնել հնարագետ վարպետի մտքով. վերակերտվել է կտավի ու գորգի վրա, ձեռագործներում, դարձել է վկնոցի զարդանախշ, դաջվել փայտի վրա, պատկերվել բնակարանի պատերին, տարածվել որպես հուշադրոշմանիշ, տպագրվել հապար ու մի հրատարակություններում, նրանց կազմերին, նույնիսկ երգվել, ցուցադրվել:

Այդպես Մայր Հայաստանը դառնալով պատկեր՝ «Ոգի Հայաստանի», ուղղակիորեն նպաստում էր ազգային ինքնագիտակցությանն ու կարթոնքին, շոշափելի դարձնում ազգապահպանության ու հայահավաքի, ազգային վերածնդի ու ազատագրության գաղափարը, տոգորում էր բուռն հայրենասիրությամբ:

1881-ի սկզբներին սուլթանական Բարձրագույն Դուռը հատուկ ցուցում տվեց գավառապետերին՝ «արմատախիլ անել ազգային գրգռման արմատները» և մասնավորապես շեշտեց Վարդան վորավարի և «Հայաստանի ավերակների վրա» սգացող կնոջ պատկերը բռնագրավելու և ոչնչացնելու անհրաժեշտությունը[15]:

Այդ թվականներից սկսած Թուրքիայի ամբողջ տարածքում, առավել ևս 90-ական թվականներին և Մեծ եղեռնի սև տարիներին Մայր Հայաստանի գաղափարի ամեն մի դրսևորում հետապնդվել և հալածվել է, բայց, ինչպես դա լինում է սովորաբար, հալածանքներն ավելի կենսունակություն են հաղորդել Մայր Հայաստանի գաղափարին:

Պատկերն ու նրա գաղափարը հավատի ու կենսունակության աղբյուր դարձան, ամեն

---

[13] Ս. Ոսկանյանի պարբերականներից մեջբերված քաղվածքներն ու տեղեկությունները տես «Արևմուտք», 1859, № 7, էջ 55, № 17, էջ 132, № 20, էջ 155—156, № 23, էջ 177, № 24, էջ 196: «Արևելք», 1885, № 4, էջ 118, № 11, էջ 332, 1856, № 14, էջ 438:

[14] «Գարուն Հայաստանի», 1862, № 13, էջ 97—99, № 15, էջ 113—115, № 17, էջ 129—133:

[15] Ռ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 342:

մի նոր սերունդ մայրական կաթի հետ սընվեց նաև Մայր Հայաստանի գաղափարով, որն արձագանքվեց Պատկանյանի ու Ռաֆֆու, Հովհաննիսյանի ու Իսահակյանի, Տերյանի ու Թումանյանի, Չարենցի ու Սևակի ստեղծագործությունների մեջ՝ «Դեպի Հայաստան» և «Հանուն Հայաստանի»: Դարավոր մշուշից հառնած և հոգևոր Հայաստանով շնչավորված գաղափարը հանգրվան գտավ Նաիրյան երկրի երապային մտապատկերում և մարմին առավ իրական երկրով՝ Սովետական Հայաստանով, որ փոխարինեց, Վահան Տերյանի բնորոշմամբ՝ «մեր կիսամեռ հոգեվոր հայրենիքին, մեր ավերվող ու անդարձ անհետացող հոգևոր Հայաստանին»[16]:

[16] Վ. Տերյան, Եժ, հ. 2, Երևան, 1961, էջ 319:



ՈՒՂՂՈՒՄ

«Էջմիածին» ամսագրի 1985 թ. Բ—Գ միացյալ համարի էջ 54-ում թյուրիմացաբար այլ նկար (Ս. Խորվիրապ) է տպվել:

ԽՄԲ.

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АПРЕЛЬ 1985 г.)

1. Пасхальная проповедь Католикоса всех армян Вазгена I, произнесенная в Кафедральном соборе св. Эчмиадзина, 7 апреля 1985 г. (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями между Католикосом всех армян Вазгеном I и духовными главами сестёр-церквей по случаю чудесного праздника Воскресения Христова (стр. 6—8).

3. Поздравительное послание Католикоса всех армян Вазгена I трем иерархическим престолам Армянской Церкви, всем епархиальным предстоятелям и церковным общинам, по случаю чудесного праздника Воскресения Христова (стр. 9).

4. Энциклика Католикоса всех армян Вазгена I памяти жертвам геноцида армян, 24 апреля 1985 г. № 1343 (стр. 10—12).

5. Послание Католикоса всех армян Вазгена I Всемирному Совету Церквей и сестрам-церквам по случаю 70-летия геноцида армян, 18 января 1985 г. (стр. 13—14).

6. Ответ главы Римско-Католической Церкви Его Святейшества Папы Иоанн—Павла II Католикосу всех армян Вазгену I по случаю 70-летия геноцида армян, 16 марта 1985 г. (стр. 15—16).

7. Ответ Патриарха Московского и всея Руси Пимена Католикосу всех армян Вазгену I по случаю 70-летия геноцида армян, 10 апреля 1985 г. (стр. 17—18).

8. Ответ архиепископа Афины и всей Эллады Серафима Католикосу всех армян Вазгену I по случаю 70-летия геноцида армян (стр. 19).

9. Ответ архиепископа Кентрберийского и всей Англии Его Высокопреосвященства Роберта Рэнси Католикосу всех армян Вазгену I по поводу 70-летия геноцида армян, 22 февраля 1985 г. (стр. 20).

10. Ответ Патриарха Антиохии и всего Востока Антуана Пьер Хорейша Католикосу всех армян Вазгену I по случаю 70-летия геноцида армян, 2 марта 1985 г. (стр. 21—22).

11. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата о посланиях и энцикликах Католикоса всех армян Вазгена I, направленные: Его Превосходительству королю Гусейну II (Иордания), высокочтимому председателю Хафез Асаду (Сирия), высокочтимому председателю Амин Джемайелю (Ливан), высокочтимому председателю Саттам Гусейну (Ирак) об оказанном гуманном отношении к армянскому народу в дни геноцида (стр. 23—24).

12. **Редакционная**—Назло темным силам (по поводу 70-летия геноцида армян)—(стр. 25—26).

13. **Диакон Акоп Мартиросян**—Упоминание 70-летии великого геноцида в первопрестольном Эчмиадзине, 25 апреля 1985 г. (стр. 27-35).

14. **Ованес Шираз**—Отрывок из поэмы «Айоц Дантеакан» (по мотивам книги Данте Олигерьии «Ад»)—(стр. 36—37).

15. **В. Давтян**—Отрывок из поэмы «Реквием» (стр. 38—39).

16. **Эдуардас Межелайтис**—Отрывок из стихотворения «Камень» из серии «Напротив Арарата» (стр. 41).

17. **Бабкен Симонян**—Перед развалинами Ани (стихотворение)—(стр. 42).

18. **А. Кркяшарян**—Непобедимой волей и решимостью существовать (статья)—(стр. 43—48).

19. Энциклика Католикоса всех армян Вазгена I о присуждении титула «архиепископ» епископу Гнелу Джереджяну, 29 января 1985 г. (стр. 49—50).

20. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I художнику Гранту Авакяну из Румынии по случаю 85-летия со дня рождения, 26 марта 1985 г. (стр. 51).

21. Посещение г. Парижа Католикосом всех армян Вазгеном I с 22 февраля до 9 марта (стр. 52—53).

22. Представители Библейского Товарищества в первопрестольном Эчмиадзине с 25 марта до 2 апреля (стр. 54).

23. **Диакон Акоп Мартиросян**—Страстная Неделя и торжество Воскресения Христова в первопрестольном Эчмиадзине, 4—7 апреля 1985 г. (стр. 55—58).

24. **Диакон Акоп Мартиросян** — Архимандритская хиротонизация, 1—3 апреля 1985 г. (стр. 59—62).

25. Церковная хроника в первопрестольном Эчмиадзине за апрель месяц (стр. 63—66).

26. **Диакон Айк Чулджян** — Проповедничество (стр. 67—68).

27. Кончина митрополита Зиновия Мажугая (стр. 69—70).

28. **М. Акопян** — Понятие Мать-Армения в сферах армянской освободительной мысли (исследование)—(стр. 71—76).

"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(APRIL 1985)

1. The sermon of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the cathedral of Holy Etchmiadzin, during the feast of Easter, 7th April 1985 (pages 3—5).

2. The cables and letters of greeting exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the Sister Churches, on the occasion of the feast of Holy Resurrection (pages 6—8).

3. The congratulatory letters of His Holiness to the three hierarchical Sees of the Armenian Church, all the diocesan primates and church communities, on the occasion of the feast of Holy Resurrection (page 9).

4. The encyclical of His Holiness about the evocation of the 70th anniversary of 1915 genocide, 24th April 1985, No 1343 (pages 10—12).

5. The letter of His Holiness to the World Council of Churches and the sister churches, on the occasion of the 70th anniversary of the evocation of 1915 genocide, 18th January 1985 (pages 13—14).

6. The answer of His Holiness John-Paul II, the chief of the Roman Catholic Church, to His Holiness Vasken I, 16th March 1985 (pages 15—16).

7. The answer of His Holiness Pimen, the Patriarch of Moscow and of All Russia, to His Holiness Vasken I, 10th April 1985 (pages 17—18).

8. The answer of His Beatitude Seraphim, the Archbishop of Athens and Primate of All Greece, to His Holiness Vasken I (page 19).

9. The answer of His Grace Robert Runcie, the Archbishop and Metropolitan of Canterbury and Primate of England, to His Holiness Vasken I, 22nd February 1985 (page 20).

10. The answer of His Beatitude Antoine Pierre Khoraiche, the Maronite Patriarch of Antioch and of All the East, to His Holiness Vasken I, 2nd March (pages 21—22).

11. The communiqué of the Holy See's Chancellory, about the messages of His Holiness Vasken I, dated 20th February 1985, sent to His Majesty Hussein II, the King of Jordan, His Excellency Hafez Assad, the President of Syrian Arab Republic, His Excellency Amin Gemael, the President of the Republic of Lebanon, and His Excellency Saddam Hussein, the President of the Republic of Iraq, for the humanitarian regard shown by these countries to the Armenian people during the period of 1915 genocide (pages 23—24).

12. **Editorial**—In spite of the forces of evil (on the occasion of the 70th anniversary of April genocide)—(pages 25—26).

13. **Deacon Hagop Mardirossian**—The commemoration of the Great Genocide's 70th anniversary in the Holy See, 25th April 1985 (pages 27—35).

14 An extract from the poem of Hovhannes Shiraz (pages 36—37).

15. **V, Davtian**—An extract from the poem of „Requiem" (pages 38—40).

16. **Edwardas Mejelaydis**—An extract from the poetry „The Stone" (from the series of „In front of Ararat")—(page 41).

17. **Babgen Simonian**—„In front of Ani's ruins" (poetry)—(page 42).

18. **A. Kerkyasharian** —„With an invincible will and permanent existence" (article)—(pages 43—48).

19. The encyclical of His Holiness Vasken I about the granting of Archbishop's title to the Rt. Reverend Bishop Gnel Djeredjian, 29th January 1985 (pages 49—50).

20. The congratulatory cable of His Holiness to the Armenian painter of Roumania Hrand Avakian, on the occasion of the 85th anniversary of his birth, 26th March 1985 (page 51).

21. The visit of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, to Paris, from 22nd February until 9th March 1985 (pages 52—59).

22. The representatives of the Bible Society in the Holy See, from 25th March until 2nd April 1985 (page 54).

23. **Deacon Hagop Martirossian**—The Holy Week and the feast of the Holy Resurrection of the Saviour in the Mother See, 4—7th April 1985 (pages 55—58).

24. **Deacon Hagop Mardirossian**—The delivery of the special doctoral degree, 1—3rd April 1985 (pages 59—62).

25. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Hoty See during the month of April (pages 63—66).

26. **Deacon Haïg Chooldjian**—Essay of preaching (pages 67—68).

27. Necrology of the Metropolitan Zinovy of Majooga (pages 69—70).

28. **M. Hagopian**—The evolution of the idea of Mother Armenia during the long struggles for the freedom of the fatherland (study)—(pages 71—76).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AVRIL 1985)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 7 avril 1985 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la sainte fête de pâques (pages 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitation entre Sa Sainteté et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion de la fête de la sainte Résurrection de notre Seigneur Jésus-Christ (pages 6—8).

3. Lettres de félicitation de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion de la fête pascale (page 9)

4. Encyclique No. 1343 de Sa Sainteté publiée le 24 avril 1985 pour commémorer le 70e anniversaire du génocide de 1915 (pages 10—12).

5. Lettre du 18 janvier 1985 de Sa Sainteté adressée au Conseil Oecuménique des Eglises et aux chefs des Eglises soeurs à l'occasion de la commémoration du 70e anniversaire du génocide de 1915 (pages 13—14).

6. Lettre-réponse du 16 mars 1985 de Sa Sainteté le Pape Jean-Paul II, chef de l'Eglise catholique romaine, adressée à Sa Sainteté Vasken Ier (pages 15—16).

7. Lettre-réponse du 10 avril 1985 de Sa Sainteté le Patriarche Pimen, chef de l'Eglise orthodoxe russe, adressée à Sa Sainteté Vasken Ier (pages 17—18).

8. Lettre-réponse de Sa Béatitude Séraphim, Archevêque d'Athènes et Primat de toute la Grèce, adressée à Sa Sainteté Vasken Ier (page 19).

9. Lettre-réponse du 22 février 1985 de Sa Grâce Robert Runcie, Archevêque de Canterbury et Primat d'Angleterre, adressée à Sa Sainteté Vasken Ier (page 20).

10. Lettre-réponse du 2 mars 1985 de Sa Béatitude Antoine Pierre Khoraiche, Patriarche des Maronites d'Antioche et de tout l'Orient, adressée à Sa Sainteté Vasken Ier (pages 21—22).

11. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant les messages du 20 février 1985 de Sa Sainteté Vasken Ier adressés à Sa Majesté le roi Hussein II (Jordanie), à Son Excellence Hafez Assad, président de la République Arabe Syrienne, à Son Excellence Amin Gémael, président de la République Libanaise, à Son Excellence Saddam Hussein, président de la République d'Irak, pour l'attitude humanitaire que ces pays ont manifestée à l'égard du peuple arménien lors du génocide de 1915 (pages 23—24).

12. **Editorial:** „En dépit des forces du mal" (à l'occasion du 70e anniversaire du génocide de 1915 (pages 25—26).

13 **Diacre Hakob Martirossian**—Commémoration du 70e anniversaire du génocide de 1915 au Saint-Siège d'Etchmiadzine (25 avril 1985)—(pages 27—35).

14. **Hovhannès Chiraz**—„Poème dantesque" (extrait)—(pages 36—37).

15. **V. Davtian**—„Requiem" (extrait du poème) — (pages 38—40).

16. **Edouardas Mégélaïdis**—Extrait du poème „La pierre" (du cycle intitulé „En face de l'Ararat")—(page 41).

17. **Babken Simonian**—„Devant les ruines d'Ani" (poème)—(page 42).

18. **A. Kerkiacharian**—„Avec une volonté invincible et une fermeté d'exister" (article)—pages 43—48).

19 Par son Encyclique du 29 janvier 1985 Sa Sainteté Vasken Ier a conféré le titre d'archevêque à Mgr. Gnel Djérédjian (pages 49—50).

20. Télégramme de félicitation de Sa Sainteté adressé le 26 mars 1985 à M. Hrant Avakian, peintre arménien de Roumanie, à l'occasion du 80e anniversaire de sa naissance (page 51).

21 Séjour de Sa Sainteté Vasken Ier à Paris du 22 février au 9 mars 1985 (pages 52—53).

22. Visite des représentants de la Société Biblique Universelle au Saint-Siège d'Etchmiadzine du 25 mars au 2 avril 1985 (page 54).

23. **Diacre Hakob Martirossian**—La semaine sainte et la célébration de la fête de la Résurrection au Saint-Siège d'Etchmiadzine du 4 au 7 avril 1985)— pages 55—58).

24. **Diacre Hakob Martirossian**—Collation du degré de docteur particulier en théologie (1—3 avril 1985)—(pages 59—62).

25. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois d'avril 1985 (pages 63—66).

26. **Diacre Haïk Tchouldjian**—Essai de sermon (pages 67—68).

27. Nécrologie de Mgr. Zinovy, métropolite de Majouga (pages 69—70).

28. **M. Hakobian**—L'évolution de l'idée de la „Mère-Arménie" au cours de longues luttes pour la libération de la patrie (étude)—(pages 71—76).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետի լատինական քարոզը արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 9

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ սրբատառ կոնդակը Ապիրլյան եղեռնի նահատակների հիշատակը ոգեկոչելու մասին 10

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գիրը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին և քույր Եկեղեցիներին՝ Մեծ եղեռնի 70-ամյակի ոգեկոչման առթիվ . . 13

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ի նամակը 15

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի նամակը 17

Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն Սերաֆիմի նամակը 19

Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Ռոբերտ Ռընսիի նամակը 20

Անտիոքի և համայն Արևելքի մարոնիտների Պատրիարք Նորին Ամենապատվություն Անտուան Պիեռ Խորեյշի նամակը 21

Հաղորդագրություն 23

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ի հեճուկս խավարի ուժերի 25

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Մեծ եղեռնի 70-ամյակի հիշատակումը Մայր Աթոռում 27

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ—Հայոց դանթեական (հատվածներ) 36

Վ. ԴԱՎԹՅԱՆ—Ռեքվիեմ (հատված) 38

ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ—Քարը (հատված) 41

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ—Անիի ավերակների առջև 42

Ա. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ—Անպարտելի կամքով և գոյատևելու վճռականությամբ . . . 43

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Գերաշնորհ Տ. Գնել եպիսկոպոս Ճերեճյանին արքության պատիվ շնորհելու մասին 49

Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը ռումինահայ նկարիչ Հրանդ Ավագյանին՝ ծննդյան ութսունհինգամյակի առթիվ 51

Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Փարիզ 52

Աստվածաշնչական Ընկերության ներկայացուցիչները Մայր Աթոռում . . . 54

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Ավագ շաբաթը և Փրկչի հրաշափառ Հարության տոնակատարությունը Մայր Աթոռում 55

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Մասնավոր վարդապետական աստիճանի տրվելիություն 59

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 63

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉՈՒԼՋՅԱՆ—Քարով 67

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ—Հանգիստ Տ. Զինովի միտրոպոլիտ Մաժուգայի 69

Մ. ՀԱԿՈԲՅԱՆ—Մայր Հայաստանի գաղափարը հայ ապատասիրական մտքի ոլորտներում 71

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 77

«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin 78

«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 79

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 8.05.1985 թ.: Ստորագրված է տպագրության 22.05.1985 թ.:
Տպագրական 5 մամուլ+8 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 378

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1985 թ.